

Ժամանակակից ԵՎՐԱՍԻԱ



II(1)
2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱՐԵՍՈՎ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՉ ԵՎՐԱՍԻԱ

ՍԵՐՉԱԿՈՐ ԱՐԵՎԵԼԸ.
ԶԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՒՆԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ

ՈՌԻԵՆ ԱԱՖՐԱՍՏՅԱՆԻ ԽՍԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՀԱՏՈՐ II (1)

ԵՐԵՎԱՆ - 2013

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

CONTEMPORARY EURASIA

MIDDLE EAST:
POLITICAL TRANSFORMATIONS

EDITED BY RUBEN SAFRASTYAN

VOLUME II(1)

YEREVAN — 2013

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

СОВРЕМЕННАЯ ЕВРАЗИЯ

БЛИЖНИЙ ВОСТОК:
ПОЛИТИЧЕСКИЕ ТРАНСФОРМАЦИИ

ПОД РЕДАКЦИЕЙ РУБЕНА САФРАСТЯНА

ТОМ II(1)

ЕРЕВАН — 2013

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱՄ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ

Ռուբեն Սաֆրաստյան, պ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱՄ թղթակից անդամ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Լիլիթ Հարությունյան, պ. գ. թ., դոցենտ
Գոհար Իսկանդարյան, պ. գ. թ., դոցենտ
Վահրամ Տեր-Մաթևոսյան, պ. գ. թ.
Լևոն Հովսեփյան, պ. գ. թ.

Նազելի Նավասարդյան, պ. գ. թ. (պատասխանատու քարտուղար)

«Ժամանակակից Եվրասիա» ժողովածուի հատոր II (1)-ն ընդգրկում է Մերձավոր Արևելքում ընթացող քաղաքական զարգացումների և վերաբերող վերլուծություններ: Հեղինակների ուշադրության կենտրոնում են տարածաշրջանային գործընթացների ազդեցությունը հետմոլդարաբայան եզիպտոսում, քրդական գործոնը թուրք-սիրիական լարվածության համատեքստում, մերձավորարևելյան ճգնաժամի նկատմամբ Չինաստանի դիրքորոշումը, հայ-իրանական հարաբերությունների զարգացման դինամիկան: Ներառված են նաև Թուրքիայի արտաքին քաղաքականության կազմակերպման, հետախուզության ոլորտի արդիականացման ու վերակազմակերպման հիմնական դիրքերին նվիրված հոդվածներ: Նախատեսված է հասարակագետների, դիվանագետների, ուսանողների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանների համար:

ISSN 1828-3948

PUBLISHED BASED ON THE DECISION OF THE SCIENTIFIC
COUNCIL OF THE INSTITUTE OF ORIENTAL STUDIES OF NAS RA

EDITOR IN CHIEF

Ruben Safrastyan, Prof., Dr., Corresponding Member of NAS RA

EDITORIAL BOARD:

Lilit Harutyunyan, Assoc. Prof., PhD
Gohar Iskandaryan, Assoc. Prof., PhD
Vahram Ter-Matevosyan, PhD
Levon Hovsepyan, PhD
Nazeli Navasardyan, PhD, Responsible for the Volume

The current issue of the “Contemporary Eurasia” includes analyses of the following political processes in the Middle East: implications of regional developments on the post-Mubarak Egypt, the role of Kurdish factor in the context of the Turkish-Syrian tensions, China’s perspective on the Middle Eastern crisis, the dynamics of Armenian-Iranian relations. The issue also contains articles related to the organizational features of Turkish foreign policy as well as modernization and reorganization problems of the Turkish intelligence service. The publication may be of interest for social scientists, experts and students.

ИЗДАЕТСЯ ПО РЕШЕНИЮ УЧЕНОГО СОВЕТА ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ГЛАВНЫЙ РЕДАКТОР

Рубен Сафрахян, д. и. н., профессор, член-корреспондент НАН РА

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Лилит Арутюнян, к. и. н., доцент

Гоар Искандарян, к. и. н., доцент

Ваграм Тер-Матевосян, к. и. н.,

Левон Овсепян, к. и. н.,

Назели Навасардян, к. и. н., ответственная за выпуск

Выпуск II (I) сборника "Современная Евразия" посвящен анализу политических событий на Ближнем Востоке. В центре внимания авторов статьи вопросы влияния региональных процессов на политическую ситуацию в Египте, курдский фактор в контексте турецко-сирийских отношений, позиция Китая по отношению к Ближневосточному кризису, динамика развития армяно-иранских отношений. Сборник включает также статьи, посвященные вопросам организации внешней политики Турции и проблеме модернизации и реорганизации турецкой разведки. Выпуск предназначен для политологов, дипломатов, студентов, а также для широкого круга читателей, интересующихся ближневосточным регионом.

ԲՈՎԱՆ ԴԱՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՒ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Մերձավոր Արևելքի արդիականացման խնդիրը.

«արաբական գարունը» և Եգիպտոսը 10

ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«Քրդական խաղաքարտը» թուրք-սիրիական

հարաբերություններում..... 29

ՎԱՀՐԱՄ ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Տարածաշրջանային գործընթացների ազդեցությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության կազմակերպման հարցում..... 37

ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպության արդիականացումն ու արտաքին հետախուզության

վերակազմակերպումն ԱԶԿ-ի կառավարման տարիներին..... 51

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Չինաստանի դիրքորոշումը «արաբական գարնան» նկատմամբ..... 64

ԳՈՀԱՐ ԻՍՎԱՆԴԱՐՅԱՆ

Հայ-իրանական հարաբերությունների զարգացման առանձնահատկությունները. «բարիդրացիականից»

«հատուկ հարաբերություններ» 105

CONTENTS

GOR GEVORGYAN The Problem of Middle East Modernization: The "Arab Spring" and Egypt.....	10
TATEVIK MANUKYAN The "Kurdish Card" in the Turkish–Syrian Relations.....	29
YANHRAM TER–MATEVOSYAN Impact of Regional Developments on the Organization of Turkish Foreign Policy.....	37
LEVON HOVSEPYAN Modernization of Turkey's National Intelligence Organization and Reorganization of Foreign Intelligence during the AKP Rule.....	51
AGHAVNI HARUTYUNYAN China's Position Toward "Arab Spring"	64
GOHAR ISKANDARYAN The Peculiarities of Development of Armenian–Iranian Relations: From "Good–Neighborly" to "Special Relations".....	105

СОДЕРЖАНИЕ

ГОР ГЕВОРГЯН Проблема модернизации Ближнего Востока: "Арабская весна" и Египет.....	10
ТАТЕВИК МАНУКЯН "Курдская карта" в турецко–сирийских отношениях	29
ВАГРАМ ТЕР–МАТЕВОСЯН Влияние региональных процессов на организацию внешней политики Турции	37
ЛЕВОН ОВСЕПЯН Модернизация Национальной разведывательной организации Турции и реорганизация внешней разведки в годы правления ПСР	51
АГВНИ АРУТЮНЯН Позиция Китая по отношению к «Арабской весне».....	64
ГОАР ИСКАНДАРЯН Особенности развития армяно–иранских отношений: от "добрососедских" до "особых".....	105

ԳՈՂ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԱՐԴԻԱԿԱՆՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ. «ԱՐԱՐԱԿԱՆ ԳԱՐՈՒՆԸ» ԵՎ ԵԳԻՊՏՈՍԸ

Արաբական աշխարհում տիրող քաղաքական անկայուն իրավիճակը և որոշ երկրներում առկա քառասային իրադրությունները, ինչպես նաև «հեղափոխական իշխանությունների» կողմից, այդ թվում և Եգիպտոսում նոր մոդելի բռնապետություն ստեղծելու փորձերը ստիպում են ևս մեկ անգամ հայացք բերել այն պատճառների և նախադրյալների վրա, որոնք հանգեցրին ժամանակակից զարգացումներին: Հողվածի նպատակն է ոչ միայն ներկայացնել Մերձավոր Արևելքի «արդիականացման» խնդիրն, այլև վերլուծել տվյալ հայեցակարգի խոցելի կողմերը, արդի զարգացումների տեսանկյունից կրկին քննարկել «արաբական գարուն» և ներքաղաքական զարգացումները Եգիպտոսում:

2011 թ. վերջին սկսված, այսպես կոչված, «արաբական գարունը» արաբական մի շարք երկրներում դարձավ գանգվածային հուժկու բողոքների և որակապես նոր հասարակական-քաղաքական իրավիճակի ձևավորման նախադրյալ, իսկ նրանցից մի քանիսում, այդ թվում և Եգիպտոսում այն հանդիսացավ ավանդական ավտորիտար վարչակարգերի անկման խթանի¹: Սկսված գործընթացի արդյունքում առաջացած, այսպես կոչված, «դոմինոյի էֆեկտը»² և արաբական մի շարք երկրներում ազգայ-

նական զաղափարների ճշնամամբ³ ստեղծեցին ազատ այլընտրանքային ընտրություն կատարելու բացառիկ հնարավորություն հօգուտ իսլամիստական շարժումների⁴:

Սոցիալական հարաբերական արդարության և քաղաքական ազատության օբյեկտիվորեն հասունացած հեղափոխական հենքի վրա սկսված «արաբական գարունը» և կամ «արաբական գարթոնքը» բազմաթիվ ուժերի համար, այդ թվում՝ արևմտյան, դարձավ աննախադեպ անակնկալ, մանավանդ երբ հասկանալի դարձավ, որ «արաբական փողոցի» զգալի հատվածը սկսված շարժման գլխավոր դերում արաբական լիբերալ-ժողովրդավարական հայացքներ ունեցող ուժերի փոխարեն նախընտրեց տեսնել իսլամիստներին⁵: Եվ չնայած այն հանգամանքին, որ մեծ հաշվով «արաբական գարթոնքը» ինքնարկու էր և իր վրա կրում էր արաբական փողոցի կնիքը⁶, այնուամենայնիվ հարկավոր է

Արաբական աշխարհում «դոմինոյի էֆեկտի» ազդեցության վերաբերյալ տես նաև Գ. Գևորգյան, Կասաբլանկոյի ժողովրդավարական մոդելի գործարկումը եգիպտոսում (2008–2010 թթ.), ժամանակակից Եվրասիա, հատոր 1(2), Եր., 2012, էջ 67–88:

¹ Առհասարակ արաբական ազգայնականության ճշնամամի մասին քննարկումները ավելի վաղ են սկսվել, իսկ «արաբական գարունը» այն հատկեցրեց: Տես Dawisha A., Requiem for Arab Nationalism, Middle East Quarterly, <http://www.meforum.org/518/requiem-for-arab-nationalism>

² Տեսական ժամանակ արաբական մի շարք երկրներում կրոնաքաղաքական ուժերը եղել են աշխարհիկ վարչակարգերի հիմնական գործոն ընդդիմախոսները, իսկ քաղաքական իսլամը՝ այլախոհության գաղափարական հիմնական արդյունքներից մեկը: Որոշ երկրներում նրանք գործել են ընդհատական և դաժանորեն հետապնդել իշխանությունների կողմից: Ամենին էլ պատահական չէ, որ «արաբական գարուն» համատեքստում իսլամիզմը կարողացավ լցնել գաղափարախոսական այն «տորիելյան դատարարությունը», որն արաբական երկրներում առաջացել էր բավական երկարատև ժամանակակից ազատամտության սոցիալական «երջանակության և արդարության» նոր հույսեր որոնելու ընթացքում: «Արաբական գարուն» անմիջական արդյունքներից կարելի է համարել Հյուսիսային Աֆրիկայի ու Մերձավոր և Միջին Արևելքի որոշ երկրներում հասարակական-քաղաքական զարգացումների վրա իսլամական գործոնի բացահայտ ազդեցությունը:

³ Հարկ է նշել, որ իսլամիստական շարժումներից շատերը և մասնավորապես եգիպտական «Առաույման եղբայրներ» կրոնաքաղաքական կազմակերպությունը հայտարարեցին, որ հրաժարվում են ծայրահեղ դրսևորումներից՝ հուշակելով իրենց, այսպես կոչված, «չափավոր իսլամիստներ»: Տես Возникло новое политическое понятие – умеренный исламизм. Все воспринимают его как меньшее из зол, 16.01.2012r., <http://www.centrasia.ru/newsA.php?i=1326658560>

Միևնույն ժամանակ դասական քաղաքական տեսության դպրոցների տեսանկյունից դժվար է որևէ ծայրահեղական շարժման թև իդարելն «չափավորականության հարթակում»: Ելնելով նշվածից՝ Եգիպտոսում ընթացող ներկա զարգացումներից կարելի է փաստել, որ «չափավոր իսլամիզմը» ընդամենը հետադարձություն է:

⁶ Зинин Ю.Н., «Арабская весна» в повестке дня экспертного сообщества России,

¹ «Արաբական գարուն» արդյունքում 2012 թ. դրությամբ տապալվել էին արաբական չորս երկրների իշխանությունները. Թունիսում՝ Զին էլ Աբդիլի Բին Ալին, Եգիպտոսում՝ Հուսնի Մուբարաքը, Լիբիայում՝ Մուամար Բադաֆին, Եմենում՝ Ալի Աբդալա Սալեի: Տես The Arab Spring's Cascading Effects, <http://www.psmag.com/politics/the-cascading-effects-of-the-arab-spring-28575/>, Вацильевич Д.Б., «Арабская весна» итоги и перспективы, Տես նաև http://perspektivy.info/oykumena/vostok/arabskaja_vesna_itogi_i_perspektivy_2012-04-19.htm

² Տես Eisenhower gives famous «domino theory» speech, Apr.7, 1954, <http://www.history.com/this-day-in-history/eisenhower-gives-famous-domino-theory-speech>, <http://www.martinfrost.ws/htmlfiles/april2009/domino-theory.html>

նշել, որ Մերձավոր Արևելքի և մասնավորապես արաբական աշխարհի, այսպես կոչված, «արդիականացման խնդիրը» տևական ժամանակ ըննարկման առարկա է եղել ԱՄՆ-ում, իսկ հետո նաև արևմտամեկուսական մի շարք երկրներում⁷:

Մերձավոր Արևելքի «վերակառուցման» կամ «արդիականացման» գաղափարը ԱՄՆ-ի կողմից առաջ քաշված քաղաքական նոր հայեցակարգ էր, որը հաճախ ներկայացվում է որպես Վաշինգտոնի կողմից նախաձեռնված իրաքյան արկածախնդրությունից⁸ պատվավոր դուրս գալու ճանապարհ⁹: ԱՄՆ-ի և նրա «դաշնակիցների» կողմից Իրաքում ծավալված ռազմական գործողությունները Վաշինգտոնի կողմից հաճախ դիտարկվում են, որպես մերձավորարևելյան տարածաշրջանի «վերակառուցման» առաջին համալիր փուլը¹⁰: Իրականացնելով նշված ծրագիրը՝ Սպիտակ տունը փորձում է «հանդարտեցնել» Մերձավոր Արևելքը՝ ձևավորելով տարածաշրջանում ամերիկամետ բարեկամական-ժողովրդավարական վարչակարգեր¹¹:

ԱՄՆ-ի կողմից Մերձավոր Արևելքի «ժողովրդավարացումը»

<http://ehd.mgimo.ru/1ORManagerMgimo/file?id=CA29F12F-D299-0793-09BA-2DFA63B78EB7>

⁷ Shireen T. Hunter, *Modernization and Democratization in the Muslim World*, <http://www.gees.org/documents/Documen-089.pdf>

⁸ Խոսքը վերաբերում է 2003 թ. մարտին ԱՄՆ-ի կողմից ձեռնարկված «Վախ և մեցուն» հակաիրաքյան ռազմական գործողություններին, որոնք միտված էին Սադամ Հուսեյնի վարչակազմի ստպամանը և ժողովրդավարության ներդրմանը: Տես *US Attack on Iraq in 2003: Violation of International Humanitarian Law*, <http://www.internationalpeaceandconflict.org/profiles/blogs/us-attack-on-iraq-in-2003>: Իրաքում ժողովրդավարացմանն ուղղված Արևմուտքի և մասնավորապես ԱՄՆ-ի նախաձեռնած տարաբնույթ գործընթացներն Իրաքը ներքաշեցին ճառի մեջ, որի արդյունքում երկիրը մինչ օրս գտնվում է ճգնաժամի մեջ: Զ. Բուշ կրտսերի համար «իրաքյան նախաձեռնությունը» ԱՄՆ-ի ներքաղաքական դաշտում ըննադատության պատճառներից մեկն էր, որից էլ տվյալ վարչակազմը պատվով դուրս գալու ճանապարհ էր փնտրում: Winner A., *Democracy and Ethno-Religious Conflict in Iraq*, Stanford University, 2003., <http://aceproject.org/ero-en/regions/mideast/IQ/winner.pdf>

⁹ Ամիթաձեշտ է նշել, որ Մերձավոր Արևելքի «վերակառուցման կամ արդիականացման» խնդիրը կարելի է դիտարկել դեռ 1990-ի երկրորդ կեսին ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքական հայեցակարգի համատեքստում: Սակայն մեր կարծիքով ԱՄՆ-ի կողմից Մերձավոր Արևելքի «արդիականացման» ուղղությամբ վճարական քայլերի լավագույն ակտիվը 2001 թ. սեպտեմբերի 11-ին Նյու Յորքում տեղի ունեցած հայտնի ահաբեկչական գործողություններն էին:

¹⁰ Conrad C. Crane, Andrew W. Terrill, *Reconstructing Iraq: insights, challenges, and missions for military forces in a post-conflict scenario*, <http://www.strategicstudiesinstitute.army.mil/pdffiles/pub182.pdf>

¹¹ *The Arab Spring: Implications for US Policy and Interests*, <http://www.mei.edu/content/arab-spring-implications-us-policy-and-interests>

դիտարկվում էր նաև որպես միջազգային ահաբեկչության դեմ հնարավոր պայքարի ձևերից մեկը¹²:

Մերձավոր Արևելքի «վերակառուցման» ծրագիրն առաջին անգամ ամբողջական տեսքով ձևակերպվեց Զ. Բուշի (կրտսեր) կողմից 2003 թ. նոյեմբերի 6-ին ժողովրդավարացման ազգային հիմնադրամ-կառույցում /National Endowment for Democracy – NED/ ունեցած ելույթում¹³:

Մերձավոր Արևելքի «վերակառուցման» հայեցակարգի ստեղծման հեղինակներն են Հ. Քիսինջերը, Գ. Դորփեթը, Դ. Ռամսֆելդը, Դ. Չեյնին, Բ. Ռայսը, Ռ. Փերլը, Փ. Վոլֆովիցը, Մ. Գրոմանը և մի շարք այլ ամերիկյան հայտնի քաղաքագետներ: Ուշագրավ է այն հանգամանքը, որ տվյալ հայեցակարգի մշակման գործում ոչ պակաս մասնակցություն են ունեցել նաև ամերիկաբնակ արաբ մտավորականներ¹⁴:

Համաձայն այդ հայեցակարգի՝ արևմտյան ժողովրդավարությունն ունիվերսալ համակարգ է, որն ապահովում է քաղաքական համակարգի արդիականացում, բարգավաճում, հասարակական արդարություն և մշակույթների երկվտյուրություն¹⁵: Նման պայմաններով Մերձավոր Արևելքում ստեղծվող հասարակությունը պետք է համապատասխանի տարածաշրջանում ԱՄՆ-ի շահերին: Ամե-

¹² Օրինակ՝ ԱՄՆ-ի նախագահ Զ. Բուշ կրտսերը կարծում էր, որ «ժողովրդավարական երկրներում չի կարող լինել այնպիսի ամոթալի երևույթ, ինչպիսին է ահաբեկչությունը»: Տես *President Bush's Speech on Terrorism*, *The New York Times*, http://www.nytimes.com/2006/09/06/washington/06bush_transcript.html?pagewanted=all&r=0 և *President Bush's Speech on Global Democracy and Freedom*, <http://www.brookings.edu/research/interviews/2003/11/10/globalgovernance-daalder>

¹³ Հարկ է նշել, որ Մերձավոր Արևելքի ժողովրդավարացման նախագիծը մասնավորապես արձանագրում է ժողովրդավարական բարեփոխումների անցկացման անհրաժեշտությունը, տնտեսության ազատականացումը տվյալ ենթատեքստում պայքար արքատության դեմ, որն էլ իր հերթին կնպաստի ահաբեկչության վերացմանը:

¹⁴ Hamid Ahmadi, *The Greater Middle East Initiative: Internal Contradictions and External Problems*, <http://en.merc.ir/default.aspx?tabid=73&ArticleId=223>

¹⁵ Տես նաև *Gambit G.C., Jumpstarting Arab Reform*, *The Bush Administration's Greater Middle East Initiative*, http://www.meforum.org/meib/articles/0407_me2.htm: Համաձայն որոշ տեղեկությունների՝ նշված ծրագրի մշակման գործում իր մասնակցությունն է ունեցել նաև հայտնի տեսաբան Եղվարդ Սաիդը:

¹⁶ Հարկ է նշել, որ դեռ 2003 թ. մարտի սկզբին ԱՄՆ պետքարտուղարի օգնական Գրոմանը արաբական մի շարք երկրներ, Թուրքիա և Բրյուսել կառուած պաշտոնական այցերի ժամանակ փորձել էր պարարտ հող գտնել «Մեծ Մերձավոր Արևելք» ստեղծելու ամերիկյան ծրագրի համար: *Grossman comes to talk Greater Middle East*, <http://www.hurriyetdailynews.com/grossman-comes-to-talk-greater-middle-east.aspx?pageId=438&n=grossman-comes-to-talk-greater-middle-east-2004-03-01>

րիկյան հայեցակարգում առանձնահատուկ տեղ է հատկացված նաև Իրաքի բռնազավթմանը¹⁶, որը, ինչպես նշվել էր, Մերձավոր Արևելքում ամերիկյան «ժողովրդավարություն տարածելու» գործընթացի առաջին փուլն էր¹⁷: Վաշինգտոնը համոզված էր նաև, որ «պաղեստինյան հարցի լուծումը հնարավոր է իրականացնել Բաղդադի միջոցով»¹⁸:

Նշված ծրագրի իրականացման երկրորդ փուլը նախատեսում էր ճնշում գործադրել Իրանի և Սիրիայի վրա, որոնք աջակցում էին տարբեր կրոնաքաղաքական շարժումներին: Ամերիկյան նշված հայեցակարգի գաղտնի կետերից մեկը ենթադրում էր նաև վերջ նշված երկրների ղեկավարների ֆիզիկական ոչնչացումը¹⁹:

Մերձավոր Արևելքի «արդիականացման» ամերիկյան հայեցակարգն արաբական երկրներից շատերը որակեցին որպես տարածաշրջանի ներքաղաքական զարգացումներին միջամտելու ԱՄՆ-ի փորձ և մեթոդներն այն²⁰: Տրանք միաձայն պնդում էին, որ «ժողովրդավարական բարեփոխումները պետք է լինեն արաբական հանրության էվոլյուցիոն զարգացման արդյունք և թե՛լադրված չլինեն դրսից»²¹:

¹⁶ 1979 թ. եգիպտոսի և 1994 թ. Հորդանանի արաբ-իսրայելական հակամարտությունից դուրս գալուց հետո Իսրայելի իսկազդող արաբական երկրներից մնացին Սիրիան և Իրաքը: ԱՄՆ-ի համար սիրիական խնդիր պակի բարդ էր, այդ իսկ պատճառով Վաշինգտոնն իր և Իսրայելի համար «արաբական դաշտը» մաքրելու գործընթացը սկսեց հենց Իրաքից՝ անհիմն մեղադրելով Սադամ Հուսեյնի ջլատված իշխանությանը անարևելաբան աջակցելու, զանգվածային ոչնչացման գնեցի ստեղծման և ժողովրդավարության քայքայության մեջ: Փաստորեն, Մերձավոր Արևելքի «վերակառուցման» առաջին փուլը ենթադրում էր իրականացնել հենց Բաղդադում «ռեժիմային ժողովրդավարություն» ստեղծելու միջոցով: U.S. Guided reconstruction and Democracy in Iraq: But where are the weapons of mass destruction! <http://www.southasiananalysis.org/paper676>

¹⁷ ԱՄՆ-ի նախագահը հայտարարեց, որ «Բոլորը, սկսած Դամասկոսից մինչև Թեհրան, կհասկանան, որ ազատություն չորաքանչյուր ժողովրդի համար է: Հարկ է նշել, որ ԱՄՆ-ի կողմից ամերիկյան հատուկ առաքելության՝ խաղաղության և ազատության տարածումը ամենաին էլ նորույթ չէր. Բուլը իր նոր վարդապետությունը համեմատեց նույնիսկ Վ. Վիլսոնի «14 կետերի» և Ֆրանկլին Դ. Ռուզվելտի «4 ազատությունների» հետ:

¹⁸ Կարծում ենք, որ նման մեկերազումն արդեն իսկ վկայում է նշված ծրագրի մշակման գործում ԱՄՆ-ի հրեական լոբբիի ակտիվ մասնակցության մասին:

¹⁹ Ближний Восток: приговоренные к уничтожению, <http://newsland.com/news/detail/id/964928/>

²⁰ Evseev B., Кризис концепции "Большой Ближний Восток", http://imamat-news.ru/index.php?option=com_content&view=article&id=45547:2013-02-18-18-53-50&catid=20-analitika&Itemid=572

²¹ Արաբ առաջնորդները նշում էին նաև, որ ամերիկյան ծրագիրը չի նախատեսում նաև արաբ-իսրայելական դիմակայության և պաղեստինյան հարցի կար-

Այս կապակցությամբ Սիրիայի նախագահ Բաշար Ասադը հայտարարեց. «Ոչ ոք չի հավատում ամերիկյան ծրագրին, քանի որ հնարավոր չէ պատերազմի և հակամարտության անկայության պայմաններում խոսել որևէ ժողովրդավարական բարեփոխումների մասին»²²: Լիբիական Ջամախիրիայի նախագահ Մուամար Բադաֆին նշեց, որ «Մադրիդի երկրները առհասարակ կապ չունեն Մաշրիքում ընթացող զարգացումների հետ, և այդ իսկ պատճառով ամերիկյան ծրագիրն անհեթեթություն է»²³: Քուվեյթի վարչապետ շեյխ Ալ-Սաբահը հայտարարեց. «Անկարելի է ընդունել «Մեծ Մերձավոր Արևելք» կառուցելու ԱՄՆ-ի փորձերը»²⁴:

Ի հակակշիռ ԱՄՆ-ի արաբական աշխարհի արդիականացման հայեցակարգի՝ Եգիպտոսը, Սաուդյան Արաբիան և Սիրիան առաջ քաշեցին Մերձավոր Արևելքի ժողովրդավարացման, այսպես կոչված, արաբական նախագիծը, սակայն որի նկատմամբ, համաձայն «Ալ Ջազիրա» հեռուստաընկերության կողմից 2004 թ. մարտի սկզբին անցկացված հարցման՝ արաբների մեծամասնությունն անվստահություն էր տածում²⁵: Սա առաջին հերթին քաջատրվում էր այն հանգամանքով, որ արաբական ոչ մի նախաձեռնություն չէր կարող արդյունավետ լինել արաբական վարչապետների կողմից իրենց իսկ հանրության հանապազօրյա խնդիրները կարգավորելու անկարողության պարագայում, մասնավորապես քաղաքականության, տնտեսության և մշակույթի ոլորտում կուտակված բազմաթիվ խնդիրների և մանավանդ արաբ-իսրայելական դիմակայության և իրաքյան ճգնաժամի անահղթահարելիության պատճառով: Արաբ մասնագետները, ոչ առանց հիմքի, կարծում են, որ արաբական երկրներում իշխող վերնախավը՝ քաղաքական էլիտան, ինքնին ի վիճակի չէ վերափոխման, քանի որ կենտրոնում դրված է այդ էլիտայի ինքնապահպանման խնդիրը: Այդ համատեքստում ոչ պակաս կարևոր տեղ է զբաղեցնում տվյալ երկրների հատուկ ծառայությունների

գավորման որևէ հիշատակում, առանց որի որևէ ժողովրդավարական բարեփոխում անհեռանկարային կլինի Մերձավոր Արևելքի համար:

²² Волович А. А., О планах демократизации Ближнего Востока, <http://www.iimes.ru/rus/stat/2004/19-08-04.htm>

Արաբական երկրների ղեկավարներից շատերի համար աննհայտ էր, որ ԱՄՆ-ի կողմից առաջ քաշված՝ վերջ նշված քաղաքական հայեցակարգը ամբողջությամբ միտված էր տարածաշրջանում ԱՄՆ-ի և Իսրայելի շահերի պաշտպանությանը:

²³ Волович А. А., О планах демократизации Ближнего Востока, նույն տեղում:

²⁴ Лопыч տեղում:

²⁵ Кургинян С., Политические цунами, Реформирование арабского мира, http://www.danilidi.ru/3-war/06_Kurginian-political-tsunami-arab-reform.html

գործոնը, որոնք հաճախ իշխող վարչակարգի պահպանման համար արվող քայլերով փոխում են օրենքների իրական նշանակությունը, ինչն էլ իր հերթին խոչընդոտում է քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացին²⁶:

Այդպիսով՝ արաբական «ինքնաժողովրդավարացումը» ընդամենը արաբական աշխարհում գոյություն ունեցող իրավիճակի «կոսմետիկ վերափոխման» փորձ է՝ առանց նրա հիմքերը ձևափոխելու:

Արաբական աշխարհում բարեփոխումների արաբական ծրագիրը ներկայացվեց 2004 թ. մայիսի 22–23–ին՝ Թունիսում կայացած ԱՊԼ գագաթնաժողովի ժամանակ²⁷:

Արաբական, այսպես կոչված, «բարեփոխումների» ծրագիրը բաղկացած էր հետևյալ դրույթներից²⁸.

1. Բարեփոխումներն արաբական երկրներում պետք է իրականացվեն արաբական հանրության կողմից, այլ ոչ թե պարտադրվեն դրսից:

2. Բարեփոխումների գործընթացը պետք է կատարվի աստիճանաբար, որպեսզի չխախտվեն տարածաշրջանի հարաբերական անվտանգությունը և կայունությունը:

3. Բարեփոխումները պետք է միտված լինեն տարածաշրջանի շահերի պաշտպանությանն, այլ ոչ թե նրա (տարածաշրջանի) հակառակորդների նկրտումների իրականացմանը:

4. Քաղաքական բարեփոխումների հաջող անցկացման անմիջական նախապայմանն է արաբ–իսրայելական հակամարտության կարգավորումը:

5. Բարեփոխումների անցկացման ժամանակ հարկավոր է հաշվի առնել յուրաքանչյուր արաբական երկրի զարգացման և ներկա իրավիճակի առանձնահատկությունները՝ բացատելով նրանց նկատմամբ մեկ միասնական մոտեցումը:

6. Հարկավոր է կանխել բարեփոխումների և «բաց դռների» քաղաքականության իրականացման ժամանակ ծայրահեղ կրոնական շարժումների կողմից ստեղծված իրավիճակից օգտվելու անմիջական վտանգը:

Չնայած այն հանգամանքին, որ արաբական «բարեփոխումներ-

րի» ծրագրի դրույթները չէին արտացոլում արաբական աշխարհում առկա բոլոր զորքալ խնդիրները, այսուամենայնիվ, նրանք բավականին իրատեսական էին և նպատակային:

Սակայն, ինչպես հաճախ, ԱՊԼ հերթական հանդիպումը ոչ մի կերպ զարգացում չհարորդեց արաբական աշխարհի առջև ծառայած օրհասական հարցերին²⁹: Նշվածի համատեքստում մերժվեց նաև Մուբարաքի առաջարկը՝ ստեղծել մշտական գործող հանձնաժողով, որը պետք է զբաղվեր արաբական աշխարհում քաղաքական և տնտեսական բարեփոխումների խնդիրներով³⁰:

Կարելի է փաստել, որ արաբական «բարեփոխումների» ծրագիրը մեծ հաշվով շեշտադրումը կատարեց «բարեփոխումների» ձևական կողմի վրա, և ոչինչ չէր խոսում ներարաբական խնդիրների էության ու բովանդակության մասին³¹:

2007 թ. ԱՄՆ–ի ազգային զինվորական ակադեմիայի նախկին փոխգնդապետ Ռալֆ Փեթերսը “Armed Forces Journal” ամսագրում հրապարակեց «Արյունոտ սահմանները» վերնագրով մի հոդված, որտեղ քննարկվում էր, այսպես կոչված «Մեծ Մերձավոր Արևելքի» ազգային պետությունների հավանական ասիմանների հարցը³²: Համաձայն այդ տեսության՝ ամերիկյան մոտեցման մեջ առկա է տվյալ տարածաշրջանի ազգային հարստությունները հսկելու ձգտումը. առաջին հերթին՝ էներգակիրները, որի իրականացման համար անհրաժեշտ էր ստեղծել ոչ կենսունակ, գաճաճ պետությունների շրջա, այսպես կոչված՝ Մերձավոր Արևելքի յուրահատուկ «ստմալականացում»³³: Փեթերսը նշում է, որ հարկավոր է

²⁶ Иордания считает саммит ЛАГ в Тунисе важным, но не достаточным шагом, <http://news.mail.ru/politics/arc514164/>

²⁷ Միայն այն հանգամանքը, որ վերը նշված նիստին ԱՊԼ անդամ 22 արաբական երկրներից ներկա էին ընդամենը 13–ը, արդեն իսկ խոսում էր այդ հանդիպման ծայրողման մասին: Հարկ է նշել, որ ԱՊԼ հանդիպման եզրափակիչ նիստին մասնակցում էին ընդամենը 7 արաբական երկրների ներկայացուցիչներ: Նիստին գտնվող արաբ ղեկավարներից առաջինը հեռացավ Մուբարաքը, ում՝ վերը նշված առաջարկությունը չընդունվեց:

²⁸ Արաբական երկրների ընդհանուր «յուրահատկություններից են» ժողովրդավարության քաջակալությունը և իշխանության ամրական քննապետության մոդելի գոյությունը: Ընդ որում՝ ուշագրավ է այն հանգամանքը, որ գրեթե ցանկացած ընդդիմություն արաբական երկրներում որակվում է իբրև «կրոնական ծայրահեղական խմբավորումներ», ինչը հնարավորություն է տալիս տվյալ վարչակարգերին Արևմուտքին ներկայանալու որպես այդ «ծայրահեղական խմբավորումների» զսպող և այլընտրանք չունեցող քաղաքական համակարգեր:

²⁹ Peters R., Blood borders, How a better Middle East would look, <http://www.armedforcesjournal.com/2006/06/1833899>

³⁰ Сологубовский Н., Ливия: “сомализация” плюс “катаризация”?, <http://trueinform.ru/modules.php?name=News&file=article&sid=3671>

Արևմտյան մասնագետների մի մասը կարծում է, որ Մերձավոր Արևելքի, այս-

²⁶ Volker P., Arab Elites, Negotiating the Politics of Change, Colorado 2004, p. 5, http://books.google.am/books?id=QkiAmnyUstMC&printsec=frontcover&hl=hy&source=gbs_ge_summary_r&cad=0#v=onepage&q&f=false

²⁷ Кургинян С., Политические цунами, Реформирование арабского мира, http://www.danilidi.ru/3-war/06_Kurginian-political-tsunami-arab-reform.html

²⁸ Նույն տեղում:

տարածաշրջանում ստեղծել անկայունության, քաոսի և բռնության այլք, որը կակավի Լիբանանից՝ ներառելով Պաղեստինը Սիրիան, Իրաքը, Ծոցի արաբական երկրները, Իրանը և կիսանկի մինչև Աֆղանստան, որտեղ բաշխված են ՆԱՏՕ-ի զորքերը³⁴:

պես կոչված, միավորումը պետք է լինի սահուն և գորալ, այլ ոչ ինքնաբերական, քանի որ Նշված տարածաշրջանի երկրներում քաղաքական և տնտեսական իրամասերը տարբեր է: Հարկավոր է հաշվի առնել նաև այդ երկրների սոցիալական, մշակութային և կրթական աստիճանը:

³⁴ Դեռ 20-րդ դարի 70-ականներին սկսեցին որվագծվել «Նոր աշխարհակարգի» մեկավորման գործընթացները, որոնց համատեքստում Մերձավոր Արևելքը առանձնահատուկ տեղ էր գաղտնցնում: Նշված գործընթացների հիմնական գաղափարախոսները և մասնակիցները հանդիսացան «Փարիզյան ակումբը», իսկ հետագայում երեքլողմանի հանձնաժողովը, Քիլեբերգյան ակումբը, «Ինելը ըրրիորեշը», Սևետա Ֆե ինստիտուտը և այլն: Նրանց կողմից մշակված «Նոր աշխարհակարգի» որվագծերը կենտրոնացած էին Համաշխարհային բանկի, Միջազգային արտարժույթային հիմնադրամի, Առևտրի համաշխարհային առևտրի կազմակերպության և այլնի աշխատանքների վրա: Փաստորեն առանց հայտարարման և բարձրաձայնման կազմակերպվեց Նոր տեսակի «համաշխարհային պատերազմ», որի պարագայում կիրառվեցին այս կամ այն երկրների ազգային տնտեսություններում և սոցիալական ոլորտներում «կառավարելի քաոս» ստեղծելու միջոցները: Առաջին հայացքից անեղծվածային թվացող այս հասկացությունը նախատեսում էր քաոսի վերածել այդ պատերազմի գոյ դարձած երկրների տնտեսությունները: Իսկ քաոս տարածողները այն պահում էին հսկողության տակ՝ ստեղծելով յուրահատուկ կարգ: «Պատերազմական գործողությունները» նոր տեսակը մանրամասն ներկայացրել է նրա հեղինակներից մեկը՝ փորձագետ Ս. Մաննը «կառավարելի քաոսի» ստեղծման մեխանիզմների շարքում նշելով հակառակորդի տարածքում «ժողովրդավարությանը և շուկայական բարեփոխումների աջակցությունը», ինչպես նաև «գաղափարախոսությունը ետ մղող տնտեսական ստանդարտների և ռեսուրսային կարիքների» բարձրացումը, որով էլ ապահովվում է ԱՄՆ-ի ազգային շահերի պաշտպանությունը: Համաձայն Մաննի՝ գոյություն ունեն այս կամ այն տարածքում քաոս ստեղծելու հետևյալ միջոցները. 1) աջակցություն լիբերալ ժողովրդավարությանը, 2) աջակցություն շուկայական բարեփոխումներին, 3) ռեակցիոնյան մոտ կանգնի ստանդարտների բարձրացման գործունեություն, 4) արժեքների և գաղափարախոսության ետ մղում: Հենց այս առանցքային կետերն էլ սկսեցին կիրառվել Մերձավոր Արևելքում՝ հետիոտնփոխական քաղաքական զարգացումների համատեքստում, որոնք անվանում են «արաբական գարուն»: Այդ ամենը մեկավորում է բարոյալված ազգային ոգի, որն էլ քայքայում է պետությունը և ազգային-մշակութային ավանդույթները, որոնց փոխարեն ակտիվանում են տարբեր կրոնական-քաղաքական ծայրահեղ շարժումներ: Ապագադախարացումը, գաղափարական պլուրալիզմը, ազգային արժեքների առագաթային այրումը, նյութական արժեքների կարիքի կտրուկ բարձրացումը՝ առաջին հերթին «արաբական փողոցի» կողմից, տնտեսության կառավարման լծակների կորուստը, «ժողովրդավարության գաղափարական անարբեկությունը և այլատերումը, որը հաճախ ազգային-դավանաբանական երանգ է ստանում», գիտականորեն մշակված և փորձագետների կողմից մատուցվածն է, որն էլ «կառավարելի քաոսի հիմքն է»: Այս ամենը ծառայում է արդի գոյություն ունեցող ազգային պետությունների, ավանդույթային մշակույթների և քաղաքակրթությունների ապամոտաման գործին: Համաձայն գլոբալակա-

Վերլուծելով Փեթերսի կողմից առաջադրված տեսությունը՝ կարելի է եզրակացնել, որ այն Մերձավոր Արևելքում անգր-ամերիկյան-խորայելական յուրահատուկ ռազմական գործողությունների բնույթ ունեցող «ճանապարհային քարտեզ է»³⁵: Փաստորեն, Փեթերսի տեսության իրականացման համար անհրաժեշտ եղավ մի քանի տարի:

Արդարացի լինելու համար պետք է նշել, որ սկսած 80-90-ական թվականներից՝ գլոբալականացման գործընթացների համատեքստում արաբական մի շարք երկրների կողմից քաղաքական համակարգի արդիականացման քայլեր էին նախաձեռնվում, մասնավորապես ստեղծվում էին մարդու իրավունքների պաշտպանության կոմիտեներ, աշխատանքային խմբեր, նույնիսկ նախարարություններ, որոնք, սակայն, միայն ֆորմալ բնույթ ունեին: Արաբական երկրների կողմից կատարված այդ քայլերը մեծ հաշվով ուղղված էին իրենց իսկ քաղաքական խմիջը բարձր պահելուն: Արաբական աշխարհի «արդիականացման» վերաբերյալ Արևմուտքի կողմից արված արձայունները ավելի հստակ և նպատակային դարձան 2001 թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկությունից հետո:

Մերձավոր Արևելքի «վերակառուցման» ամերիկյան ծրագրին վերջնական երանգ հաղորդեցին արևմտաեվրոպական երկրները, մասնավորապես Ֆրանսիան և Գերմանիան: Նրանք կարծում էին, որ արաբներն իրենք պետք է կատարեն իրենց ազատ ընտրությունը, և որ չի կարելի ստեղծել «ԱՆՃ Մերձավոր Արևելք»՝ միավորելով նրանում այնպիսի տարբեր երկրներ, ինչպիսիք են, օրինակ՝ Պակիստանը, Աֆղանստանը և Ծոցի արաբական երկրները³⁶: Մերձավոր Արևելքի «վերակառուցման» առավել ամփոփ հայեցակարգը հաստատվեց 2004 թ. հունիսի 8-10-ին Ջոր-

նացման կողմնակիցների՝ երանց փոխարեն պետք է գա հանրություն, որը չի ունեն հիշողություն, ինչն իր հերթին ձեռք է բերվում հատուկ տեխնոլոգիաների միջոցով, որոնք վերաբերում են ՃՆԷ-ներին և կրթական ոլորտին: Այսպիսով՝ կառավարելի քաոսի տեխնոլոգիաները ներկայումս զանգվածային ոչնչացման զենքի տեսակ են՝ համաշխարհային տիրապետության հաստատելու համար այն պետության համար, որը դրանք կիրառում է: Peters R., Blood borders. How a better Middle East would look, նույն տեղում: Տես նաև՝ Nazemroava M.D., Plans for Redrawing the Middle East: The Project for a "New Middle East", <http://www.globalresearch.ca/plans-for-redrawing-the-middle-east-the-project-for-a-new-middle-east/3882>

³⁵ Peters R., Blood borders. How a better Middle East would look: <http://www.armyforcesjournal.com/2006/06/1833899>

³⁶ Ziaadeh R., The EU's Policy on Promotion Democracy in the Arab World, <http://www.idea.int/resources/analysis/loader.cfm?csmodule=security/getfile&pageid=38074>

ջիա նահանգում կայացած «Մեծ ութնյակի» նիստի ընթացքում³⁷: Հանդիպման մասնակիցների կողմից «Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի ընդլայնված տարածաշրջանի հետ համագործակցություն հանուն համընդհանուր առաջընթացի և միասնական ապագայի» ընդունված փաստաթուղթն ընդգրկում էր այն հիմնական կետերը, որոնց հետագայում պետք է ապավիներ Արևմուտքը³⁸: Եվրոպական և արաբական երկրների պահանջով փաստաթուղթում կարևոր կետ մտցվեց այն մասին, որ բարեփոխումների անցկացմանը զուգընթաց «Մեծ ութնյակի» անդամները պետք է աջակցեն արաբ-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին՝ հիմնվելով ՄԱԿ-ի ԱԽ 242, 338 և 425 բանաձևերի վրա: Հատուկ կետով նշվում էր նաև «ճանապարհային քարտեզ» ծրագրի դրույթների իրականացման վերաբերյալ կետը, որի հիմքում ՄԱԿ-ի ԱԽ 1515 բանաձևն է, և, որը նախատեսում է պաղեստինյան և հրեական պետությունների խաղաղ գոյակցությունը³⁹:

Հանդիպման մասնակից կողմերը համակարծիք էին «Բարսելոնյան գործընթացին», «ամերիկա-մերձավորարևելյան գործընկերության» նախաձեռնությունը և «ճապոնա-արաբական երկխոսությանը» ընթացք տալուն հարցում: Նախատեսվում է նաև, որ գործընկերության կենտրոնական տարրը պետք է լինի մշտական գործող արտաքին գործերի, Էկոնոմիկայի նախարարների մակարդակով «քաղաքական հարթակ» հանուն ապագայի» ներկայացուցչական մարմինը⁴⁰:

Հարկ է նշել, սակայն, որ հրավիրված արաբական բոլոր երկրներից մասնակցում էին միայն Բահրեյնի, Հորդանանի, Եմենի և Իրաքի ներկայացուցիչները:

2004 թ. հունիսի 14-16-ը Ստամբուլում կայացած Իսլամական կոնֆերանս կազմակերպության հանդիպման բոլոր մասնակիցները նշեցին, որ արաբական աշխարհում բարեփոխումների հաջողությունը անմիջականորեն կապված է արաբ-իսրայելական հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի հետ, որ իրենք ինքնուրույն կարող են «վերակառուցել» Մերձավոր Արևելքը⁴¹:

³⁷ Sharp J.M., The Broader Middle East and North Africa Initiative: An Overview, <http://fpc.state.gov/documents/organization/43293.pdf>

³⁸ Լույս տեղում:

³⁹ Լույս տեղում:

⁴⁰ Miller R., Mishrif A., The Barcelona Process and Euro-Arab Economic Relations 1995-2005, <http://www.kcl.ac.uk/artshums/depts/mems/people/staff/academic/mishrif/Euro-ArabEconomicRelations.pdf>

⁴¹ Корнилов А.А., Турецкая дипломатия в исламском мире: проблемы и при-

оритеты деятельности, http://www.idmedina.ru/books/materials/rmforum/1/sect2_kornilov.htm

Առաջին հայացքից վերահսկելի թվացող՝ ամերիկյան կողմից առաջադրված Մերձավոր Արևելքի «վերակառուցման» հայեցակարգն իրականում դարձավ ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության ծախսողունը. Վաշինգտոնը չէր ծրագրել «արաբական գարունը» և նրան հաջորդած զարգացումները⁴²: Կարծում ենք՝ Վաշինգտոնը դժվար էր հավանում, որ քաղաքական սիրախաղ է սկսել իսլամիստների հետ⁴³: Հարկ է նշել, որ այնուամենայնիվ ԱՄՆ-ը կարողացավ ուղղորդել «արաբական գարնան» արդյունքում սկսված գործընթացները, մասնավորապես սատարել, այսպես կոչված, «չափավոր իսլամիստական շարժումներին»՝ համոզված լինելով, որ հեռանկարում ցանկացած իսլամիստական շարժում, գտնվելով իշխանության գլուխ, տվյալ երկիրը կհասցնի կործանման:

Այդպիսով՝ սկսվեց Մերձավոր Արևելքի «փոխակերպումը». ավանդական ազգայնական քաղաքական համակարգերն իրենց տեղը սկսեցին զիջել իսլամիստական շարժումներին: Նշվածի համատեքստում չափազանց ուշադրավ են Եգիպտոսում ընթացող ներքաղաքական զարգացումները:

ԱՄՆ-ի ճնշման ներքո 2005 թ. սկսված երկար և մեծ հաշվով անարդյունավետ բարեփոխումները, ինչպես նաև «Մուսուլման երայրներ» կազմակերպության քաղաքական ակտիվությունը և որ լիցք ստացան «արաբական գարնան» սկսվելու հետ, ինչն էլ հանգեցրեց երկրում իշխանափոխության:

2011 թ. հունվարի 25-ին Կահիրեում կազմակերպվեց, այսպես կոչված, «Ցաման օրը»: Եթե հիմք ընդունենք «Վիքիլիքսի» տարբեր հրապարակումները, ապա ներքաղաքական ճգնաժամը և ծայրահեղ լարվածության առաջացումը Եգիպտոսում ամենևին էլ անակնկալ չէին, քանի որ ներքաղաքական զար-

рители деятельности, http://www.idmedina.ru/books/materials/rmforum/1/sect2_kornilov.htm

⁴² Խոսքը վերաբերում է իսլամիստների իշխանության գալու հանգամանքին:

⁴³ Սա էր պատճառը, որ ամերիկյան քաղաքական ծախսագետներ մեղադրում էին Վաշինգտոնին արաբական ավանդական վարչակարգերը տապալելու աջակցելու մեջ: Մանավանդ երբ խոսքը այնպիսի երկրի մասին է, ինչպիսին է Եգիպտոսը: Այդ կապակցությամբ Տ. Քիսինջերը գրել է. «Շատերը, որ գովաբանում են «արաբական գարունը», հաճախ նշում են այն բռնապետերի ցանկը, որոնք գահընկեց են արվել շարժման արդյունքում՝ մոտանալով, որ ինքնավստիությունների մասին հարկավոր է դառնել՝ ելնելով այն ճնապահից, թե ինչ են նրանք կառուցում, այլ ոչ թե քանդում» Տե՛ս Ниссинджер Г., На Ближнем Востоке реализм и идеализм немислимы друг без друга, http://rus.ruvr.ru/2012_08_06/Na-Blizhnem-Vostoke-realizm-i-idealizm-nemislimi-drug-bez-druga/ :

գացումների նման սցենարը վերջին տարիներին հաճախ էր շոշափվում Եգիպտոսում ամերիկյան զաղտնի գործակալների և ընդդիմադիր որոշ ուժերի միջև գոյություն ունեցող գաղտնի շփումների ժամանակ⁴⁴:

Հարկ է նշել, որ դեռ 2011 թ. հունվարի 19-ին «Մենք բոլորս հսպեղ Սաիդ ենք»⁴⁵ շարժման ներկայացուցիչները հայտարարեցին, որ հունվարի 25-ին ողջ Եգիպտոսում տեղի կունենան աննախադեպ բողոքի ակցիաներ և ցույցեր՝ ուղղված եգիպտական իշխանությունների դեմ: Եգիպտական հասարակությունը ձգտում էր փոփոխությունների և չէր ցանկանում 2011 թ. սեպտեմբերին նախատեսվող նախագահական ընտրություններին տեսնել Գամալ Մուբարաքին երկրի իշխանությունը փոխանցելու հավանականությունը: Հոսնի Մուբարաքի՝ Մարանյակ տարիներ իշխանության ղեկին գտնվելու հանգամանքը ևս հասարակությունը դիտարկում էր որպես Եգիպտոսի աղքատության և երկրի տնտեսական աճի հիմնական պատճառներից մեկը⁴⁶:

Մի շարք հեղինակների կարծիքով Եգիպտոսում սկսված ներքաղաքական ճգնաժամը Մուբարաքի 30-ամյա կառավարման արդյունքն էր, որի պայմաններում Եգիպտական ընդդիմությունը չուներ իրական հնարավորություն «մոտենալու նախագահական աթոռին»⁴⁷:

Անտարակույս է այն հանգամանքը, որ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը 20-րդ դարի սկզբից ծավալած իր ընդ-

դիմադիր գործունեությամբ կարողացավ յուրովի հասունացնել եգիպտական հասարակությունը վերջ նշված, այսպես կոչված, «ցամառ» օրվան և հակաիշխանական իրենց երկարատև պայքարով որոշ առումով նաև «քաղաքացիական զարթոնքի» միտման գործոն հանդիսանալ⁴⁸:

Արդեն փետրվարի 11-ին ներքաղաքական ճգնաժամի և արտաքին աջակցության դադարեցման արդյունքում, մասնավորապես Վաշինգտոնի կողմից հնչեցված իրողորենից հետո⁴⁹, Մուբարաքը հայտարարեց իր պաշտոնանկության մասին⁵⁰: Փետրվարի 13-ին երկրում հոչակվեց ժամանակավոր ռազմական դիկտատուրա, իսկ իշխանությունն անցավ Ջինվադ ուժերի բարձրագույն խորհրդին՝ գեներալ Հուսեյն Տանտաուի⁵¹ գլխավորությամբ⁵²: Բարձրագույն խորհուրդը դադարեցրեց սահմանադրության կիրառումը և ցրեց խորհրդարանը⁵³: Մարտի 3-ին պաշտոնաթող եղավ նաև երկրի վարչապետ Ահմեդ Շաֆիքը, որին փոխարինեց տրանսպորտի նախկին նախարար Էսամ Շարաֆը⁵⁴: Մուբարաքի պաշտոնաթող լինելուն հաջորդած քաղաքական զարգացումները դժվար թե ստիպեն հավաստել, որ երկրում համակարգային լուրջ փոփոխություններ զրանցվեցին⁵⁵:

⁴⁴ Տես Over 37.500 Egyptians to Take Part on January 25th Uprising, <http://www.ikhwanweb.com/article.php?id=27870>

⁴⁵ ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման, անընդառանալով Եգիպտոսում տիրող իրավիճակին, նշեց, որ նախագահ Մուբարաքը պետք է ենթարկվի ժողովրդի կամքին, այսինքն՝ հրաժարական տա:

⁴⁶ Տես Myбарак ушел в отставку, <http://lenta.ru/news/2011/02/11/mubarak/> խորհուրդը ցրեց խորհրդարանը և առաջադրեց սահմանադրական փոփոխություններ անցկացնելու մասին պահանջը, որի հիման վրա պետք է ձևավորվեր նոր ժողովրդավարական իշխանական համակարգ, որի հիման վրա էլ կանցկացվեին նոր ժողովրդավարական ընտրություններ: Կառավարության աշխատակազմի ղեկավար Զամալ Ահմեդ ալ-Գանգուրիին հանձնարվեց նոր կառավարություն ձևավորել մինչև 2011 թ. նոյեմբերի 27-ը:

⁴⁷ Հարկ է նշել, որ Տանտաուիի առանձնապես մեծ ժողովրդավանությունը չի վայելում Եգիպտոսում, և ժողովրդի շրջանում ստացել է «Մուբարաքի պոպե» անունը: Տես. Joshi, Viewpoint: Too early to celebrate in Egypt?, <http://www.bbc.co.uk/news/world-middle-east-12438007>

⁴⁸ Руководить внутренней и внешней политикой Египта будет глава Высшего совета ВС, <http://www.fontanka.ru/2011/02/13/036/>

⁴⁹ Военные Египта отменили действие конституции и распустили парламент, <http://www.fontanka.ru/2011/02/13/030/>

⁵⁰ Египтяне снова собираются на площади Тахрир, <http://www.fontanka.ru/2011/02/25/119/>

⁵¹ Այդ կազմակերպությամբ ՄԱԿ-ի Միջուկային ենթդիպի միջազգային կոմիտեի նախկին ղեկավար Ալ-Բարադեյը նշում էր. «Եթե ես Եգիպտոսը լքեի հեղափոխությունից առաջ՝ հունվարի 24-ին, և վերադառնայի Մուբարաքի հրաժա-

⁴⁴ Суть «Wikileaks-а»՝ Կահիրեում ԱՄՆ-ի դեսպանությունը վերջին երեք տարիների ընթացքում օգնություն էր տրամադրում ընդդիմադիր եգիպտացի երիտասարդների՝ երկրում իշխանափոխություն իրականացնելու համար: 2008 թ. դեկտեմբերի 30-ին Վաշինգտոնից իրազեկվեց նաև, որ Գամալ Մուբարաքը 2011 թ. հունվարի 25-ին ողջ Եգիպտոսում ԱՄՆ դեսպան Մարգրետ Սկրեյնի գրոտ էր, որ 70000 երիտասարդներից բաղկացած «Ապրիլի 6-ի» ընդդիմադիր շարժումը պատրաստվում էր իշխանափոխություն իրականացնել 2011 թ.: Սկրեյնի նշում էր նաև, որ «Ապրիլի 6-ի» շարժումը կազմակերպչական հիմնական գործողությունները պատրաստվում էր իրականացնել սոցիալական ցանցերի օգնությամբ:

⁴⁵ Խալեդ Սաիդի անունը եգիպտական ընդդիմադիր «Ապրիլի 6-ի» շարժման և «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության համար դարձել էր խորհրդանշական: Խալեդ Սաիդը 28 տարեկան հասակում մահացել էր 2010 թ.: Ավերաճողիպի բանտում ստանցանքների ենթարկվելուց հետո: Տես Братья назначили дату народного восстания в Египте, <http://www.newsru.co.il/mideast/>

⁴⁶ Egyptian crisis: How did it happen, <http://www.cbc.ca/news/world/story/2011/01/29/f-faq-egypt-uprising.html>

⁴⁷ Коротаев А.В., Зинькина Ю.В., Египетская революция 2011г.: структурно-демографический анализ, Полис, Экстратекст. 2011, Выпуск 1., <http://www.poliistudies.ru/extratext/text/issue2011A.htm>: Ընդդիմադիրները պահանջում էին նաև պաշտոնակ անել Եգիպտոսի ներքին գործերի նախարար Հաբիբ ալ-Ալիին:

երկրում սկսվեց երկար և ներքաղաքական ճգնաժամով հագեցած անցումային շրջան⁵⁶: 2011 թ. փետրվար – 2012 թ. մայիս-հունիս ժամանակահատվածը դարձավ նոր փորձությունների շրջան: Եգիպտոսի նախագահական պաշտոնի համար պայքարում ներգրավվեցին քաղաքական և հասարակական տարբեր ուժեր, իսկ նախագահի թափուր պաշտոնի համար պայքարող թեկնածուների թիվը հասավ 13-ի⁵⁷:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Մուբարաքի իշխանության տապալումից հետո ԱՄՆ-ը Իսրայելին ներկայացրեց Եգիպտոսում քաղաքական կայունությունը վերականգնելու ծրագիր, որը մշակվել էր ԱՄՆ-ի Ազգային անվտանգության խորհրդի Ռուսաստանի և Եվրասիայի բաժնի պետ Մայքլ Մաքֆրի կողմից⁵⁸: Պարզվում է, որ ԱՄՆ-ը Մուբարաքի իշխանության տապալումից հետո երկրի ապագան կապում էր Ռազմական խորհրդի և ԱՊԼ նախկին գլխավոր քարտուղար Ամր Մուսայի հետ⁵⁹: Իսրայելի վարչապետ Բ. Նեթանյահուին հղած իր նամակում Օրաման նշում է, որ Ամր Մուսան կկարողանա կայունացնել երկիրը լիբերալ արժեհամակարգի հիման վրա և հավատարիմ կմնա քեմփոկիդյան համաձայնագրերին⁶⁰: Ենթելով նման հարցադրումից՝ կարելի է եզրակացնել, որ Վաշինգտոնը գերադասում էր եգիպտական նախագահական աթոռին տեսնել աշխարհիկ իշխանության ներ-

կայացուցչի՝ ազգայնական և լիբերալ արժեքներով: Սակայն ինչպես ցույց տվեցին հետագա զարգացումները, «եգիպտական փողոցի» զգալի հատված ընտրեց իսլամիստներից բաղկացած քաղաքական համակարգը⁶¹:

Մաքֆրիի կողմից մշակված և ԱՄՆ-ի Ազգային անվտանգության խորհրդի հավանությունը ստացած ծրագիրը հիմնականում ներառում էր հետևյալ դրույթները⁶².

- Վաշինգտոնի անմիջական մասնակցությունը Եգիպտոսում ընթացող ներքաղաքական զարգացումներին, և հնարավորություն ընձեռել Կահիրեին վերականգնել այն դերակատարությունը տարածաշրջանում՝ ԱՄՆ-ը տարածաշրջանային ռազմավարության համատեքստում:

- «Պայմաններ ստեղծել» եգիպտական ցանկացած կառավարության համար քեմփոկիդյան համաձայնագրերին հավատարիմ մնալու նպատակով, միևնույն ժամանակ բացառել քեմփոկիդյան համաձայնագրերը ներեգիպտական բանավեճի առարկա դարձնելու հանգամանքը:

- ԱՄՆ-ի և եգիպտական երիտասարդական շարժումների միջև առավել մտերիմ հարաբերությունների հաստատումը: Նրանք մեծ ներդրում են կատարել եգիպտական հեղափոխության կազմակերպման գործում, որոնց միջոցով էլ կարելի է կրկին ազդել եգիպտական քաղաքական օրակարգի վրա:

- Ֆինանսական և այլ նյութական ընդարձակ աջակցության տրամադրում եգիպտական քաղաքական կուսակցություններին և շարժումներին հեղափոխության երկրորդ փուլում:

- ԱՄՆ-ի սերտ հարաբերությունների պահպանումը եգիպտական քաղաքական էլիտայի հետ, որը կնպաստի «համապատասխան անձի» Եգիպտոսի նախագահ ընտրվելուն: Այդ համատեքստում Վաշինգտոնը վստահություն էր հայտնում, որ ԱՊԼ գլխավոր քարտուղար Ամր Մուսայի եգիպտական քաղաքական դաշտում մրցակից չի տեսնում՝ ավելացնելով, որ նրա ղեկավարած Եգիպտոսն ամենևին վտանգ չի կարող ներկայացնել Իսրայելի և ԱՄՆ-ի համար⁶³:

Վերը նշվածից ակնհայտ է, որ ԱՄՆ-ի կողմից ներկայացված Եգիպտոսի համար մտա ապագայի քաղաքական տեսլականում տեղ չունեն իսլամիստները, ինչը ևս մեկ անգամ հնարավորու-

րականից հետո՝ փետրվարի 13-ին, դժվար թե հավատայի, որ այս երկրում հեղափոխություն է եղել», H.Hendawi, Egypt's Arab Spring: A revolution gone astray, <http://www.guardian.co.uk/world/feedarticle/9957832>, Հնտեղափոխական Եգիպտոսի մասին տես նաև The failings of Egypt's Arab Spring revolution, <http://www.dw.de/dw/article/0,,16032603,00.html>

⁵⁶ Переходный период в Египте завершится принятием новой конституции – глава МИД, <http://www.trend.az/regions/met/arabic/1834569.html>

⁵⁷ Крол А.А., Египет: основные кандидаты на президентских выборах, 2012 г. май 21, <http://www.iimes.ru/?p=14763>

Նախագահական պայքարում առավել ուժեղ թեկնածուներն էին ԱՊԼ նախկին գլխավոր քարտուղար Ամր Մուսան, նախկին վարչապետ Ահմեդ Շաֆիքը և «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության ակտիվիստ Ադա ալ-Մոնեհի Աբու ալ-Ֆաթաի, որն ինքն իրեն քնորոշում է իբրև կրոնական պահպանողական լիբերալ: Աբու ալ-Ֆաթաիի դիրքերն ավելի ամրապնդվեցին, երբ նրա օգտին հանդես եկավ «Ան Նուր» կուսակցությունը: Հաջորդ տեղում նոր միայն գտնվում էր «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության ղեկավարներից Սուհամնեղ Մուրսի: Egyptian presidential election: The candidates, <http://www.bbc.co.uk/news/world-middle-east-17859639>

⁵⁸ План Обамы в отношении Египта после падения Мубарака, <http://www.al-waay.org/archive/52-291/439-plan-obami-v-otnoshenii-yegipta.html>, նաև <http://golosislama.ru/news.php?id=4353>

⁵⁹ Նույն տեղում:

⁶⁰ Նույն տեղում:

⁶¹ Նույն տեղում:

⁶² План Обамы в отношении Египта после падения Мубарака, <http://golosislama.ru/news.php?id=4353>

⁶³ Նույն տեղում:

թյուն է տալիս փաստելու, որ ամերիկյան դիրքորոշումը տվյալ զարգացումների նկատմամբ ավելի շատ իրավիճակային բնույթ էր կրում: Սա է հիմք տալիս եզրակացնելու, որ խնդրո առարկա ամերիկյան քաղաքական հայեցակարգը ձախողված էր:

Նախագահական ընտրությունները Եգիպտոսում անցան երկու փուլով. առաջին փուլը՝ 2012 թ. մայիսի 23-ին և 24-ին և երկրորդ փուլը 2012 թ. հունիսի 16-ին և 17-ին: Ընտրությունների երկրորդ փուլում միմյանց դեմ պայքարում էին երկու թեկնածուներ՝ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության առաջնորդ Մուհամմեդ Մուրսին և Եգիպտոսի նախկին վարչապետ Ահմեդ Շաֆիքը⁶⁴:

Արդյունքում «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության առաջնորդ Մուհամմեդ Մուրսին հավաքեց ըզեաձայների 52 %-ը՝ հարթելով Եգիպտական 17 նահանգներում (13 մլն ընտրաձայն), իսկ Ահմեդ Շաֆիքը՝ ըզեաձայների 48 %-ը՝ հարթելով Եգիպտական 9 նահանգներում (11 մլն ընտրաձայն)⁶⁵:

Տասնյակ տարիներ շարունակ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը գործնականում հանդիսանում էր Եգիպտոսի միակ կազմակերպված և «իրական» ընդդիմությունը: Գործող իշխանությունը, ի դեմս Հոսնի Մուբարաքի, ստանալով նաև Արևմուտքի լուռ աջակցությունը, բոլոր հնարավոր միջոցներով պայքարում էր այդ կրոնաքաղաքական կազմակերպության դեմ:

Սակայն սկսված «արաբական գարունը» և Արևմուտքի, մասնավորապես ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության ձախողումը, որի արդյունքում Վաշինգտոնը վճռեց խաղաղույթը դնել⁶⁶ «չափավոր իսլամիստների» վրա, տվյալ դեպքում՝ «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության, հանգեցրեց երկրում ոչ միայն Մուբարաքին իշխանության տապալման, այլև ավանդական ազգայնական գաղափարախոսության անկման⁶⁷, որին

⁶⁴ Куделев В.В., Ситуация в Египте: июнь 2012 г., 2012 г. 8 июля, <http://www.iimes.ru/?p=15111>

⁶⁵ Быстров А.А., Египет: второй тур президентских выборов, 2012 г., 13 июня, <http://www.iimes.ru/?p=14925> և http://ria.ru/arab_eg/20120618/676223972.html

⁶⁶ Протесты в Египте: США тайно поддерживали лидеров, стоящих за восстанием, <http://press-post.net/protesty-v-egipte-ssha-taino-podderzhivali-liderov-stojaxhix-za-vosstaniem>

⁶⁷ Աստիճանների զգալի մասը համակարծիք է այն մտքին, որ արաբական աշխարհը փոխակերպվում է. ավանդական ազգայնական գաղափարախոսության դարաշրջանը կարծես թե ավարտված է: Արաբական աշխարհում ընթացող զարգացումները ցույց են տալիս, որ ազգայնական գաղափարները չկարողացան պարփակել և լուծում տալ տարիներով կուտակված խնդիրներին, այդ թվում և արաբ-իսրայելական դիմակայությանը: Հարկ է նշել, որ նշ-

լրացնելու եկավ իսլամիստական «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական կազմակերպությունը: Արդյունքում Եգիպտոսում ստեղծվեց Եվրոպայի նոր դարերի պատմության շրջանին բնորոշ հայտնի իրավիճակը՝ «Թագավորը մեռավ՝ կեցցեց թագավորը», այսինքն՝ մի բռնապետը փոխարինվեց մեկ այլով. Մուբարաքի աշխարհիկ և «մեղմ» ոստիկանապետությունը փոխարինվեց «Մուսուլման եղբայրներ» կրոնաքաղաքական «չափավոր իսլամիստական» բռնապետությամբ⁶⁸:

«Արաբական գարնան» արդյունքում Եգիպտոսում սկսված քաղաքական փոխակերպումների համատեքստում ավելի հստակ նկատելի են դառնում հետևյալ միտումները.

- Իշխանություն ձեռք բերած Եգիպտական «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունն անցել է քաղաքական-գաղափարախոսական «արդիականացման» երկար ճանապարհ և որդեգրել է սալաֆիական շարժումներից և գաղափարախոսություններից տարանջատվելու դիրքորոշում՝ ներկայանալով որպես չափավոր իսլամիստական ուղղություն:
- Կազմակերպությունը չի թաքցնում, որ, հնարավոր է, Եգիպտոսում ներդրվի պետական կառուցվածքի թուրքական մոդելը⁶⁹:
- Այդ իմաստով տեղին է հիշեցնել ԱՄՆ-ի գործադրած ջանքերի մասին՝ տարածաշրջանում «չափավոր իսլամիզմի» հենքի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքների մասին և հակակշիռ իսլամի սալաֆիական ուղղության զարգացման:
- Միևնույն ժամանակ Եգիպտոսում իշխանության մոտ գտնվող «չափավոր իսլամիստները» ձգտում են ստեղծելու ազգային միասնության պետություն, թեպետ անհասկանալի է թե ինչպես են իշխանությունները դա իրագործելու, մանավանդ երբ երկրում առկա է 8–10 մլն ղպտիական

վածի վերաբերյալ փաստերից են նաև դեռ 2006 թ. Պաղեստինում անցկացված խորհրդարանական ընտրությունները, որոնց արդյունքում հաղթանակ տարավ կրոնաքաղաքական «Համաս» շարժումը:

⁶⁸ Մուհամեդ Մուրսիի կողմից գլխավորած «չափավոր իսլամիստները» բարձրաձայնում են, որ Եգիպտոսում կառուցում են ժողովրդավարություն, որը, սակայն, ըստ իս՝ թիչ է համապատասխանում իրականությանը: Мурси: демократия по-исламистски, <http://newsland.com/news/detail/id/1022954/>

⁶⁹ Sh. Joshi, Viewpoint: Too early to celebrate in Egypt?, <http://www.bbc.co.uk/news/world-middle-east-12438007>

համայնք⁷⁹, որին մշտապես վերապահումով է մոտենում «Մուսուլման եղբայրներ» կազմակերպությունը:

- Երկրում նկատվում է գաղափարական նոր միտում՝ կապված «ավտորիտարիզմի ուժը բանակում չէ, այլ քաղաքացիական հասարակության առկայության» հետ:

Ամփոփելով նյութը՝ հարկավոր է նշել, որ արաբական աշխարհում ժողովրդավարության գործընթացները դեռ բազմաթիվ և տարաբնույթ քննարկումների առիթ կդառնան: Ժողովրդավարացման գործընթացները դեռ շատ հեռու են իրական լինելուց:

ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԴԱԿԱՆ ԽԱՂԱՔԱՐՏԸ ԹՈՒՐԲ-ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Աշխարհաքաղաքական վերջին զարգացումների հետևանքով մերձավորարևելյան տարածաշրջանում առաջացած անկայունությունն այսօր առավել քան երբևէ արժևորում է քրդական գործոնի և դրա կարգավորման հեռանկարների կարևորությունը՝ օրակարգ բերելով առկա սահմանների վերածննդի անխուսափելիությունը:

Թուրք-սիրիական հարաբերություններն իրենց պատմական զարգացման ընթացքում ունեցել են կերպափոխման մի քանի շրջափուլ, և մինչ «արաբական գարնան» իրադարձությունները դրանք կարելի էր բնութագրել որպես ռազմավարական համագործակցություն:

Սիրիայում ներքաղաքական ճգնաժամի խորացմանը համընթաց նրա շուրջ առաջացած ռազմաքաղաքական և տնտեսական շահերի բախման խաչմերուկում Անկարան հերթական անգամ փորձեց իսլամական աշխարհում գլխավոր դերակատարի գործառույթ ստանձնել: Չափավոր իսլամիստներին, որոնք գործում էին իր անմիջական հովանավորությամբ, իշխանական վերնախավում տեղ հատկացնելու վերաբերյալ Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի հետ անարդյունք բանակցություններից հետո՝ Թուրքիան բացահայտորեն ներքաշվեց Սիրիայի ներքաղաքական գործընթացներում և պայմանավորված իր արտաքին քաղաքականության հետաքրքրություններով՝ բնականաբար աջակցեց ընդդիմադիր ուժերին՝ Ասադի վարչակարգի տապալման հստակ մտադրությամբ: Այդ աջակցությունը շատ արագ ռազմատեխնիկական և նյութական բնույթ ստացավ, երբ Անկարան իր տարած-

⁷⁹ Дергачев В., Революция и коптская община в Египте, <http://express-orient.com/revolyuciya-i-koptskaya-obshhina-v-egipte>

¹ Целеровин Ю. Б., О турецко-сирийских отношениях, <http://www.iimes.ru/rus/stat/2012/18-05-12.htm>

քում հիմնեց Սիրիական ազատ բանակի ճամբարներ՝ մասամբ ֆինանսավորելով ընդդիմությանը և նրա ռազմական թևը:

Նշենք, որ Թուրքիայի՝ Ասադի վարչակարգի տապալման ծրագրերի համակարգում Սիրիայի քրդերը՝ որպես բնակչության ամենախոցելի խավ, առաջնայնություն ձեռք բերեցին, իսկ սիրիական ճգնաժամի ապավանհ զուգընթաց քրդական գործոնի դերը կարող էր անցնել: Դա պայմանավորված էր այն ակնհայտ իրողությամբ, որ Թուրքիայից բացի, քրդերով սկսեցին հետաքրքրվել ինչպես սիրիական իշխանությունները, այնպես էլ ընդդիմությունը՝ փորձ անելով քրդական հոծ համայնքի հնարավորությունները ծառայեցնել ի նպաստ իրենց քաղաքական շահերի: Միևնույն ժամանակ քրդերը, օգտվելով երկրում առկա ներքաղաքական լարվածությունից, փորձեցին օգտագործել «բարենպաստ» իրավիճակը հօգուտ իրենց ազգային և ռազմավարական շահերի: Հասկանալի է, որ քաղաքական իրադարձությունների գարգացումներին համընթաց քրդական գործոնի կարևորությունը Անկարայի համար հետզհետե վերածեց լրջագույն խնդրի, քանի որ իրենց ազգային ինքնության պահպանման համար պայքարող քրդերը, որոնք կազմում են Սիրիայի բնակչության մոտավորապես 10 տոկոսը, հիմնականում կենտրոնացված բնակվում են երկրի հյուսիսարևելյան հատվածում՝ թուրք-սիրիական սահմանի երկայնքով:

2012 թ. մարտին Սիրիական Բրդստանի ժողովրդական խորհուրդը՝ ժողովրդավարական միություն կուսակցության գլխավորությամբ, և Քրդական ազգային խորհուրդը հայտարարեցին ինքնավար «Արևմտյան Քրդստանի» ստեղծման մասին՝ ԱՖրին մայրաքաղաքով²: Քրդական ազգային խորհուրդը, որը ձևավորվել էր դեռևս 2011 թ. հոկտեմբերին, 16 ռազմաքաղաքական խմբավորումներ միավորող կառույց է և հովանավորվում է Աստուդ Բարզանու կողմից: Ենթադրվում էր, որ այն պետք է առավել վերահսկելի լիներ թուրքական հատուկ ծառայությունների համար: Ինչդրահարուց էր, թերևս, ժողովրդավարական միություն կուսակցությունը (ԺՄԿ), որն, ըստ թուրքական աղբյուրների, Քրդստանի աշխատավորական կուսակցության (այսուհետ՝ ԲԿԿ) սիրիական թևն է՝ Սալիհ Մուսլիմի գլխավորությամբ³: Չնայած այդ կառույցներից յուրաքանչյուրը կազմավորվել էր քրդական

ազգայնականության հենքի վրա, այնուամենայնիվ, նրանք լուրջ գաղափարական հակասություններ ունեին իրենց մոտեցումներում՝ թե Բաշար Ասադի վարչակարգի, թե Թուրքիայի նկատմամբ: Այնուամենայնիվ շահեկան քաղաքական իրողությունների պարագայում քրդական կազմակերպություններին հաջողվեց շրջանցել ներքին տարածայնությունները, ինչը հազվադեպ երևույթ է քրդական իրականության մեջ, և միավորվել ինքնավարության տեսլականի շուրջ՝ կայացած փաստի առաջ կանգնեցնելով Անկարային:

Եվս մեկ քրդական ինքնավար մարզի կազմավորումն իր սահմանագծին խիստ անհանգստացնում է թուրքական իշխանություններին, որոնք ստիպված են համակարգել ինչպես ռազմաքաղաքական, այնպես էլ հետախուզական ողջ ներուժը՝ կանխարգելելու սիրիական քրդերի համախմբման գործընթացը և փորձելու միավորել նրանց Սիրիական ազգային խորհրդին:

Քրդական հարցը Մերձավոր Արևելքի անլուծելի խնդիրների համատեքստում առկա է նաև ԱՄՆ-ի արտաքին քաղաքական օրակարգում. որքան մեծ կլինի քրդերի համագործակցության պատրաստակամությունն ապագայում, այնքան ԱՄՆ-ն ավելի մեծ պատասխանատվություն կստանձնի քրդական հարցի հետագա ամբողջական կարգավորման գործընթացում: Ինչպես Անկարան, այնպես էլ Վաշինգտոնը լուրջ քայլեր են ձեռնարկում քրդերին սիրիական արմատական ընդդիմության հետ մերձեցնելու՝ Վաշինգտոն բանակցությունների հրավիրելով Քրդական ազգային խորհրդի առաջնորդներին⁴: Սակայն քրդական նկրտումները և ամբիկյան հետաքրքրություններն այս անգամ ևս անհամատեղելի էին:

Ակնհայտ է, որ Դամասկոսին հաջողվում էր վերահսկել երկրի հյուսիսարևելյան շրջանները մասամբ PKK-ի և նրա տեղային կառույցի՝ ԺՄԿ գինյալ խմբավորումների աջակցությամբ: Զանալով թուրքացնել PKK-ի ազդեցությունը սիրիական քրդերի վրա՝ ԱՄՆ-ը և Թուրքիան սկսեցին հետևողականորեն համագործակցել Հյուսիսային Իրաքի քրդական ինքնավարության նախագահ Աստուդ Բարզանու հետ, ով, ինչպես հայտնի է, աներկբա հեղինակություն է տարածաշրջանի քուրդ ազգաբնակչության համար⁵: Բարզանուն առավել կանխատեսելի դարձնելու նպատա-

² Западный Курдистан: Сирийские курды провозгласили автономию на границе с Турцией. <http://www.regnum.ru/news/1507822.html#ixzz2DjFpsIB>

³ Suriye'de Batı Kürdistan kurulabilir! <http://www.haber7.com/ortadogu/taber/906058-suriyede-bati-kurdistan-kurulabilir>

⁴ Syrian Kurds, U.S. meet to streamline opposition to Assad; <http://www.ekurd.net/mismas/articles/misc2012/5/syriakurd494.htm>

⁵ Denise N., Syrian Kurdish Cards, <http://www.ekurd.net/mismas/articles/misc2012/3/syriakurd450.htm>

կով թուրքական իշխանությունները ակտիվացրին փոխադարձ այցելությունների ճնշաչափը:

2012 թ. ապրիլին Բարզանու՝ Թուրքիա կատարած այցելության ժամանակ կողմերը վկայեցին վերջին ամիսներին իրենց միջև ամրապնդվող «բարեկամական հարաբերությունների» մասին⁶: Բացի դրանից, Թուրքիան փորձեց Բարզանուց երաշխիքներ կորզել՝ Ասադի վարչակարգի դեմ սիրիական ընդդիմությանն աջակցելու համար: Անհրաժեշտ էր նաև հակազդել ժողովրդավարական միություն կուսակցության անընդհատ աճող հեղինակությանը: Նշենք, որ այդ կուսակցությունը գործում էր՝ անտեսելով Հյուսիսային Իրաքում Քրդստանի տարածաշրջանային կառավարությանն ու Բարզանուն՝ զինված պայքար ծավալելով PKK նպատակների իրականացման համար և չընդունելով Թուրքիայի հետ բարեկամական հարաբերությունների հնարավորությունը⁷:

Անկարայի ճնշման տակ Բարզանին փորձեց չեզոքացնել ԺԿԿ-ին սիրիական Քրդստանի քաղաքական թատերաբեմից, իսկ Էրբիլում կազմակերպված՝ Սիրիայի քրդական կուսակցությունների հանդիպման ժամանակ նա բացահայտորեն խոստացավ «յուրաքանչյուր քրդի, ով կմիանա սիրիական ընդդիմությանը և կպայքարի ԺԿԿ պարտիզանների դեմ Սիրիայի քրդական հատվածում, ամսական 400 ԱՄՆ դոլար վճարել»⁸:

Իրադրությունը փոխվեց Սիրիական ազգային խորհրդի՝ հուլիսի 2–3–ը Կահիրեում անցկացված համաժողովի ժամանակ⁹, որի նպատակն էր ուղղորդել քրդերին միանալու սիրիական ընդդիմությանը: Համաժողովից օրեր առաջ թուրքական իշխանությունների աջակցությամբ Սիրիայի ազգային խորհուրդը գլխավորեց ազգությամբ քուրդ Աբդելբասսետ Սիդան: Այդ նշանակումը միտված էր քուրդ առաջնորդների հետ ընթանալիք բանակցություններն առավել արդյունավետ դարձնելուն, սակայն համաժողովի ժամանակ սիրիական ընդդիմությունը մերժեց քրդերին հետաստալան Սիրիայում վարչական ինքնավարության կարգա-

վիճակ տրամադրել, որի պատճառով քրդական պատվիրակությունը լքեց բանակցությունները:

Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադի պատասխան քայլը քաղաքական ճշգրիտ հաշվարկ էր. նա, ի հակադրություն ընդդիմությանը, երկրի քուրդ ազգաբնակչությանը լայն ինքնավարության հնարավորություն տրամադրեց: Ասադի այդ որոշումը սիրիական ճգնաժամի պայմաններում կարելի է ամենահաջողված քայլը համարել, երբ սիրիական բանակը լքեց քրդական բնակավայրերը՝ փաստացի իշխանությունը հանձնելով քրդերին: Երանց ձեռքն անցան տեղական ինքնակառավարման բոլոր մարմինները Թուրքիայի սահմանակից Քոբանի, Աֆրին, Դարիթ, Ամուդե և ալ-Լյեռադա շրջաններում¹⁰:

Սիրիայի տարածքում ղեկավարող քրդական ինքնավարության կազմավորման հնարավորությունը հետաքրքրեց Իրաքի քրդերի առաջնորդ Մասուդ Բարզանուն, որը, որպես փորձառու քաղաքական գործիչ, քուրդ ժողովրդի ազգային շահը վեր դասեց Թուրքիայի հետ «բարեկամական հարաբերություններից»: Էրբիլում անցկացված տարածաշրջանային կառավարության նիստի ժամանակ նա հայտարարեց, որ սիրիական քրդական կազմակերպությունները միավորման դեպքում կստանան իր անվերապահ աջակցությունը¹¹:

Հուլիսի 9–ին՝ Էրբիլում Բարզանու նախաձեռնությամբ Քրդական ազգային խորհրդի և ԺԿԿ-ի միջև կայացած հանդիպման ժամանակ, պայմանավորվածություններ ձեռք բերվեցին հիմնական վիճահարույց խնդիրների շուրջ: Ստորագրվեց համաձայնագիր՝ համագործակցության և Քրդստանի բարձրագույն խորհուրդ ստեղծելու մասին, որը կստանձներ սիրիական Քրդստանի ժամանակավոր ինքնավարության ղեկավար մարմնի գործառույթ և կներկայացներ Սիրիայի քրդերի շահերը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական հարթություններում¹²:

ԺԿԿ–PKK ազդեցության տակ գտնվող քրդական զինյալ խմբավորումները, որոնք փաստացի վերահսկում էին Սիրիայի հյուսիսային շրջանները, դեռևս 2011 թ. հոկտեմբերին հրաժարվել էին Քրդական ազգային խորհրդին միանալ, այժմ հայտա-

⁶ Barzani İstanbul'da çözum ariyor, siyaset.milliyet.com.tr/barzani-istanbul-da-cozum-ariyor-/siyaset/siyasetdetay/19.04.2012/1530385/default.htm

⁷ Ankara, Suriye'de bir Kürt oluşumunun olmayacağına inanıyor; <http://www.ilkehaber.com/haber/ankara,-suriyede-bir-kurt-olusumunun-olmayacağına-inaniyor-23033.htm>

⁸ Балмасов С. С., Курдская карта в битве за Сирию, <http://www.iimes.ru/rus/stat/2012/11-07-12.htm>

⁹ Fights break out at Syrian opposition meeting <http://www.reuters.com/article/2012/07/03/us-syria-opposition-idUSBRE86213V20120703>

¹⁰ Suriye Kürtleri özerklik yolunda; http://www.dha.com.tr/suriye-kurtleri-ozerklik-yolunda_342775.htm

¹¹ Suriye'de kürt hareketleri, http://www.orsam.org.tr/tr/trUploads/Yazilar/Dosyalar/201286_127%20yeniarporson.pdf, Жигалкина О.И., Курдский вопрос в Сирии и турецко-курдские отношения; <http://www.iimes.ru/?p=15311>

¹² Barzani Suriye Kürtlerini birleştirdi! <http://www.demokratikhaber.net/dunya/barzani-suriye-kurtlerini-birlestirdi-h10014.htm>

բարեցին, որ պատրաստ են համագործակցելու՝ կողմ դնելով իրենց միջև առկա տարածայնությունները՝ Իրաքյան Քրդստանի օրինակով Սիրիայի հյուսիսարևելյան շրջաններում կազմավորել ինքնավարություն¹³:

Այդ համաձայնագիրն, իհարկե, լուրջ մտահոգության պատճառ դարձավ թուրքական իշխանությունների համար. Հյուսիսային Սիրիայում քրդական ինքնավարության ստեղծումը միևնույն ժամանակ մեծացնում է անկախ Քրդստանի կազմավորման հավանականությունը Թուրքիայի հարավային սահմանին: Ակնհայտ է, որ Էրդողանի կառավարության անհրաժեշտ է ամեն գնով խոչընդոտել PKK սիրիական կառույց ժՄԿ-ի և Բարզանու հովանավորյալ Քրդական ազգային խորհրդի քաղաքական մերձեցման ու համագործակցության ծավալվող գործընթացին:

Բարզանու հետ հերթական բանակցությունների նպատակով Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ա. Դավութջյուլում օգոստոսի 1-ին այցելեց Էրբիլ: Նա մեկ անգամ ևս փորձեց սակարկել Բարզանու՝ Սիրիական ազգային խորհրդին միանալու խնդիրը, որի ղեկավար Աբդեբասսետ Սիդան նույնպես ներկա էր այդ բանակցություններին¹⁴: Այդ հանդիպմանը հրավիրված էին նաև Նոր ձևավորված Քրդստանի բարձրագույն խորհրդի ներկայացուցիչները, որոնք բացառապես միայն Քրդական ազգային խորհրդի անդամներ էին: Չեզոքացնելով ժՄԿ-ին բանակցային գործընթացից՝ Դավութջյուլիս հաջողվեց Քրդստանի բարձրագույն խորհրդի ձևավորումից ընդամենը մի քանի օր անց արդեն խզել քրդական կազմակերպությունների նորահայտ մերձեցումը և տարանջատել միավորման փորձ կատարող քրդական ուժերը: Այնուամենայնիվ Բարզանուն հերթական անգամ հաջողվեց դիմակայել Անկարայի ճշումներին, խույս տալ Սիրիական ազգային խորհրդին միանալու պարտադրանքներից և սահմանափակվել միայն «Սիրիայում ահաբեկչության և էքստրեմիզմի դեմ համատեղ պայքարի մասին» անորոշ ձևակերպմամբ համաձայնագրի ստորագրմամբ¹⁵:

Ի հակադրություն սիրիական ընդդիմությանն աջակցելու Անկարայի նախաձեռնությունների՝ Դամասկոսը կրկին փորձ արեց որպես հակազդեցության լծակ կիրառելու «քրդական զենքը» որ-

պես ճնշամիջոց օգտագործելով իր վաղեմի «գործընկեր» PKK-ն: Սիրիական իշխանությունների և PKK-ի միջև դեռևս 1998 թ. ընդհատված հարաբերությունների վերականգնման միջնորդի դերը ստանձնեց ժՄԿ-ն:

Սիրիական հատուկ ծառայությունների և PKK զինվորական ղեկավարության միջև գաղտնի գործարք կնքվեց 2012 թ. մարտի 17-ին Քամըշլուում՝ թուրք-սիրիական սահմանի վրա: Ըստ այդ համաձայնագրի՝ սիրիական կողմը PKK-ին խոստանում էր համակողմանի ռազմական և ֆինանսական աջակցություն Թուրքիայի տարածքում, մասնավորապես սիրիական փախստականների ճամբարներում ահաբեկչական գործողությունների իրականացման դիմաց¹⁶:

Թուրք-սիրիական սահմանին PKK ջոկատների վերազինումը սիրիական իշխանությունների կողմից առնվազն «բնական» պատենշ է ստեղծում Թուրքիայի հնարավոր ներխուժման ճանապարհին՝ միևնույն ժամանակ որպես հենակետ ծառայելով քուրդ զինյալների՝ Թուրքիայի տարածքում ահաբեկչական գործողություններ իրականացնելու համար: Ներկայումս այս շրջաններում PKK – ժՄԿ պարտիզանական ջոկատները գործողությունների անսահմանափակ ազատություն ունեն, և ակնհայտ է, որ Թուրքիայի կողմից Սիրիայի ներքաղաքական խնդիրներին ռազմական միջամտության դեպքում նրանք վերսկսված համագործակցության պայմաններում հստակ պրոսասադական կողմնորոշում կունենան: Անշուշտ, սա է այն առանցքային գործոններից մեկը, որը հետ է պահում Թուրքիային՝ Սիրիա անմիջական ռազմական ներխուժումից:

Հետևելով Թուրքիայի տարածաշրջանային հայեցակարգային հավակնությունների էվոլյուցիային՝ նկատելի է դառնում մեկ հստակ միտում ևս՝ օգտագործել PKK-ն որպես «այլընտրանքային պատժամիջոց». թուրքական իշխանությունները հնարավորին շահարկում են PKK ահաբեկչական գործունեությունը՝ այն որպես Թուրքիայի ազգային անվտանգության և տարածքային ամբողջականության պահպանման լրջագույն սպառնալիք ներկայացնելով: PKK-ն դարձել է այն «բնական դրդապատճառը», որը հնարավորություն է տալիս թուրքական զինված ուժերին անարգել ներխուժել հարևան երկրներ՝ այնտեղ տեղակայված ռազմաքաղաքների ոչնչացման պատրվակով: Թուրքական

¹³ Bütün Boyutlarıyla Suriye krizi ve Türkiye, <http://www.bilgesam.org/tr/images/stories/rapor/rapor52.pdf>

¹⁴ Жигалина О.И., Курдский вопрос в Сирии и турецко-курдские отношения; <http://www.iimes.ru/?p=15311>

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Балмасов С. С., Курдская карта в битве за Сирию, <http://www.iimes.ru/rus/stat/2012/11-07-12.htm>

իշխանություններն այսօր հետևողականորեն իրականացնում են PKK-ն որպես խաղաքարտ հնարավոր բոլոր միջոցներով տարածաշրջանային գործընթացներում կիրառելու քաղաքականություն:

Այդ ամենին զուգահեռ պետք է նշել, որ ներկայումս թուրք քաղաքական վերնախավի, ինչպես նաև որոշ փորձագետների և վերլուծաբանների մոտ ամրագրվում է այն տեսակետը, որ PKK հարցի լուծման ռազմական ճանապարհը մտել է փակուղի, և տարածաշրջանային ու աշխարհաքաղաքական նոր իրողություններն ուղղակիորեն պարտադրում են նստել բանակցությունների սեղանի շուրջ¹⁷:

Անդրադառնալով Սիրիայի տարածքում քրդական ինքնավարության դեյուրե կայացման հնարավորությանը՝ կարելի է փաստել, որ ճգնաժամի հանգուցալուծման յուրաքանչյուր տարբերակի դեպքում էլ քրդական ինքնավարության հաստատման գործընթացն այլևս անդառնալի է, և Թուրքիան ստիպված է լինելու հաշտվել իրադարձությունների զարգացման նման սցենարի հետ:

¹⁷ P.S. Հողվածն արդեն հանձնված էր տպագրության, երբ հայտնի դարձավ PKK առաջնորդ Աբդուլլահ Օջալանի և Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի ներկայացուցիչների միջև ընթացող բանակցային գործընթացի մասին: Բանակցություններ սկսելով Օջալանի հետ՝ Թուրքիայի վարչապետը փորձեց հակակշռել PKK ազդեցությունը Հյուսիսային Իրաքի քրդական ինքնավարության նախագահ Մ. Բարզանու՝ նաև Թուրքիայի քրդերի մոտ աճող հեղինակությանը: Ավստրալիա է, որ ԱԶԿ առաջնորդներին փազրովեց վերահսկել և ուղղորդել Բարզանու տարածաշրջանային քաղաքականությունը: Վերջինս քրդերի համախմբման և համընդհանուր քրդական առաջնորդի վերածելու հավակնությունները, թերևս, լրջորեն անհանգստացնում են թուրքական իշխանություններին, և Օջալանի «ղերի» վերաաթմուրումը քաղաքական լուրջ հաշվարկ էր Էրդողանի կողմից Թուրքիայի քրդերի քաղաքական կողմնորոշման համար նաև 2014 թ. սպասվող նախագահական ընտրություններից առաջ:

ՎԱՀՐԱՄ ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՎՐԱ

Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները վերջին տարիներին փոխվել են ոչ միայն ճևի, բովանդակության, այլ նաև կազմակերպակառուցվածքային առումներով: «Ռազմավարական խորություն» կոչվող հայեցակարգի և «Հարևանների հետ զրո խնդիրներ» բազմիցս քննարկված ուղղություններից բացի, առավել ուշագրավ է այն հանգամանքը, թե քաղաքական ու գաղափարական կողմնորոշումները կյանքի կոչելու համար ինչպիսի գործիքակազմ և ռեսուրսներ են օգտագործվում: Այս հոդվածի նպատակն է վերլուծել, թե նախորդ տարիներին համեմատ ինչպիսի փոփոխությունների են ենթարկվել արտաքին քաղաքականության իրականացման կազմակերպական և բովանդակային սկզբունքները, ինչպիսի նոր դրսևորումներ կարող է ունենալ նման քաղաքականությունը: Այդ նպատակով համեմատական կերպով հոդվածում քննարկվում են 2008–2013 թթ. ընթացքում Թուրքիայի արտաքին գործերի նախարարների կողմից դեսպանների հետ կազմակերպվող ամենամյա համաժողովները և նրանցում բարձրացված խնդիրները:

Դիվանագետների հեղ ամենամյա հանդիպումներ

Թուրքիայի արտաքին քաղաքական գերատեսչությունը տասնամյակներ շարունակ կենտրոնական դեր է կատարել ոչ միայն արտաքին աշխարհում Թուրքիայի շահերի ներկայացման, այլ նաև ներպետական կյանքում: Տասնամյակներ շարունակ դիվանագիտական կորպուսը թուրք բարձրաստիճան գինվորականների, դատաիրավական համակարգի ներկայացուցիչների հետ

միասին համարվել է քեմալականության ողնաշարը: Հետևաբար քեմալականության կերպափոխումը միայն զինվորականության դիրքերի թուլացմամբ հնարավոր չէր իրականացնել, ուստի «Արդարություն և զարգացում» կուսակցության համար էական էր արտաքին քաղաքականության ակտիվությանը և դիվանագետների սերնդափոխությանը զուգահեռ ձգտել փոխելու դիվանագետների հետ աշխատանքի սկզբունքները և մեթոդները: Հետևաբար վերջին տարիներին բազմաթիվ առիթներով խրատալստիկ թուրքական ակտիվ արտաքին քաղաքականության ձեռքբերումների պատճառներից մեկը Անկարա – դիվանագիտական ներկայացուցչություններ կապի խորացումն է և համակարգումը: Դիվանագիտական կորպուսի և դեսպանների կողմից այս հանդիպումների վերաբերյալ հնչող գնահատականները տարբեր են: Ոմանք բարձր են գնահատում նման հանդիպումները, քանի որ խորհրդակցությունների ընթացքում շահագրգիռ ինստիտուտների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի են ունենում քննարկումներ, հստակեցվում են խնդիրները և ընդհանուր անելիքները, մյուսների կարծիքով նման հանդիպումները կարևոր են, քանի որ դեռ Դավութօղլուն չի սկսում իր խիստ ակադեմիական դասախոսությունները և տեսական խնդիրների քննարկումը: Թուրքական ազդեցիկ լրատվամիջոցների սյունակագիրները ևս քննադատում են նման ձևաչափով անցնող քննարկումները՝ Դավութօղլուն մեղադրելով այն բանում, որ համաժողովից համաժողով նա ավելացնում է հոետորաբանական շեշտադրումներ և դեսպանների հետ հանդիպումները վերածում «մեկ դերասանի թատրոնի», միակողմանիորեն պարտադրում սեփական հայացքները, հավակնտ կերպով խոսում Թուրքիայի արտաքին քաղաքականության հզորության և առասպելական էության, համաշխարհային գործընթացների ձևավորման գործում և «պատմության արարման» ընթացքում Թուրքիայի առանցքային դերի մասին և այլն՝ մնալով անտարբեր քննադատությունների և տարաբնույթ հարցերի նկատմամբ²: Նույն սկզբունքով են աշխատում նաև մյուս գերատեսչությունների ղեկավարները, որոնք, երկրորդելով Թուրքիայի վարչապետին և ԱԳ նախարարին, ոչ միայն զովաբանում են արտաքին քաղաքականության նվաճումները, այլ նաև օգտագործում են առիթը՝ քննադատելու այն

¹ Հարցազրույց Անկարայի TOBB համալսարանի պրոֆեսոր Բահադիր Պեյիվանթյուրքի հետ, 25.11.2012 թ, Անկարա:

² Barçın Yılmaz, Turkey needs active ambassadors to pacify PM and FM, Hürriyet Daily News, 08.01.2013.

երկրներն ու կառույցները, որոնք անցած տարվա ընթացքում քննադատել են Թուրքիային:

Համաժողովների հետ կապված՝ երկու կարևոր ևս հանգամանք կա. ա) բացառությամբ առաջին համաժողովի, մյուսներն ունեցել են երկու փուլ, առաջին հանդիպումը տեղի է ունենում մայրաքաղաքում, իսկ երկրորդ փուլը՝ քաղաքներից մեկում, բ) բացառությամբ առաջին համաժողովի, մյուսներին ներկա են գտնվել ինքնավարությունների ղեկավարներ, վարչապետներ և արտգործնախարարներ այլ երկրներից:

2008 թ. հունիսի 15–18–ը Ալի Բարաջանի նախաձեռնությամբ Անկարայում առաջին անգամ կազմակերպվեց թուրք դիվանագետների համաժողով, որի խորագիրը հետևյալն էր՝ «Թուրքիայի արտաքին քաղաքականությունը. կողմնորոշումներ և առաջնահերթությունները»: Միջազգային հարաբերությունների ուսումնասիրությունների ասոցիացիայի նախագահ Բուրաք Յալըմի կարծիքով առաջին համաժողովը մնաց սովերում, քանի որ 2008 թ. Թուրքիայի արտաքին հարաբերությունները այնքան էլ հանրահայտ չէին³:

Դեսպանների համաժողով 2009 թ. տեղի չունեցավ, փոխարենը միայն 2010 թ. հունվարի 4–8–ը հնարավոր եղավ Անկարայում, ապա Մարդինում կազմակերպել 2–րդ համաժողովը: Մեկ տարի ընդմիջում տալու պատճառների մասին հայտարարություն չի արվել, հետևաբար բուն պատճառներն անհայտ են: 2009 թ. մայիսի 1–ին՝ Ա. Դավութօղլուի արտգործնախարար նշանակվելուց հետո, սա նրա առաջին համաժողովն էր: Երկրորդ հանդիպման խորագիրը հետևյալն էր՝ «Ժողովրդավարություն, անվտանգություն և կայունություն. արտաքին քաղաքականության տեսլականը 2010 թ.»⁴: Համաժողովին ներկա էին Բրազիլիայի, Գերմանիայի, Ճապոնիայի արտգործնախարարները, Կիպրոսի թուրքական հատվածի նախագահ Մեհմեթ Ալի Թալաթը, Պաղեստինի պետության ղեկավար Մադմուդ Աբասը: Հիմնական ելույթում Դավութօղլուն նշեց, որ երկար ժամանակ Թուրքիան ակտիվորեն չի մասնակցել տարածաշրջանային գործընթացներին, սակայն Թուրքիայի աշխարհագրական դիրքը պարտադրում է ակտիվ մասնակցություն եՄ–ի և համաշխարհային գոր-

³ Burak Yalım, 4. Büyükelçiler Konferansı: “Türk Dış Politikasında “Durmak ve Anlamak”, 2011, <http://www.tuicakademi.org/index.php/yazarlar/1/34-burak-yalim/2554-4-buyukelciler-konferansi-turk-dis-politikasinda-durmak-ve-anlamak>

⁴ No: 244, 30 Aralık 2009, İkinci Büyükelçiler Konferansı Hk., http://www.mfa.gov.tr/no_-244_-30-aralik-2009_-ikinci-buyukelciler-konferansi-hk_tr.mfa

ծերին: Նրա խոսքերով «Թուրքիան ունակ է առավել ակտիվ արտաքին քաղաքականություն վարելու, քանի որ դրա համար կան պատմական հիմքեր, և ժամանակին միայն 5-6 պետություն կարող էին Թուրքիայի հետ մրցել ակտիվ արտաքին քաղաքականության առումով»⁵: Նրա խոսքերով տարածաշրջանային ճգնաժամերը պետք չէ անտեսել, այլ պետք է անհրաժեշտ ջանքեր ներդնել դրանց լուծման հնարավորությունների ուղղությամբ⁶: Համաժողովի ընթացքում քննարկվեցին Թուրքիայի արտաքին քաղաքականության օրակարգային մի քանի խնդիրները՝ ըստ տարածաշրջանների, նշվեց նաև 2010 թ. 26 նոր դիվանագիտական առաքելությունների բացման մասին: Այս հանդիպումը կարևոր էր նրանով, որ Դավութօղլուն, առաջին անգամ հանդես գալով ԱԳ նախարարի պաշտոնում, ներկայացրեց արտաքին հարաբերությունների զարգացման իր տեսլականը ոչ միայն 2010 թ., այլ նաև մինչև 2023 թ. ընկած ժամանակահատվածի համար:

2011 թ. հունվարի առաջին տասնօրյակում տեղի ունեցած երրորդ համաժողովի խորագիրը հետևյալն էր՝ «Տեսլական դիվանագիտություն. Համաշխարհային և տարածաշրջանային կարգը Թուրքիայի դիտանկյունից»: Այս համաժողովին ներկա էին Հունաստանի վարչապետ Գեորգի Պապանդրեուն, ինչպես նաև Աֆղանստանի և Պակիստանի արտգործնախարարները: Վերջիններս ելույթով հանդես եկան Անկարայում, իսկ Պապանդրեուն՝ Էրզրումում⁷: Համաժողովի վերաբերյալ ԱԳՆ-ի տարածած հաղորդագրության մեջ նշվում էր, որ երրորդ համաժողովի նպատակն էր ճշգրտել երկրորդ համաժողովի ընթացքում բարձրացված խնդիրների լուծման հարցում արժանագրված առաջընթացը, քննարկել արտաքին քաղաքականության օրակարգում և տարբեր տարածաշրջաններում առաջացած նոր խնդիրները և առաջարկել լուծումներ: Հաղորդագրությունում նաև նշվում էր, որ դեսպանների հետ նման հանդիպումները դարձել են ԱԳՆ-ի ինստիտուցիոնալ մշակույթի մաս⁸: Համաժողովի ընթացքում եղավ մեկ ընդհանուր նիստ՝ «ժողովրդավարություն, մարդու իրավունքներ, օրենքի գերակայություն» խորագրով, և մի քանի այլ նիս-

տեր՝ «Մեր ԵՄ անդամակցության գործընթացի հիսգերորդ տարվա հաշվեկշիռը: Բանակցություններ և բարեփոխումների գործընթացը», «Տնտեսական և առևտրային հարաբերություններ», «Մշակույթ և հանրային դիվանագիտություն» և «Արտերկրում ապրող թուրքերը և հյուպատոսական ծառայություններ» խորագրերով: Նիստերի խորագրերը հուշում են, որ առանձին ոլորտներում քննարկվել են հստակ խնդիրներ, դրվել նպատակներ: Դավութօղլուն իր ելույթում նշեց, որ թուրք դիվանագետները պետք է գործեն հրշեջների նման և անմիջապես շտապեն այն վայրերը, որտեղ Թուրքիայի շահերը վտանգված են, սակայն թուրք դիվանագետները պետք է լինեն նաև պլանավորողներ⁹: Նման ձևաչափով անցկացվող հանդիպումները նաև լավ հնարավորություն են, որպեսզի առանձին ոլորտների և ուղղությունների պատասխանատուները կատարեն բավական ինքնավատահ, քննարատական և ոչ միանշանակ հայտարարություններով: Օրինակ՝ ԵՄ գործերի նախարար և գլխավոր բանակցող Էգեմեն Բաղըջը հայտարարեց, որ Թուրքիան այժմ ի վիճակի է բացելու ԵՄ-ի հետ բանակցությունների և 16 փաթեթ՝ ի հավելումն արդեն բացված 13-ի և կարճաժամկետ և միջնաժամկետ առումներով փակելու 12-ը: Նա հատուկ ուշադրություն հատկացրեց էներգետիկային վերաբերող փաթեթին՝ նշելով, որ էներգետիկ ոլորտում ամենաշատ խնդիր ունեցող ԵՄ անդամ երկրի կողմից այս փաթեթի վրա արգելված դնելը տրագիկոմեդիա է հիշեցնում: Թեև նա չհստակեցրեց երկրի անվանումը, սակայն հասկանալի էր, որ խոսքը կիպրոսի մասին էր: Նա նաև շնորհակալություն հայտնեց դեսպաններին Թուրքիայի նկատմամբ անարդարությունների հետևանքները նվազագույնի հասցնելու և Թուրքիայի ճշմարտացիությունը բոլորին հասանելի դարձնելու համար¹⁰:

Զորրոգ հանդիպումը, որը տեղի ունեցավ 2011 թ. դեկտեմբերի 23-30-ը, ուներ հետևյալ խորագիրը՝ «Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական առանցքները. Ժողովրդավարական արժեքները և ազգային շահերը»: Հանդիպմանը ներկա էր Սերբիայի, Շվեյցարիայի և Ուկրաինայի արտգործնախարարները, միջոցառման երկրորդ փուլն անցկացվեց Էդիրնեում: Այս հանդիպման ընթացքում Դավութօղլուն առաջ մղեց դեռ երրորդ համաժողովի ընթացքում առաջ քաշված «խելացի ազգ» դրույթը՝ այն ներկայացնելով որպես «խելացի մարդ»-«խելացի ազգ»-

⁵ Turkish diplomat says Turkey needs a new powerful vision in foreign policy, Today's Zaman, 04.01.2010
⁶ Müge Özbaylı, 2.Büyükkelçiler Konferansı: Ankara'da başladı, <http://www.abvizyonu.com/basindan/2byuyukelcilere-konferansi-ankarada-basladi.html>
⁷ (Dip) Third Conference of Ambassadors Begins, [http://www.threfreelibrary.com/\(DIP\)+THIRD+CONFERENCE+OF+AMBASSADORS+AND+BEGINS.-a0245701735](http://www.threfreelibrary.com/(DIP)+THIRD+CONFERENCE+OF+AMBASSADORS+AND+BEGINS.-a0245701735)
⁸ Üçüncü Büyükkelçiler Konferansı Sonuç Bildirisi, <http://www.mfa.gov.tr/ucuncu-buyukelcilere-konferansi-sonuc-bildirisi.tr.mfa>

⁹ Third Ambassador's Conference In Ankara, <http://www.ankarasene.com/haber/third-ambassadors-conference-in-ankara-469.html>
¹⁰ Egemen Bağış, 3. Büyükkelçiler Konferansı, <http://egemenbagis.com/tr/1818>

«խելացի դեսպան» եռամսանության մաս: Նա նաև պնդեց, որ դեսպանները պետք է լինեն քաջատեղյակ պատմության, տնտեսագիտության, ձեռնարկատիրության վերաբերյալ այնպիսի խորությամբ, ինչպես գիտնականները, և պետք է գործեն զգուշությամբ՝ ենթադրելով, որ նրանց ուսերին նստած են աղավիհներ¹¹:

Նա նաև նշեց, որ թեև սառը պատերազմի ավարտի ժամանակ Թուրքիան հաղթող կողմում էր, սակայն քաղաքական կամքի բացակայության և կառավարման համակարգի խոցելիության պատճառով 1991 թ–ից 2001 թ. ընկած ժամանակահատվածը Թուրքիայի համար դարձավ կորսված տասնամյակ, իսկ համընդհանուր քաղաքականության համար այն պետք է համարել «աշխարհաքաղաքական երկրաշարժի» տասնամյակ: Դավութօղլուն նաև նշեց, որ հարկավոր է անել ամեն ինչ, որպեսզի կորսված տասնամյակի բացասական հետևանքները վերացնելու համար դիվանագետներն անեն հնարավորինը: Այդ նպատակով նա դեսպաններին խորհուրդ տվեց ստեղծել 25–րդ ժամը, եթե օրվա ընթացքում չի հաջողվել անել պլանավորածը, և չքնելը պետք է արգելված չլինի բարձրաստիճան դիվանագետների համար: Նա նաև ընդունեց, որ թեև Թուրքիայի ԱԳՆ–ն բավական ակտիվ է, սակայն մյուս երկրների համեմատությամբ ունի բավական սահմանափակ աշխատակազմ: Նա հավելեց, որ 2001–2011 թթ. ընկած ժամանակահատվածը պետք է համարել վերականգնման, իսկ մինչև 2023 թ. հարկ է աշխատել ամրապնդման կարգախոսի ներքո¹²:

Դավութօղլուի ելույթի առավել ուշագրավ հատվածներից էին հայկական և հրեական համայնքների վերաբերյալ նրա կատարած դիտարկումները: Ըստ Դավութօղլուի՝ Թուրքիան լքած յուրաքանչյուր հայ և հրեա թուրքական Սփյուռքի մաս են կազմում, հետևաբար հարկավոր է կապ հաստատել տարբեր երկրներում ապրող Թուրքիայի նախկին քաղաքացի համարվող հայերի և հույների հետ և նրանց ներկայացնել համատեղ մշակույթն ու հազարամյա պատմությունը՝ նկատի ունենալով «միասնական պատմության տարածաշրջանի կամար, միասնական քաղաքացիություն Անատոլիայում»¹³ հարգախոսը: Նա դեսպաններին

¹¹ Burak Yalim, 4. Büyükelçiler Konferansı: “Türk Dış Politikasında “Durmak ve Anlamak”, 2011, <http://www.tuicakademi.org/index.php/yazarlar/34-burak-yalim/2554-4-buyukelciler-konferansi-turk-dis-politikasinda-durmak-ve-anlamak>.

¹² Burak Yalim, 4. Büyükelçiler Konferansı: “Türk Dış Politikasında “Durmak ve Anlamak”, 2011, <http://www.tuicakademi.org/index.php/yazarlar/34-burak-yalim/2554-4-buyukelciler-konferansi-turk-dis-politikasinda-durmak-ve-anlamak>.

¹³ Նույն տեղում:

կոչ արեց արդյունավետ աշխատանք տանելու այդ ուղղությամբ և ամուր կապեր հաստատելու դիվանագիտական առաքելության երկրի ժողովրդի հետ: Այս հայտարարությունը կարևոր էր այն առումով, որ առաջին անգամ Թուրքիայի արտգործնախարարը նման հայտարարություն էր կատարում հայերի մասին:

2013 թ. հունվարին տեղի ունեցավ հերթական համաժողովը՝ «Անարդասիրական դիվանագիտություն» խորագրով, որի մանրամասները կներկայացվեն ստորև:

«Հումանիտար դիվանագիտության» առանձնահատկությունները

Ս. թ. հունվարին Անկարա և Իզմիր (Ձմյուռնիա) քաղաքներում տեղի ունեցավ դիվանագիտական կորպուսի հետ հինգերորդ ամենամյա հանդիպումը: Հինգերորդ համաժողովի խորագիրը տարբերվում էր նախորդներից, քանի որ առաջին անգամ միջոցառումն անցնում էր գործնական խորագրի ներքո: Հանդիպմանը ներկա էին նաև Սինգապուրի, Շվեդիայի և Բրազիլիայի արտաքին գործերի նախարարները¹⁴: Օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությունը միջոցառմանը որոշակիորեն նպաստեց խորագրի շուրջ տարաբնույթ գործնական քննարկումների անցկացմանը: Առավել ուշագրավ էր Շվեդիայի և Բրազիլիայի արտգործնախարարների մասնակցությունը համաժողովին, ավելին՝ Բրազիլիայի արտգործնախարարը երկրորդ անգամ էր մասնակցում թուրք դեսպանների հետ հանդիպմանը: Թուրքիայի արտաքին քաղաքականության իրագործման ընթացքում Բրազիլիան և առավելապես Շվեդիան էական աջակցություն են ցուցաբերել: Բավական է հետևել Թուրքիայի վերաբերյալ քվեարկությունների վիճակագրությանը կամ ԵՄ–ի անդամակցության գործընթացում Շվեդիայի անվերապահ աջակցության դրսևորումներին: Շվեդ դիվանագետները ևս, ավարտելով դիվանագիտական առաքելությունը Թուրքիայում, շտապում են ընդգծված դրական լույսի ներքո հուշագրություններ գրել Թուրքիայի իշխանությունների և թուրք ժողովրդի մասին¹⁵:

Այս համաժողովին Շվեդիայի և Բրազիլիայի գլխավոր դիվանագետների մասնակցությունը պայմանավորված էր նաև մեկ այլ

¹⁴ Beşinci Büyükelçiler Konferansı, <http://www.mfa.gov.tr/besinci-buyukelciler-konferansi.tr.mfa>

¹⁵ Ann Dismorr, Turkey Decoded, London, San Francisco: Saqi, 2008; Henrik Liljegen, From Tallin to Turkey: As a Swede and Diplomat, Merkez Kitapçılık, Istanbul, 2004.

հանգամանքով: 2012 թ. սեպտեմբերին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի շրջանակներում Թուրքիան Բրազիլիայի և Շվեդիայի հետ հանդես եկավ «երեք մայրցամաքներից երեք միջին տերություն» նախաձեռնությամբ: Այդ նախաձեռնության մասին քիչ մանրամասներ են հայտնի, սակայն այդ երկու դիվանագետների մասնակցությունը վկայում է այն բանի մասին, որ Թուրքիան մտադիր է առավել խորացնել այդ երկրների հետ հարաբերությունները: Թուրքիայի երկրորդ և բազմակողմ հարաբերությունները Բրազիլիայի և Շվեդիայի հետ վերջին շրջանում այքն են ընկել տարաբնույթ համագործակցությամբ: Ավելին՝ երեք երկրների միջև համագործակցության հեռանկարները խորացնելու նպատակով երեք արտգործնախարարները՝ Կարլ Բիլդը, Անտոնիո Պատրիոտան և Անմեդ Դավլոթօլլուն, 2013 թ. հունվարի 5–ին Իզմիրում հայտարարեցին «Խաղաղության կառուցման եռակողմ համերաշխություն» կոչվող նոր խորհրդակցական կառույցի ստեղծման մասին: Ըստ Դավլոթօլլուի՝ այդ նախաձեռնության անգլերեն տարբերակը «Trilateral Solidarity for Building Peace» հատուկ այնպես էր ընտրված, որ ընդգծվեր մասնակից երկրների անգլերեն անվանումների առաջին տառերը¹⁶: Համաձայն համատեղ հայտարարության՝ կողմերը պարտավորվեցին համատեղ պայքարել միջազգային հանրությանը հուզող մի շարք մարտահրավերների դեմ (Արաբական վերածնունդ, Պաղեստինյան հարց, սհաբեկչություն, աղքատություն, կլիմայի փոփոխություն, ինտերնետ ազատություն և միջուկային զենքի չտարածում)¹⁷: Հայտարարությունում նաև նշվում էր, որ երեք երկրներն էլ իրենց հզորությունը կառուցում են՝ հենվելով ժողովրդավարության, հզոր տնտեսության, աշխարհագրական դիրքի, տարածաշրջանային ներգրավման, համաշխարհային գործընթացներում մասնակցության և այլ ընդհանուր արժեքների վրա: Այդ նպատակին հասնելու համար կողմերը որոշեցին կազմակերպել կանոնավոր խորհրդակցություններ՝ կարծիքների փոխանակման և ջանքերի մոտարկման նպատակով¹⁸: Հենվելով հայտարարության առաջնային և երկրորդային ուղեբնների վրա՝ կարող ենք կատարել մի քանի եզրահանգում: Նախ Թուրքիան ձգտում է ձևավորելու նորանոր դաշինքներ, որոնք նրան կօգնեն առավել հաջողված առաջ մղելու միջազգային հարաբերությունների այն օրակարգային հարցերը,

որոնցում հարկավոր են դաշնակիցներ: Դատելով վերոհիշյալ մարտահրավերների թվարկումից՝ Թուրքիան առավելապես շահագրգռված է իր անմիջական հարևանությամբ առկա խնդիրների կապակցությամբ ձեռք բերելու Շվեդիայի և Բրազիլիայի աջակցությունը, ինչպես նաև ընդլայնելու իր տնտեսական ներկայացվածությունը Ալանդյանկիլյայում և Հարավային Ամերիկայում: Այս երկու երկրները միջազգային հարաբերություններում ունեն էական դերակատարում, հետևաբար այդ երկու երկրների հետ հարաբերությունների խորացմամբ Թուրքիայի իշխանությունները ձգտում են շեշտելու համաշխարհային դերակատարության վերաբերյալ առկա հավակնությունները: Ընդ որում՝ նախկինում թե՛ Բրազիլիայի, թե՛ Շվեդիայի հետ արձանագրվել են համագործակցության մի շարք քաղաքական ծրագրեր: Հասկանալիորեն՝ Շվեդիան և Բրազիլիան նույնպես ունեն սեփական օրակարգը և Թուրքիայի միջոցով ձգտում են Մերձավոր Արևելքում ձեռք բերելու ազդեցության լծակներ, ներգրավելու թուրքական ներդրումներ և համախմբվելով ընդհանուր օրակարգի ներքո՝ ձգտում են առաջ մղելու ընդհանուր հարցեր: Այս առումով էզգեմեն Բաղըշի ելույթում տեղ գտած որոշ դրույթներ միտված էին առավել ընդգծելու Թուրքիայի դերակատարումը Մերձավոր Արևելքում: Նա նշեց, որ Մերձավոր Արևելքում տեղի ունեցած փոխակերպումներում Թուրքիայի ունեցած կարևոր դերակատարման հետևանքով Արևմուտքում էականորեն փոխվել է Թուրքիայի վերաբերյալ ընկալումը: «Այսօր, երբ ինչ–որ պաշտոնյա այցելում է տարածաշրջան իր երկրի քաղաքականությունը մշակելու համար, նա լսում է մեր կարծիքը, խորհրդակցում մեզ հետ»¹⁹:

Վերջին տարիներին միջազգային ուսումնասիրություններում Բրազիլիան և Թուրքիան հաճախ են նշվում որպես տնտեսական ակտիվության շնորհիվ ակտիվ արտաքին քաղաքականություն իրականացնող երկրներ, որոնք, համապատասխան տարածաշրջաններում կարևոր դերակատար լինելուց գատ, դարձել են առավել ընդգրկուն միջազգային օրակարգի խաղաղուներ: Բրազիլիայի տնտեսությունը, որը 6–րդն է աշխարհում, նախատեսվում է 10 տարի անց դարձնել 4–րդը կամ 5–րդը, Թուրքիան նույնպես ձգտում է 10 տարի անց բարելավելու տնտեսական զարգացման ցուցանիշները՝ 16–ից հասնելով 10–րդ ցուցանիշին:

Վերջին համաժողովի ընթացքում Թուրքիայի արտգործնախարար Դավլոթօլլուն իրապարակեց արտաքին քաղաքականու-

¹⁶ Türkiye–Brezilya–İsvéc Arasında Ortak İstisare Mekanizması Oluşturuldu, <http://www.haberler.com/turkiye-brezilya-ivsec-arasinda-ortak-istisare-4225092-haber/>

¹⁷ Trilateral Solidarity for Building peace <http://www.regeringen.se/sb/d/15727>

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ 5. Büyükelçiler Konferansı, <http://egemenbagis.com/tr/6256>

թյան հայեցակարգային նոր թեզերը՝ «հումանիտար դիվանագիտություն» խորագրի ներքո: Փորձագիտական հանրության մոտ հնչեցին կարծիքներ, որ երկար տարիներ չարչրկված, տարաբնույթ զնահատականների արժանացած «ռազմավարական խորություն» հայեցակարգը իրեն սպառել է, և անհրաժեշտություն կա սեղանին դնելու նոր փաստաթուղթ: Անշուշտ, ամբողջովին նոր ռազմավարության մասին խոսելու համար դեռ հիմքեր չկան, սակայն ակնհայտ է, որ Թուրքիայի իշխանությունները քաջ գիտակցում են, որ անհրաժեշտություն է առաջացել որոշ խմբագրման ենթարկել գործող արտաքին քաղաքականությունը:

2002-2009 թթ. ընթացքում, երբ Դավութօղլուն հետևաբեմից էր մասնակցում արտաքին քաղաքականության մշակմանը և իրագործմանը, Թուրքիայում կար ընդհանուր համոզմունք, որ տարածաշրջանային և արտատարածաշրջանային քաղաքականությունը աննախադեպ հաջողության է հասել: 2009 թ. մայիսին՝ արտգործնախարար նշանակվելուց հետո, ևս 2-3 տարի Դավութօղլուն շարունակում էր իր քաղաքականությունը կառուցել՝ հենվելով իր տեսական հիմնավորումների, փիլիսոփայական ձևակերպումների, նախկին համոզմունքների և մոտեցումների վրա: Իսրայելի, Սիրիայի, Հայաստանի հետ հարաբերություններում նոր զարգացումների լույսի ներքո Դավութօղլուն շարունակում է մերժել արտաքին քաղաքականության հայեցակարգային դրույթների վերանայման մոտեցումները: Հետևաբար «հումանիտար դիվանագիտության» մասին առաջին ակնարկը բավական էր տարաբնույթ մեկնաբանությունների համար: Փորձագիտական հանրությունը շտապեց պնդել, որ Թուրքիայի իշխանությունները սկիզբ են դրել արտաքին քաղաքականության կուրսի նոր փոփոխության:

Իրականում դիվանագետների հետ վերջին հանդիպման ժամանակ Դավութօղլուի ելույթը և ընդհանուր շեշտադրումները վկայում են այն մասին, որ թե՛ վաղ է արտաքին քաղաքականության նոր հայեցակարգի մասին խոսելը, ապա կարող ենք պնդել, որ Թուրքիայի դիվանագիտության հիմնական գաղափարական մոտեցումներում տեղի են ունենում շեշտադրումների փոփոխություն և առաջնահերթությունների որոշակի վերադասավորում:

«Հումանիտար դիվանագիտության» (insani diplomasi) մասին Դավութօղլուի ելույթում և ընդհանուր քննարկումներում գերակշռում էին մի քանի ընդհանուր շեշտադրումներ, որոնք նպատակ են հետապնդում դիվանագետների համար առավել ընկա-

լելի դարձնելու նոր մոտեցման էությունը: «Դիվանագիտության հետ միասին մարդասիրական բաղադրիչները ևս պետք է իրագործվեն»,— նշեց Դավութօղլուն՝ գերազանցապես հղում կատարելով Աֆրիկայում Թուրքիայի արձանագրված դիվանագիտական ձեռքբերումների մարդասիրական բաղադրիչին²⁰:

Առաջին խնդիրը, որը նշվեց որպես «հումանիտար դիվանագիտության» ենթահայեցակարգ, վերաբերում էր արտերկրում ապրող Թուրքիայի քաղաքացիներին և ազգությամբ թուրքերին մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը: Այս դրույթը մի քանի նպատակներ է հետապնդում, որոնցից ամենասկզբունքայինն այն էր, որ Թուրքիան մտադիր է ընդլայնել իր ներկայացվածությունն արտերկրում: Թուրքիայի սահմաններից դուրս գործում են 172 դիվանագիտական ներկայացուցչություններ, որը 9-րդ ցուցանիշն է աշխարհում: Թուրքիան մտադիր է գալիք տարիների ընթացքում այդ թիվն էականորեն ավելացնել և դառնալ 5-րդը: ԱԳՆ-ն մտադիր է նաև շարունակել Թուրքիա մուտքի արտոնագրի ազատականացման քաղաքականությունը՝ նպատակ ունենալով Թուրքիան առավել հասանելի դարձնելու ներդրումների, զբոսաշրջության, առևտրի և մի շարք այլ առումներով: Թուրքիան ցանկանում է այս քայլի շնորհիվ էականորեն ընդլայնել իր ներկայացվածության աշխարհագրությունը: Համաժողովի ընթացքում ելույթ ունեցավ նաև փոխվարչապետ Բեքիր Բոզդաղը՝ նշելով, որ թուրք դիվանագետները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն նաև արտերկրում ապրող նոր սերնդի թուրքերի մոտ մայրենի լեզվի պահպանության խնդիրներին²¹:

Անցած տասնամյակի ընթացքում Թուրքիայի իշխանությունները հետևողականորեն ավելացնում էին Թուրքիայի ներկայացվածությունը տարաբնույթ միջազգային հեղինակավոր կազմակերպություններում: Դա տեղի էր ունենում թե՛ լիիրավ անդամի, թե՛ դիտորդի կարգավիճակ ձեռք բերելու շնորհիվ: Հաջորդ նպատակ երկրագնդի տարբեր հատվածներում առկա ճգնաժամային գոտիներում առավել ակտիվ ներգրավվածությունն է: 2002 թ. ի վեր Թուրքիան ձգտել է էականորեն բարձրաձայնելու Աֆրիկայի, Մերձավոր Արևելքի և Ասիայի տարբեր երկրներում ապրող իսլամադավան փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության խնդիրը: Ավելին՝ զգալիորեն ավելացել է նաև Թուրքիայի

²⁰ Ankara to focus on “human” diplomacy, Hürriyet Daily News, 01.01.2013
²¹ Bekir Bozdağ: Turks living abroad have “equal participation problem”, <http://www.habermonitor.com/en/haber/detay/bekir-bozdagturks-living-abroad-equal-partic/76175/>

վարչապետին կից գործող Թուրքական համագործակցության և համակարգման գործակալության (ԹՀՀԳ-TİKA) դերակատարումը: Վերջին տարիների ընթացքում շուրջ 30 երկրներում բացվել են ԹՀՀԳ-ի գրասենյակներ, և նրա կողմից տրվող նյութական օժանդակության չափերը վերջին տասնամյակում աճել են 27 անգամ՝ 2011 թ. հասնելով 2,1 մլրդ ԱՄՆ դոլարի²²: Վերջին տարիների ընթացքում Թուրքիան հատկապես զգայուն էր Պաղեստինի, Սուդանի, Աֆղանստանի, Մյանմարի և մի շարք այլ երկրներում տեղի ունեցող քաղաքացիական պատերազմների, բնակչության նկատմամբ իրականացվող ճնշումների, սոցիալական գրկանքների, բռնաճնշումների վերաբերյալ հարցերում: Այս առումով Բաղդադը հայտարարեց, որ Սիրիայում, Աֆղանստանում, Սոմալիում և Եգիպտոսում այսօր կան միլիոնավոր մարդիկ, որոնք իրականում քաջատուրյակ են, թե Թուրքիան ինչ դեր է կատարում նրանց համար²³: Համախալման կան համերաշխության մոտեցումից զատ՝ Թուրքիան մտադրություն ունի նաև խորացնելու ներկայացվածությունը Ճգնաժամային այլ գոտիներում: Նման փորձ Թուրքիան ձեռք էր բերել հարավօսական, իսրայելա-իթանանյան պատերազմների և Գազայի հատվածում Իսրայելի հրետակոծությունների ժամանակ: Երրորդ նպատակն էր հումանիտար խնդիրներին առնչվող հարցերում բարձրացնել ՄԱԿ-ի ներգրավման ինտենսիվությունը: Նոր մոտեցման մեջ կան հստակ ուղղություններ, որոնք չնկատել չենք կարող: Առաջին էրթթին իսլամական համերաշխության սկզբունքի վերհանումն է, այնուհետև թուրքական դեմոկրատիայի և աշխարհիկ մոդելի արտահանման հերթական փուլն է:

Դավաթողլուի օրոք նոր նշանակություն տրվեց Թուրքիայում գործող հասարակական կազմակերպությունների, բիզնեսմենների, սոցիալական խմբերի, մտավորականների, վերլուծական կենտրոնների և քաղաքացիական հասարակության այլ կազմակերպությունների հետ ԱԳՆ-ի համագործակցության խորացմանը: Այս քաղաքականությունը տարբերվում էր նախորդ ժամանակահատվածից այն առումով, որ տասնամյակներ շարունակ միջազգային հարաբերությունները և արտաքին գործերն ընկալվել և ներկայացվել են բացառապես որպես դիվանագետների դուրտի անելիք²⁴: Ավելին՝ արտերկրում նույնպես Թուրքիան ձգտում

է խորացնելու համագործակցությունը՝ հենվելով այլ երկրներում ազդեցիկ հասարակական կազմակերպությունների և գիտավերլուծական կենտրոնների վրա:

Հարկ է առանձին վերլուծել հատկապես գործարարների և առևտրային կազմակերպությունների հետ Թուրքիայի ԱԳՆ-ի արդյունավետ համագործակցությունը: Իհարկե, 1980-ականներին ևս Թ. Օզալը սերտորեն համագործակցում էր գործարարների հետ արտաքին քաղաքականության իրականացման համար, սակայն Էրդողանի օրոք թե՛ ձևը, թե՛ բովանդակությունը էական փոփոխությունների են ենթարկվել: Եթե 1980-ականներին Թուրքիայի համար արտաքին առևտուրը երկիրը բացելու, արտահանելու և գումար վաստակելու նպատակ էր հետապնդում²⁵, ապա 2000-ական թթ. այդ ամենին գումարովեց նաև նոր շուկաներում տնտեսական երկարաժամկետ ներկայացվածության ապահովումը, որն անհնար էր իրականացնել առանց մշակութային և քաղաքական լծակների օգտագործման: Ավելին, ներկայացնելով արտահանման ծավալները՝ ավելի ըմբռնելի է դառնում արտահանման շուկաներում երկարաժամկետ ներկայացվածությունը ապահովելու Թուրքիայի իշխանությունների ձգտումը: 2012 թվականին 2002 թ. համեմատ արտահանման ծավալները աճել են ավելի քան 400 տոկոսով՝ 36 միլիարդ դոլարից հասնելով 150 միլիարդի: Թուրքիայի Կենտրոնական բանկի ռեզերվները ևս նույն ժամանակահատվածում շեշտակի աճ են գրանցել՝ 27,5 մլրդ դոլարից հասնելով 121 մլրդ-ի: Միջազգային արժույթային ֆոնդին Թուրքիայի երբեմնի 23,5 մլրդ դոլար պարտքից մնացել է ընդամենը 860 միլիոն, որը մոտ ժամանակներում ամբողջությամբ կմարվի: Թուրքիան մտադիր է նաև ավելացնել իր կողմից հատկացվող վարկային փոխառությունները՝ դրանք հասցնելով 5 մլրդ դոլարի²⁶:

Այսպիսով՝ Էրդողանի և Դավաթողլուի համար գործարար համայնքի ներգրավումը արտաքին քաղաքականության իրականացման նպատակով դարձավ անշրջելի գործընթաց: Գործարար համայնքի հետ համագործակցության խորացման և անելիքների համադրման նպատակով Էրդողանը վերակառուցեց 1986 թ. հիմնադրված Արտաքին տնտեսական հարաբերությունների խորհրդի և 1993 թ. հիմնադրված՝ Թուրք արտահանողների խորհրդի գործունեությունը, նոր սկզբունքներով սկսեցին գործել

²² Şaban Kardaş, Turkey's Development Assistance Policy: How to Make Sense of the New Guy on the Block, The German Marshall Fund of the US, 04.02. 2013, էջ 1-2

²³ S. Büyükelçiler Konferansı, <http://egemenbagis.com/tr/6256>

²⁴ Bulent Aras, Davutoğlu's Era in the Turkish Foreign Policy, *Insight Turkey*, Foundation for Political, Economic and Social Research, May, 2009, no. 32.

²⁵ Altay Atli, Businessmen and Turkey's Foreign Policy, Policy Brief Series, International Policy and Leadership Institute, 2011, p. 3.

²⁶ PM Erdoğan praises economy's ten years, *Hürriyet Daily News*, 31.12.2012.

1990 թ. հիմնադրված Անկախ արդյունաբերողների և գործարարների միությունը (MUSIAD) և Թուրքիայի արդյունաբերողների և գործարարների միությունը (TUSIAD): Կենտրոնական Թուրքիայում նոր արդյունաբերական կենտրոնների ի հայտ գալը ստեղծեց նաև նոր գործարար միություններ, որոնցից առավել հայտնի էր Թուրք արդյունաբերողների և գործարարների համադաշնությունը (TUSKON):

Եզրակացություն

Արտերկրում դիվանագիտական ծառայություն իրականացնող դեսպանների և բարձրաստիճան դիվանագետների հետ նախ Բաքաջանի, ապա Դավութօղլուի հանդիպումները կարևոր միջոցառում են արտաքին քաղաքական գերատեսչության կազմակերպվածության մակարդակը բարձրացնելու առումով: Վերջին վեց տարիների ընթացքում անցկացված հինգ համաժողովների ընթացքում ձևավորվել են որոշակի աշխատառճ և սկզբունքներ, որոնք էական նշանակություն ունեն ոչ միայն ԱԳՆ-ի և դիվանագիտական առաքելությունների միջև աշխատանքի արդյունավետության բարձրացման և աշխատառճի, մոտեցումների, հայացքների մոտարկման առումներով, այլ նաև այդ համաժողովներին օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցության առումով:

ԹՈՒՐԲԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒՉՈՒԹՅԱՆ ԿԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱԶԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Թուրքիայի Ազգային հետախուզական կազմակերպության (այսուհետ՝ ԱՀԿ, թուրք.՝ *Milli İstihbarat Teşkilatı*) կառուցվածքային ու գործառության բարեփոխումները հիմնարար բնույթ ստացան հատկապես «Արդարություն և զարգացում» կուսակցության (այսուհետ՝ ԱԶԿ) իշխանության տարիներին: ԱԶԿ-ի ուշադրությունը ԱՀԿ-ի բարեփոխումների հարցում պայմանավորված էր մի քանի հանգամանքներով: Նախ Թուրքիայի ԵՄ անդամակցության շրջանակում ստանձնած պարտավորություններով պետք է բարեփոխումներ իրականացվեին անվտանգության ոլորտում ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմների ու թափանցիկության հաստատման ուղղությամբ: Բացի այդ, կառավարող ԱԶԿ-ն իշխանության գալուց հետո բավական բարդ հարաբերությունների մեջ էր բարձրագույն զինվորականության հետ, ուստի ԱՀԿ-ին կառավարության լիարժեք վերահսկողության տակ վերցնելն ու պահելն «օրակարգային խնդիր» էր: ԱԶԿ-ի և հատկապես վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի համար խիստ անհրաժեշտ էր կառավարությանը ԱՀԿ-ի լիարժեք «հավատարմության» հաստատումը՝ որպես զինվորական իշխանությունների ու գլխավոր շտաբին հակակշիռ ներքին քաղաքական գործընթացներում: Բանակ-քաղաքացիական իշխանություն դիմակայության պարագայում ԱՀԿ-ի խնդիրն առաջնահերթ կարևորություն ստացավ Էրդողանի կառավարության համար: Բարեփո-

խումների համատեքստում առաջնային նշանակություն ունեցան նաև ԱԶԿ-ի արտաքին քաղաքականության վերածնունդը և արտաքին հետախուզության կազմակերպման ու գործառնական վերանայումներն ու հստակեցումները՝ որպես արտաքին քաղաքականության սպասարկման կարևորագույն մեխանիզմ:

ԱՀԿ-ի գործունեության ու նաև կազմակերպչական-կառուցվածքային ոլորտում լայնամասշտաբ բարեփոխումների անհրաժեշտությունը բարձրացվեց դեռ Էմրե Թաների ղեկավարման տարիներին (2005–2010 թթ.): 2006 թ. նրա իսկ կողմից ԱՀԿ-ի բարեփոխումների աշխատանքներ էին նախաձեռնվել, որոնց նպատակն էր վերակազմակերպել ԱՀԿ-ի գործունեությունը ժամանակակից մարտահրավերներին ու զարգացումներին համարժեք: ԱՀԿ-ի ղեկավար Է. Թաների պաշտոնավարման սկզբում նրա կողմից առաջ քաշվեց ազգային անվտանգության ապահովման ու ազգային շահերի պահպանման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հետախուզության գործառնությունների վերածնունդն ու զարգացման անհրաժեշտության հարցը: 2007 թ. Է. Թաների կողմից գրավոր հաղորդագրության մեջ նշվում էր, որ Թուրքիան իր թե՛ ռազմավարական և թե՛ աշխարհաքաղաքական կարևորության պատճառով երբեք չի կարող զարգացումների դիտորդի դերում լինել, և Թուրքիայի նման երկրին չի կարող բավարարել «պաշտպանական և սպասողական կեցվածքը»: Ուստի ԱՀԿ-ն 21-րդ դարում պետք է երկրի շահերին ու անվտանգության խնդիրներին համարժեք գործունեություն ծավալի¹:

Նույն թվականի նոյեմբերին ԱՀԿ-ի բարեփոխումների անհրաժեշտության ու հետախուզական տեղեկատվության հավաքման ոլորտում ինքնուրույնության աստիճանը բարձրացնելու մասին էր խոսել 1992–1997 թթ. ԱՀԿ-ի ղեկավարի պաշտոնը զբաղեցրած Սյունեզ Բյոքսալը՝ գտնելով, որ պետք է կառուցվածքային ու գործնական փոփոխություններ իրականացվեն արդի իրավիճակին ու զարգացումներին համարժեք պատասխանելու համար²:

2008 թ. դեկտեմբերին ԱՀԿ-ի նախկին փոխտնօրեն Էրթուրուլ Գյունեյը «Sunday's Zaman» պարբերականին տված հարցազրույցում բարձրացրեց Թուրքիայի հետախուզական համակարգի արդիականացման խնդիրը՝ նշելով, որ հետախուզական մեխանիզմների ոլորտում բացթողումներ ու թերություններ կան,

քանի որ հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները խանդով են վերաբերվում միմյանց, և տեղեկատվության փոխանակում չի լինում: Անհրաժեշտ է, որ կառավարությունը համակարգի հետախուզական մարմինների գործունեությունն ու ստեղծի համակարգող մարմին³: Է. Գյունեյը անհրաժեշտ էր համարել նաև տարանջատել ներքին ու արտաքին հետախուզական գործունեությունը և ԱՀԿ-ին լիազորել միայն արտաքին հետախուզություն իրականացնելու գործունեությունը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով կովկասյան, բալկանյան ու մերձավորարևելյան տարածաշրջաններում:

2009 թ. արդեն Թուրքիայում աշխատանքներ էին տարվում հետախուզական մարմինների գործունեության առաջահերթություններում փոփոխություններ իրականացնելու ուղղությամբ, ինչը կապված է միջազգային ժամանակակից իրադրությանն ու աշխարհաքաղաքական զարգացումներին համարժեք արձագանքելու և Թուրքիայի քաղաքականությունն ավելի արդյունավետ իրականացնելու անհրաժեշտության հետ: Նախ Թուրքիայում ռազմավարական նոր փոփոխություններ իրականացվեցին ներքին անվտանգության ու ահաբեկչության դեմ պայքարի ծառայությունների արդյունավետ գործողությունների համար, վերանայվեց ահաբեկչության դեմ պայքարի ռազմավարությունը, և ստեղծվեց հատուկ համակարգող մարմին նշված ոլորտում: Հետախուզական գործունեության նոր ռազմավարության շրջանակներում ԱՀԿ-ն իր գործունեության «ծանրությունը» կենտրոնացնելու է արտաքին հետախուզության ոլորտում: Ազգային հետախուզական կազմակերպության կառուցվածքում իրականացված փոփոխությունների շրջանակում վերանայվել և հստակեցվել են նոր առաջնահերթությունները, որոնք վերաբերում են առավելապես արտաքին հետախուզությանը: Տարածաշրջանային, տնտեսական, քաղաքական, մշակութային ու ժողովրդագրական առումներով «առաջնահերթ թիրախներ» են ընտրվել Կովկասը, Բալկանները, Մերձավոր Արևելքը, Միջերկրական, Սև, Էգեյան ծովերը, Կասպյան ավազանը, Ասիական-խաղաղովկիանոսյան տարածաշրջանը, Աֆրիկան: Բացի անվերջնից, կարևորություն է տրվելու արաբերենին, հայերենին, վրացերենին, հունարենին, բուլղարերենին, սերբերենին, ռու-

¹ MIT'ten carpicci mesajlar, http://www.hurriyet.com.tr/gundem/5727063_p.asp, 05.01.2007.

² Türk istihbarat yapısına eleştiri, 22.11.2007, <http://www.haber7.com/yorumlar.php?id=281986>

³ Lale Sarıbrahimoğlu, Turkey needs an intelligence coordination mechanism, says Güven, 07.12.2008, Today's Zaman, http://www.todayszaman.com/newsDetail_getNewsById.action?load=detay&link=160856.

սերենին ու չինարենին⁴: ԱՀԿ-ի կողմից առաջնահերթություն ստացած 10 «ոազմավարական ոլորտներն» են.

1. Կովկաս. տարածաշրջանում Ռուսաստանի նոր ոազմավարությունները, Կրաստանի ձգտումները դեպի ՆԱՏՕ, Թուրքիա-Հայաստան-Ադրբեջան հարաբերությունները, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը:

2. Մերձավոր Արևելք. Իրաքում և Լիբանանում կատարվող զարգացումները, Իսրայել-պաղեստինյան հարցը, Իրանի հաստատակամությունը՝ միջուկային հարցի հետ կապված, տարածաշրջանի հարցերում Սիրիայի դիրքորոշումը, արաբական մի շարք էմիրություններում հնարավոր քաղաքական զարգացումներն ու իշխանափոխությունները:

3. Բալկաններ. նախկին Հարավսլավիայի մաս կազմող երկրների միջև հարաբերություններն ու լարվածությունը, Կոսովոյի անկախությունից հետո զարգացումները, Եվրամիությանը Սերբիայի և Խորվաթիայի անդամակցությունը, ԵՄ-ին Մակեդոնիայի և Ալբանիայի ինտեգրմանն ուղղված ծրագրերը և ներդրումները, տարածաշրջանի երկրներում Հունաստանի ֆինանսատնտեսական ու հեռահաղորդակցության ոլորտում ներդրումները:

4. Անձովյան տարածաշրջան. ավազանի արևելյան հատվածում նավթի պաշարներն ու որոնողական աշխատանքները, էներգետիկ ենթակառուցվածքները, ավազանի երկրների կողմից Սև ծովում ազդեցություն սահմանելու ձգտումները:

5. Միջերկրական ծով. Կիպրոսի հիմնախնդիրը, էներգետիկ պաշարները, Եգիպտոսի ու Կիպրոսի հանրապետության կողմից նավթագազային որոնողական աշխատանքներն ու պայմանագրերը, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան ու Սամսուն-Ջեյհան խողովակաշարերը:

6. Էգեյան ծով. թուրք-հունական օդային հաղորդակցության տեղեկատվական գծեր և ցամաքային հատվածի խնդիրները:

7. Աֆրիկա. գինված հակամարտությունները, Թուրքիայի աֆրիկյան ոազմավարական նախաձեռնությունը, Հյուսիսային Աֆրիկայում թուրքական ներդրումներն ու կապալառուական ծրագրերը:

8. Կարմիր ծով, Ադենի ծոց. ոազմավարական ուղիների վերահսկողություն, նավթի ու գազի փոխադրումների անվտանգության ապահովում և թուրքական ոազմական նավի ներկայության ապահովում:

9. Միջին Ասիա և Կասպյան ավազան. նավթի ու գազի բաժանումը, բաշխումը, հնարավոր խողովակաշարերի կառուցումն ու ուղիները:

10. Հեռավորարևելյան, Ասիական-խաղաղովկիանոսյան տարածաշրջանի երկրների հետ ԱՄՆ-ի ու ԵՄ-ի տնտեսական մրցակցության ուժեղացումը, Չինաստանի ու Ճապոնիայի միջև մրցակցությունը տարածաշրջանային դերակատարության համար, Աֆղանստանում իրավիճակն ու ահաբեկչական գործողությունները: Տարածաշրջանի երկրների նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշումը, Ռուսաստանի ու Չինաստանի միջև էներգետիկ պայմանագրերը, Կասպյան ավազանում նավթի ու գազի պաշարների արդյունահանումն ու ոազմավարական ծրագրերը:

Հարկ է նշել, որ սառը պատերազմի ողջ ժամանակահատվածում թուրքական հատուկ ծառայությունների գործունեությունն ու առաջնահերթությունը պայմանավորված էին հիմնականում ԱՄՆ և ՆԱՏՕ-ի գերակայություններով, և սպառնալիքների ու գործունեության դաշտի հիմնական ուղեգծերը սահմանվում էին մեկ կենտրոնից: Ինչպես արևմտյան առանցքի շատ երկրներում, այնպես էլ Թուրքիայում հետախուզական մարմինների գործունեությունը մեծ մասամբ սահմանափակված էր ԽՍՀՄ-ի, սոցիալիստական ճամբարի երկրների ու կոմունիզմի դեմ պայքարի գերակայություններով: Ինչպես իր դոկտորական ատենախոսության մեջ իրավացիորեն նշել է ԱՀԿ-ի ներկայիս ղեկավար Հ. Ֆիդանը, սառը պատերազմի շրջանում Թուրքիայում հիմնական ուշադրությունը կենտրոնացված էր երկրի ներքին զարգացումների վրա, մինչդեռ այդ պատճառով արտաքին հետախուզական տեղեկատվության ստացման կարիքը չէր զգացվում, և այն կախված էր մնում ՆԱՏՕ-ի դաշնակիցների կողմից ստացվող հետախուզությունից⁵:

Սառը պատերազմի ավարտից հետո Թուրքիայի համար առաջնահերթ դարձավ անվտանգության նոր միջավայրի, նոր արտաքին քաղաքական հրամայականների ու մարտահրավերների վերաիմաստավորմամբ նաև հետախուզական գործունեության գերակայությունների «արդիականացումը»:

ԱՀԿ-ի արտաքին հետախուզական գործառույթների ընդլայնման անհրաժեշտությունը պայմանավորված է Թուրքիայի

⁵ MIT'i nasil yonetecegini yillar once yazdi, <http://www.haber7.com/ic-politika/haber/980454-miti-nasil-yonetecegini-yillar-once-yazdi>

⁴ Diş istihbarata ağırlık verilecek, Sabah, 20.03.2009.

օրս էլ թուրքական հատուկ ծառայությունները ինքնուրույնաբար չեն կարողանում ապահովել անհրաժեշտ հետախուզական տեղեկատվությունը ԲԲԿ-ի վերաբերյալ: Եվ իրականում իսրայելական հատուկ ծառայությունները ավելի լավ են տիրապետում տարածաշրջանում և հատկապես Հյուսիսային Իրաքում քրդական շրջանների ու դրանցում զարգացումների վերաբերյալ հետախուզական տեղեկատվությանը:

Ժամանակակից միջազգային հարաբերություններին ու զարգացումներին համապատասխան Թուրքիան քայլեր էր ձեռնարկում ավելի ընդլայնելու արտաքին հետախուզության աշխարհագրությունն ու բնագավառները: Բավական լուրջ ուշադրություն է դարձված էներգետիկ-կոմունիկացիոն խնդիրներին, որով Թուրքիան պատրաստվում է ավելի մեծ դերակատարություն ստանձնել տարածաշրջանային ու արտատարածաշրջանային էներգետիկ-տրանսպորտային ու քաղաքական-տնտեսական գործընթացներում: Դա հնարավորություն կտա ապահովելու ոչ միայն սեփական անվտանգությունը, այլ նաև մեծացնելու իր դերակատարությունը տարածաշրջանային ու միջազգային գործընթացներում¹¹:

2010 թ. մայիսին ԱՀԿ-ի ղեկավարի պաշտոնում նշանակվեց վարչապետ Էրդողանի մտերիմը համարվող Հաբան Ֆիդանը, որը մինչ այդ կարճ ժամանակ զբաղեցնում էր ԱՀԿ-ի ղեկավարի տեղակալի պաշտոնը¹²: Ֆիդանի պարագայում կարևոր է նաև այն, որ նա 2003–2007 թթ. զբաղեցրել է վարչապետի աշխատակազմի «Թուրքական համագործակցության ու զարգացման գործակալության» (*Türk İşbirliği ve Kalkınma İdaresi Başkanlığı, TİKA*) ղեկավարի պաշտոնը, որի գործունեության հիմնական շրջանակն ու ուղղությունը վերաբերում են եվրասիական տարածաշրջանում թյուրքալեզու երկրներին ու ժողովուրդներին կրթական-մշակութային օգնությանը, սոցիալ-տնտեսական, հումանիտար ծրագրերի իրականացմանը¹³: Թուրք մասնագետների

ընտրումամբ TİKA-ն հետսարգլատերազմյան ժամանակաշրջանում հիմնականում Եվրասիայի մի շարք տարածաշրջաններում ու երկրներում ստացավ «Թուրքիայի արտաքին քաղաքականության իրականացման գործիքի դերը»¹⁴:

Հ. Ֆիդանի նշանակումը որոշ թուրքական լրատվամիջոցներ որակեցին որպես վարչապետ Էրդողանի կողմից ԱՀԿ-ի նկատմամբ ամբողջական վերահսկողության հաստատմանն ուղղված քայլ, քանի որ նա համարվում էր իր իսկ վստահելի մարդկանցից: Դաշտոնն ստանձնելուց հետո նա հայտարարեց, որ ԱՀԿ-ն հետագայում լինելու է ավելի բաց հասարակության առջև և չի լինելու քաղաքականացված, չի ծառայելու անհատներին կամ առանձին խմբերի շահերին¹⁵:

ԱՀԿ-ի ղեկավարի պաշտոնում Հ. Ֆիդանի մեկամյա գործունեության շրջանում արդեն մի շարք քեմալիստական ու ծախ ուղղվածության լրատվամիջոցներ շրջանառեցին «Intelligence online» պարբերականի հրատարակումը, ըստ որի՝ այդ գերատեսչությունում իրագործվել է «մաքրման» գործողություն, որի նպատակը երկար ժամանակ «հակաիսլամական ամբողջ» հանդիսացող այդ կառույցը Էրդողանի կառավարության լիակատար վերանակարության տակ ղեկն է: «Բանալի ազդեցության սահմանափակման նկատմամբ իրականացրած հաջող գործողություններից հետո Էրդողանն այժմ ցանկանում է վերահսկողություն հաստատել ԱՀԿ-ի վրա և դա հանձնարարել է վերջինիս ղեկավար Հ. Ֆիդանին»¹⁶:

Դեռևս 2003 թ. ընթացքում Թուրքիայի կառավարությունը նախաձեռնել էր ԱՀԿ-ի օրենքում փոփոխությունների միջոցով բարեփոխումներ իրականացնել կառույցում: Ըստ այդ նախաձեռնության՝ ԱՀԿ-ն բաժանվելու էր և կազմվելու էր 2 առանձին միավորներից՝ համապատասխանաբար ներքին ու արտաքին հետախուզության ոլորտում, որոնց գլխավորելու էին առանձին նշանակված ղեկավարները¹⁷: Բարեփոխումների հիմնական մոդել էին ընտրվելու ԱՄՆ-ում հետախուզական ծառայությունների կառուցվածքն ու գործունեությունը, որտեղ հստակ առանձ-

¹¹ Լ. Հովսեփյան, Ռուսաստանի Դաշնությունում թուրքական հատուկ ծառայությունների գործունեության ու ակտիվության շուրջ, «Դրօշակ», No. 11 (1626), նոյեմբեր, 2010, էջ 31:

¹² Տես ԱՀԿ-ի պաշտոնական կայք, <http://www.mit.gov.tr/mustesar.html>, 25.08.2010: Sedat Ergin, A sensitive appointment to the top of the MIT, *Hürriyet Daily News*, 27.04.2010:

¹³ TİKA-ն ստեղծվել է 1992 թ. կառավարության որոշման համաձայն՝ ԽՍՀՄ փլուզումից հետո նորասկսյա թյուրքալեզու երկրներին տարբեր օգնության ծրագրերի համակարգման ու իրականացման նպատակով: Այն սկզբնական շրջանում գործում էր որպես ԱԳՆ-ին կից կազմակերպություն, իսկ հետագայում միացվեց վարչապետի գրասենյակին: Տես TİKA-ի պաշտոնական կայքը՝ <http://www.tika.gov.tr/tika-hakkinda/tarihce/>:

¹⁴ Tuncay Kardeş, Ramazan Erdağ, Bir Dış Politika Aracı Olarak TİKA, *Akademik İncelemeler Dergisi*, Vol. 7, Sayı:1, 2012, s. 169.

¹⁵ Turkey's intelligence agency to change image with appointment of new chief, *Hürriyet Daily News*, 28.05.2010.

¹⁶ «MIT'te temizlik operasyonu» iddiası, <http://haber.sol.org.tr/devlet-ve-siyaset/mitte-temizlik-operasyonu-iddiasi-haberi-40710>, 25.03.2011.

¹⁷ MIT'in yapısı değişiyor, *Yeni Şafak*, 30.11.2003, <http://yenisafak.com.tr/arsiv/2003/kasim/30/p01.html>

նացված են ներքին ու արտաքին հետախուզական մարմինները՝ Հետաքննությունների դաշնային բյուրոն (ՀԴԲ) և Կենտրոնական հետախուզական վարչությունը (ԿՀՎ): ԱՀԿ-ի բարեփոխումների խնդիրը երկար ժամանակ եղել է մասնագիտական ու վերլուծական քննարկումների առարկա, որի ժամանակ անխուսափելի էր համարվում թուրքական հետախուզության՝ ժամանակակից իրողությունների համապատասխան արդիականացնելու հրամայականը:

ԱՀԿ-ում կառուցվածքային ու գործառույթային բարեփոխումներն արդեն իսկ իրողություն դարձան Հ. Ֆիդանի պաշտոնավարման սկզբնական շրջանում: 2010 թ. նոյեմբերին թուրքական ՋԼՄ-ները տեղեկացրին, որ կառավարության գաղտնի որոշմամբ ԱՀԿ-ում կառուցվածքային փոփոխություններ են իրականացվել: Հատկապես առանձնացվել են ԱՀԿ-ում ներքին հետախուզության ու արտաքին հետախուզության ոլորտները՝ կազմելով համապատասխանաբար Առաջին և Երկրորդ հետախուզությունները¹⁸: Կազմակերպությունում հետախուզության համար պատասխանատու տեղակալների թիվն ավելացվել է, և հետախուզության ոլորտը համակարգելու են պետի երկու տեղակալները: Կատարված կառուցվածքային փոփոխություններով ԱՀԿ-ի ղեկավարը նախկին երեքի փոխարեն ունենալու է չորս տեղակալ: Ներքին հետախուզության հարցերով պատասխանատու տեղակալը համակարգելու է Անվտանգության հետախուզության վարչությունը (*Güvenlik İstihbarat Başkanlığı*) և Հակահետախուզության վարչությունը (*İstihbarata Karşı Koyma Başkanlığı*), իսկ արտաքին հետախուզության հարցերի, պատասխանատու տեղակալը՝ Ռազմավարական հետախուզության վարչությունը (*Stratejik İstihbarat Başkanlığı*) և Բաց աղբյուրների վարչությունը (*Açık Kaynaklar Daire Başkanlığı*)¹⁹:

Իրականացված կառուցվածքային այդ բարեփոխումների շրջանակում 2011 թ. ԱՀԿ-ի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակվեց կադրային դիվանագետ, Ճապոնիայում Թուրքիայի դեսպան Աբդուռահման Բիլգիչը, որը պետք է ապահովեր ԱՀԿ-ի ու Արտաքին գործերի նախարարության միջև համագործակցությունը արտաքին հետախուզության ոլորտում²⁰:

2008 թ. սկզբից արդեն աշխատանքներ էին տարվում ԱՀԿ-ի ներսում ուսումնակրթական մասնագիտական բազայի զարգացման ուղղությամբ, որի շրջանակներում նախատեսված էր ստեղծել հատուկ ակադեմիա անձնակազմի վերապատրաստման համար: Չուտ պրոֆեսիոնալ ուսումնական ծրագրերից բացի, անձնակազմի համար կազմակերպվելու էին օտար լեզուների դասընթացներ²¹: Ըստ թուրքական ՋԼՄ-ների՝ 2009 թ. ԱՀԿ-ն աշխատանքի է ընդունել նոր աշխատակիցներ՝ հայերենի, վրացերենի, արաբերենի, սերբերենի, եբրայերենի, հունարենի, ռուսերենի իմացությամբ, որոշ գործող աշխատակիցներ էլ տվյալ լեզուներով համապատասխան ուսուցում են անցել²²: Հարկ է նշել, որ բարեփոխումների համատեքստում առաջնային պլան է մղված հետախուզական-վերլուծական գործունեության մեջ գիտական-ակադեմիական ոլորտի ներգրավվածության ու համակարգման ապահովման խնդիրը: Գիտահետազոտական ոլորտում աշխատանքներն ակտիվացնելու նպատակով 2011 թ. ԱՀԿ-ի ուսումնական կենտրոնի (*Milli İstihbarat Teşkilati Eğitim Merkezi*) կազմում ստեղծվեց Հետախուզական ուսումնասիրությունների կենտրոն (*İstihbarat araştırmalar merkezi, ISAMER*) անունը կրող ակադեմիան, որի նպատակը ակադեմիական ուսումնասիրություններն են հետախուզության ոլորտում և անհրաժեշտ նորարարական առաջարկների պատրաստումը²³: 2012 թ. հունիսին այն անցկացրեց իր առաջին համաժողովը՝ ակադեմիական ու անվտանգության ոլորտի մասնագետների ու պաշտոնյաների մասնակցությամբ, որի նպատակն էր վերհանել հետախուզական գործունեության մեջ վերլուծական բարադրիչի, որոշումների կայացման գործում ռազմավարական վերլուծության դերի ու նշանակության տեսական գործոնները²⁴: Ի դեպ՝ այդ համաժողովին մասնակցել է նաև թուրքական «Մերձավոր Արևելքի ռազմավարական հետազոտությունների կենտրոն»-ի տնօրեն Հ. Քանրուլթը²⁵: Ակնհայտ է, որ արդեն իսկ ԱՀԿ-ի կողմից ուշադրություն է դարձվում երկրում գործող ռազմավարական հետազոտությունների ոլորտում գործող շրջանակներին: Վերջին տարի-

¹⁸ MIT ikiye bölündü!, Vatan, 12.11.2010, <http://haber.gazetevatan.com/mit-ikiye-bolundu/340367/1/Haber>

¹⁹ MIT Faaliyet Raporu 2010, s. 3, http://www.mit.gov.tr/faaliyet_raporlari/faaliyet_raporu2010.pdf

²⁰ Diplomat appointed to Turkey's intel body, Hürriyet Daily News, 07.10.2011.

²¹ MIT Akademisi kuruluyor, Akşam, 03.03.2008.

²² MIT ikiye bölündü, NTV, 12.11.2010,

<http://www.ntvmsabc.com/idd/25150946/#storyContinued>.

²³ Sbu ԱՀԿ-ի պաշտոնական կայք՝ <http://www.mit.gov.tr/isamer.html>; MIT, İstihbarat akademisi kurdu, Sabah, 19.08.2011:

²⁴ Sbu ԱՀԿ-ի պաշտոնական կայք՝ <http://www.mit.gov.tr/icinta.html>:

²⁵ Tek istihbarata bağlı kalmamalı, Milliyet, 09.06.2012:

ներին Թուրքիայի ԱԳՆ-ի կողմից երկրի վերլուծական-հետազոտական կենտրոնների ու փորձագետների հետ ինտենսիվ համագործակցության հաստատման ու շփումների օրինակով ԱՀԿ-ն նույնպես աստիճանաբար սերտ համագործակցություն կհաստատի երկրի վերլուծական-ուղեղային կենտրոնների (*think-tank*) հետ՝ դրանց մասնագիտական-կադրային ներուժն օգտագործելով ռազմավարական հետախուզական-վերլուծական գործունեության մեջ:

Ամերիկյան մոդելի օրինակով վերակազմավորումների ջրջանակում ԱՀԿ-ի տանիքի ներքո 2012 թ. ստեղծվեց Հետախուզության համակարգման կենտրոնը (İstihbarat Koordinasyon Merkezi), որի նպատակը հետախուզական ծառայությունների ու գերատեսչությունների միջև արդյունավետ համագործակցության ու հետախուզական տեղեկատվության համակարգման ապահովումն է: Այն, փաստորեն, դառնում է երկրի հետախուզական հանրույթի տեղեկատվության համակարգումն ապահովող մարմին: Կենտրոնը կազմված է ԳՇ-ի, Ժանդարմերիայի, Անվտանգության գլխավոր տնօրինության ու ԱՀԿ-ի կողմից հետախուզության համար պատասխանատու հինգական ներկայացուցիչներից: Գլխավոր շտաբի, ոստիկանության, Ժանդարմերիայի և այլ գերատեսչություններից եկող հետախուզական տեղեկատվությունը հավաքվելու և գնահատվելու է այդ կենտրոնում: Փաստորեն, բոլոր մարմինների կողմից հետախուզական տեղեկատվության հավաքումն ու փոխանակումն իրականացվելու են ԱՀԿ-ի տանիքի ներքո²⁶:

Ամփոփելով ԱՀԿ-ի բարեփոխումները և վերջին տարիներին հատկապես արտաքին հետախուզության ոլորտում ձեռնարկված արդիականացման քայլերը՝ կարելի է փաստել, որ դրանք ուղղված էին մի կողմից՝ այդ կազմակերպությունը լիովին դնելու քաղաքացիական իշխանությունների վերահսկողության ներքո, մյուս կողմից էլ՝ դրա կառուցվածքային ու գործառնական փոփոխություններով համապատասխանեցնելու Թուրքիայի արտաքին քաղաքականության հրամայականներին ու աշխարհաքաղաքական գործընթացներին: ԱՀԿ-ի համակարգում կատարվող բարեփոխումներին զուգահեռ Թուրքիայի կառավարության կողմից 2010 թ. իրականացվեցին

նաև որոշ բարեփոխումներ արտաքին գործերի նախարարությունում հատկապես կառուցվածքային առումով²⁷: Թուրքիայի գործող կառավարության նախաձեռնությամբ հատկապես հետախուզական մարմինների ու ԱԳՆ-ի համակարգում իրականացվող կառուցվածքային-կադրային փոփոխությունները միտված են նաև կարծրատիպային թե՛ գործառնական, թե՛ աշխարհայացքային հին մոտեցումներից ձերբագատվելու, նոր «հրամայականների» ու «առաքելությունների» համար կարող ու գաղափարապես պատրաստված մասնագիտական-կադրային ներուժի մոբիլիզացմանը:

²⁶ Erdoğan'ın talimatıyla kurulan birimden nokta operasyon!, <http://www.samanyoluhaber.com/gundem/Erdoğanın-talimatıyla-kurulan-birimden-nokta-operasyon/922694/>; İstihbarat birleşti yeni patron MIT, <http://www.timeturk.com/tr/2012/12/22/istihbarat-birlesti-yeni-patron-mit.html>

²⁷ Damla Aras, Turkey's Ambassadors vs. Erdoğan, Middle East Quarterly, Winter 2011, p. 49.

ԱՐԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԶԻՆԱՍՏԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ
«ԱՐԱՐԱԿԱՆ ԳԱՐՆԱՆ» ՆԿԱՏԱՄԱՐ

Մերձավոր Արևելքում (ՄԱ) Չինաստանի ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) քաղաքականության ակտիվացումը վերջին տասնամյակներին պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից գերիշխողը համաշխարհային քաղաքականությունում Պեկինի առանցքային դեր ստանձնելու ձգտումն է: ՄԱ-ը աշխարհաքաղաքական նշանակություն ունեցող տարածաշրջան է, հետևաբար տարածաշրջանի գործերին ակտիվ մասնակցությունը Պեկինի համար անհրաժեշտ նախապայման է գլոբալ տերության կարգավիճակի հասնելու գործում: Տնտեսական օգնության, ներդրումների և քաղաքական աջակցության ձևով «soft power»-ի իրականացումը Պեկինի՝ «Մեծ Մերձավոր Արևելքի» քաղաքականության անկյունաքարն է: ՉԺՀ-ը ձգտում է տարածաշրջանի երկրների հետ հարաբերություններ զարգացնել ինչպես երկկողմանի, այնպես էլ բազմակողմ դիվանագիտության ձևաչափով: Պեկինն արաբական պետությունների հետ համագործակցում է Չին-արաբական համագործակցության համաժողովի, Պարսից ծոցի արաբական պետությունների համագործակցության խորհրդի և չին-աֆրիկյան համագործակցության ֆորումի շրջանակներում: Պեկինը կայուն երկկողմ հարաբերություններ է զարգացնում ոչ միայն տարածաշրջանի ռազմավարական նշանակությամբ երկրների, այլև Չինաստանի համար էներգետիկ հետաքրքրություն չներկայացնող և ռազմավարական առումով կարևորություն չներկայացնող երկրների հետ: Պեկինը ձգտում է ՄԱ-ում հնարավորինս ընդլայնելու իր տնտեսական ներկայությունը տարածաշրջանի երկրների հետ առևտրային կապերի զարգացման միջոցով: Չինաստանը շահագրգռված է ոչ միայն ՄԱ-ի երկրների տնտեսություններում հնարավորինս մեծ չափով

ներդրումներ իրականացնելու մեջ, ընդ որում՝ առանց քաղաքական նախապայմանների, այլև խրախուսում է սեփական տնտեսության մեջ մերձավորարևելյան, հատկապես արաբական երկրների կողմից իրականացվող կապիտալ ներդրումները:

Տարածաշրջանում ՉԺՀ-ի գլխավոր մրցակիցն ԱՄՆ-ն է, ինչն ինքնին պայմանավորում է Պեկինի մերձավորարևելյան քաղաքականության բովանդակությունն ու բնույթը: Խնդիրն այն է, որ Չինաստանն իր արագ աճող տնտեսության համար պահանջվող նավթային պահանջարկի 50 %-ն ապահովում է ՄԱ-ից ներկրվող նավթի հաշվին, որն առաջիկա տարիներին կարող է հասնել 70 %-ի: Հետևաբար ՄԱ-ի երկրների էներգետիկ սեկտորում չինական նավթային ընկերությունների համար ամուր դիրքերի ապահովումը Չինաստանի մերձավորարևելյան քաղաքականության գերակա ուղղությունն է: Սակայն ԱՄՆ-ն, ինչպես նաև Արևմուտքի երկրները ՉԺՀ-ի էներգետիկ «մեծ պահանջարկը» սպառնալիք են դիտում համաշխարհային էներգետիկ շուկայի կայունության ու գլոբալ նավթագազային աշխարհաքաղաքական հավասարակշռությանը, այսինքն՝ մեծ քանակությամբ էներգիա սպառող երկրների կենսական շահերին: Իսկ Չինաստանի տնտեսության դիմամիկ աճը նավթի գների բարձրացման, էներգետիկ պաշարների համար մղվող պայքարի սրման, շրջակա միջավայրի աղտոտման և գլոբալ տաքացման պատճառ է համարվում:

Այնուհանդերձ, Պեկինն աստիճանաբար ընդլայնում է ՄԱ-ում իր քաղաքական և տնտեսական ներկայությունը՝ տարածաշրջանային գործընթացների վրա առավել մեծ ազդեցություն ձեռք բերելով:

Այս առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում 2011 թ. սկզբից ի վեր Հյուսիսային Աֆրիկայում (ՀԱ) և ՄԱ-ում տեղի ունեցող իրադարձությունները, որոնք բնավ չէին կարող անտարբեր և անմասն թողնել Պեկինին: Նշենք, որ չին փորձագետներն իրենց նախնական գնահատականներում անկարգությունների պատճառները հիմնականում պայմանավորում էին այդ երկրների քաղաքական համակարգերի ու սոցիալական հակասություններով, տնտեսության ոլորտում առկա խնդիրներով, քնակչության շրջանում զբաղվածության անմխիթար վիճակով, մշակութային ու կրոնական հիմնախնդիրներով, արտաքին միջամտությամբ և մի շարք այլ գործոններով: Վերջիններիս համաձայն՝ նոր պայթյունը երկար ժամանակ կուտակված էին խնդիրների հետ մեկտեղ ջրի

երես հանեց տարածաշրջանում զարգացման մոդելի ձևափոխության միտումներն ու անխուսափելիությունը¹:

Գործնականում Չինաստանը բախվեց արագ փոփոխվող զարգացումների հետ և ստիպված էր հարմարեցնել իր արտաքին քաղաքականությունն ընթացիկ իրավիճակների հետ: Չինական ՂԼՄ-ները կարճաժամկետ շփոթությունից հետո դրանք անվանեցին «արաբական սոցիալական և քաղաքական հուզումներ»: Իսկ ավելի ուշ, չինական ՂԼՄ-ներում շրջանառության մեջ դրվեցին «արաբական գարուն» և «արաբական հեղափոխություն» եզրույթները:

Սակայն Պեկինին մտահոգում էին ոչ միայն այդ երկրների հետ իր հարաբերությունների հեռանկարի հետ կապված խնդիրները, որոնց մի մասի հետ ՉԺՀ-ի հարաբերությունները կառնում են ռազմավարական մակարդակի, այլև մերձավորարևելյան զարգացումների վարակիչ անդրադարձը սեփական երկրում: Այդ իսկ պատճառով Պեկինն անմիջապես միջոցներ ձեռնարկեց Չինաստանի ներսում հնարավոր հետևանքների կանխարգելման և ներքին կայունության ապահովման, ինչպես նաև տարածաշրջանում իր աճող տնտեսական և քաղաքական շահերի պաշտպանության ուղղությամբ: Դրանք միտված էին արաբական աշխարհում տեղի ունեցող անկանխատեսելի և անսպասելի իրադարձությունների արդյունքում ՉԺՀ-ի տնտեսական կորուստների նվազեցմանը²:

ՉԺՀ-ի կառավարության անշուշտ չէր կարող չմտահոգել Չինաստանի բնակչության շրջանում սոցիալական խառնածուխյան հնարավոր աճը՝ կապված բնակարանային հարկերի և սննդամթերքի գների բարձրացման հետ: ՉԺՀ-ի նախագահ Հու Չինպաոն 2011 թ. փետրվարի 19-ին նահանգային և նախարարական մակարդակի պաշտոնատար անձանց հետ հանդիպման ընթացքում հայտնեց, որ անհրաժեշտ է լուծել «առկա խնդիրները, որոնք կարող են վտանգել հասարակության ներդաշնակությունն ու կայունությունը»: Նախագահը հայտարարեց, որ պետք է ժողովրդին առավել որակյալ սոցիալական ծառայություններ մատուցել և բարելավել համացանցի տեղեկատվության կառավարումը՝ «հասարակական կարծիքն ուղղորդելու նպատակով»: Ինչդիրն այն է, որ համացանցի միջոցով երկրի բնակիչներին կոչ էր արվում հանդես գալու «Հասմիկի հեղափոխության» անվան

տակ՝ իշխանություններին ներկայացնելով «սննդի, բնակապահովման, աշխատանքի, արդարության, ազատության, ժողովրդավարության, քաղաքական բարեփոխումների, բազմակուսակցական կառավարման և այլ» պահանջներ: Փետրվարի 20-ին չինական իրավապահ մարմինները ստիպված եղան ցրել ՉԺՀ-ի մեկ տասնյակից ավելի քաղաքներում, այդ թվում Պեկինում ու Շանհայում կազմակերպվող չիպազրված ցույցերը, որոնց ընթացքում ձեռքակալվեց հարյուրից ավելի ակտիվիստ: Երկրի նախագահը հրահանգավորեց խստացնել համացանցի նկատմամբ վերահսկողությունը: Իշխանությունները սահմանափակեցին զանգվածային բողոքներով համակված երկրներից ստացվող փողոցային ելույթների վերաբերյալ տեղեկատվական հոսքը: Անկասկած, վերոնշյալ երկրների և Չինաստանի ցուցարարների հնչեցրած դժգոհությունների միջև բազմաթիվ ընդհանրություններ կային, սակայն Պեկինին հաջողվեց խիստ վերահսկողություն սահմանել ՂԼՄ-ների, համացանցի և այլ ֆորումների նկատմամբ, ինչը բարդություններ ստեղծեց զանգվածային ցույցերի կազմակերպման համար:

Այնհայտորեն հորդորելով զանգվածների չենթարկվել կապիտալիստական Արևմուտքի սադրանքներին՝ չինական հայտնի վերլուծական կենտրոնները հանդես եկան «Արևմտյան դավադրության վերաբերյալ նախագոյուցացումներով՝ վերջիններին նպատակ հայտարարելով զարգացող Չինաստանի թուլացումը՝ սկսած ռազմական զսպումից մինչև «ժողովրդավարական իդեալների տարածումը»: Վերջիններին կարծիքով Պեկինին վարկաբեկելու ու սանձելու նպատակով Վաշինգտոնը գործի է դրել իր ռազմավարական լծակները՝ «արժեքային համակարգն ու փափուկ ուժը»:

Անշուշտ, ՀԱ-ում ու ՄԱ-ում բողոքի ցույցերն ու հեղափոխությունները լուրջ փորձություն դարձան նաև Չինաստանի արտաքին քաղաքականության համար, որի գլխավոր սկզբունքն է չմիջամտության հայեցակարգը³: Հատկապես «չմիջամտության քաղաքականությունն» է Պեկինը ընդգծում որպես իր արտաքին քաղաքականության անկյունաքար (և ոչ միայն ՄԱ-ում)՝ այն համարելով իբրև գլխավոր երաշխիք տարածաշրջանային և գլոբալ կայունության պահպանման գործում՝ միաժամանակ զուգահեռներ տանելով «Չինաստանի ներքին գործերին չմիջամտության»

¹ Влияние беспорядков в ближневосточном регионе на Китай, Russian.people.com.cn, 04.03.2011. <http://russian.people.com.cn/31520/7308133.html>

² Jing-Dong Yuan, Arab Spring, Global Repercussions, World Politics Review (WPR), 20.12.2011, p. 8.

³ African Revolutions Challenge Chinese Diplomacy, Intelligence Quarterly, 11.04.2011. <http://www.intelligencequarterly.com/2011/04/north-african-revolutions-challenge-chinese-diplomacy/>

հետ այնպիսի ցավոտ հարցերում, ինչպիսիք Թալվանի ու Տիբեթի խնդիրներն են⁴: Պեկինը պնդում է, որ պետք է հետամուտ լինել այլ պետությունների ներքին գործերին չմիջամտության սկզբունքին՝ միաժամանակ ընդգծելով Չինաստանի շահերի պաշտպանության անհրաժեշտությունը⁵: Այդ պատճառով սկզբնական շրջանում Չինաստանը ձգտում էր հնարավորին չափ հեռու մնալ հակամարտությունների նկատմամբ որևէ գնահատականներից՝ սահմանափակվելով միայն հակամարտող կողմերին հաշտություն կնքելու և խաղաղությունը վերականգնելու կոչերով:

Թունիս

Թունիսյան իրադարձությունների սկզբում Պեկինում փորձում էին խնդրին առանձնահատուկ ուշադրություն չդարձնել մասամբ երկրի զարգացումների վերաբերյալ հստակ պատկերացումների բացակայության պատճառով⁶: Թունիսի հեղափոխությունը Չինաստանին դրել էր բարդ իրավիճակի առջև, այդ իսկ պատճառով հուզումների սկզբնական փուլում, ի տարբերություն Արևմուտքի, Չինաստանը հիմնականում ձեռնպահ էր մնում որևէ մեկնաբանությունից և գնահատականներից⁷: Բեն Ալլիի՝ Թունիսից հեռանալուց հետո Չինաստանի ԱԳՆ-ի խոսնակ Հուն Լեյը հայտնեց, որ «Թունիսը Չինաստանի բարեկամն է: Չինաստանը մտահոգված է թունիսյան իրադարձություններով և հույս է հայտնում, որ երկրում կայունությունը հնարավորինս կարճ ժամկետում կվերականգնվի»⁸: Մարտի 7-ին Չինաստանի փոխարտգործնախարար Շայ Մունը (Zhai Jun) Թունիս ժամանեց՝ նոր կառավարության հետ կապերի հաստատման և համագործակցության ամրապնդման նպատակով⁹: Չին դիվանագետը հայտնեց, որ Չինաստանը հարգում է թունիսից ժողովրդի ընտրությունը և

⁴ Пахомова М., КНР: к вопросу о «политике невмешательства во внутренние дела», Политборд, 9.10.2012. <http://www.inomnie.ru/debate/11903/>
⁵ Unease from Afar, The Brookings Institution, 18.11.2011. <http://www.brookings.edu/research/articles/2011/11/18-arab-awakening-china-pollack>
⁶ Jonas Parello-Plesner, China and the Arab Spring: External and Internal Consequences and Implications for EU-China Cooperation, ISPI, No. 53, MAY 2011, p. 2.
⁷ African Revolutions Challenge Chinese Diplomacy, ԵՂ. աշխ., էջ 1:
⁸ China Hopes Stability in Tunisia Restored: FM, China Daily, 15.01.2011. http://www.chinadaily.com.cn/imqq/china/2011-01/15/content_11868329.htm; BBC, 15.01.2011.
⁹ China Respects Choice of Tunisian People, China Daily, 08.03.2011. http://www.chinadaily.com.cn/china/2011-03/08/content_12134764.htm

ցանկանում է խորացնել վաճառական բարեկամական հարաբերությունները Թունիսի հետ: Նա նաև հայտարարեց Թունիսի հետագա զարգացման նպատակով 6 մլն ԱՄՆ դոլարի անվարձահատուց օգնություն տրամադրելու վերաբերյալ ԶԺՀ-ի կառավարության մտադրությունը¹⁰:

Փաստորեն, արագ արձագանքելով երկրում նոր վարչախմբի փոփոխությանը՝ ԶԺՀ-ը հաջող անցում կատարեց Թունիսի նոր կառավարության ճանաչման հարցում¹¹: 2012 թ. հունիսի սկզբին Թունիսի վարչապետ Համադի Ջիբալին (Hamadi Jebali) չինացի իր գործընկերոջ հետ հանդիպման ընթացքում նշեց, որ Թունիսը միջազգային նոր իրավիճակում ռատ ավելի է կարևորում Պեկինի դերն ու երկու երկրների միջև ռազմավարական, փոխշահավետ և «խիստ փոխլրացնող» համագործակցությունը՝ միաժամանակ խոստանալով Թունիսում չինական ընկերությունների ներդրումների համար բարենպաստ միջավայր ստեղծել¹²:

Եգիպտոս*

Նախքան Եգիպտոսում հեղաշրջման իրականացումը՝ 2011 թ. հունվարի 25-ից փետրվարի 11-ն ընկած ժամանակահատվածում, չինական մամուլը քննադատության ենթարկեց Եգիպտոսի հակակառավարական ելույթները՝ դրանք որակելով իբրև «ավազակային փողոցային ժողովրդավարություն»¹³: Միաժամանակ բարձր գնահատելով Եգիպտոսի հետ վաճառական բարեկամությունն ու ռազմավարական համագործակցությունը՝ պաշտոնական Պեկինը հանդես եկավ «սոցիալական անվտանգության

¹⁰ African Revolutions Challenge Chinese Diplomacy, ԵՂ. աշխ., էջ 1, Xinhua News Agency, 7.03.2011; Tunisia Online, 8.03.2011.
¹¹ African Revolutions Challenge Chinese Diplomacy, ԵՂ. աշխ., էջ 1:
¹² China, Tunisia Confident in Prospect of Bilateral Ties, GOV.cn, 2.06.2012. http://www.gov.cn/misc/2012-06/02/content_2151509.htm
¹³ Չին-եգիպտական համագործակցության մասին մանրամասն տե՛ս Արյունյան Ա., Օ Կիտայսկո-египетских отношениях, "Модернизация и Традиция", XXVI международная конференция, Источниковедение и историография стран Азии и Африки, Санкт-Петербург, 2011 г., стр. 9-10, Հարությունյան Ա., Չին-եգիպտական ռազմաքաղաքական համագործակցության շուրջ, Մերձավոր Արևելք, Պատմություն, Քաղաքականություն, Մշակույթ, հ. VII, Երևան, 2011 թ., էջ 149-158, Հարությունյան Ա., Չին-եգիպտական արևտրատնտեսական համագործակցության շուրջ, Արևելաասիական ուսումնասիրություններ, հ. II, Երևան, 2011 թ., էջ 87-104:
¹⁴ Christopher Bodeen, China, Wary of Arab Spring, Hosts Egypt's Morsi, The Jakarta Post, 29.08.2012. <http://www.thejakartapost.com/news/2012/08/29/china-wary-arab-spring-hosts-egypts-morsi.html>

ապահովման և երկրի բնականոն հունի վերականգնման ուղղությամբ Եգիպտոսի իշխանությունների գործադրած ջանքերի» պաշտպանությամբ¹⁴: Չինաստանը վստահություն էր հայտնում Կահիրեի իմաստնության ու առկա ղեկավարությունները հաղթահարելու և իրադրությունը սեփական ուժերով, առանց արտաքին միջամտության կարգավորելու կարողության հանդեպ: Պեկինը նաև ակնկալում էր, որ չին-եգիպտական հարաբերությունները չեն տուժի անկարգությունների հետևանքով¹⁵:

ԶժՀ-ի կառավարությունն անմիջապես Եգիպտոսից հարյուրավոր շինացիների, թալանցիների (300), այդ թվում՝ եգիպտական տարբեր քաղաքներում գտնվող հոնկոնգի գրոսաշրջիկների արագ ու արդյունավետ տարհանման նպատակով չարտերային չվերթներ իրականացրեց¹⁶: Լշենք, որ Եգիպտոսում բնակվող չինացի քաղաքացիների թիվը հասնում էր 1800-ի¹⁷:

Չինացիների տարհանման գործը որոշակիորեն նպաստեց չինական մամուլում «ժողովրդավարության և սոցիալական վերափոխումների» վերաբերյալ զգայուն խնդիրների լուսաբանումից հասարակության ուշադրության շեղմանը¹⁸: Եգիպտական «Լոտոսի հեղափոխության» վերաբերյալ տեղեկատվության լուսաբանման նկատմամբ վերահսկողության հաստատմանը զուգահեռ չինական իշխանությունները քննարկում էին զարգացող երկրների համար «արևմտյան ժողովրդավարական մոդելի» անհամատեղելիության ուշադրության մամուլը գրում էր, որ ամերիկյան և եվրոպական կառույցներն ու նորմերը չեն կարող համապատասխանել աֆրիկյան և մերձավորարևելյան իրականությանը, մանավանդ որ «գունավոր հեղափոխությունները» երբևէ իրական ժողովրդավարության չեն հանգեցրել: Փորձագիտական շրջանակները, ընդգծելով Եգիպտոսի և ԱՄՆ-ի միջև դաշնակցային հարաբերությունների փաստը, գտնում էին, որ

եգիպտական հեղափոխությունը կարող է անգամ վտանգել ԱՄՆ-ում ԱՄՆ-ի շահերը: Չին փորձագետների կարծիքով Եգիպտոսում և հարևան երկրներում ռեալ ընտրությունների դեպքում հնարավոր էր համարվում իշխանության իսլամիստ առաջնորդների գալու փաստը, որոնք ոչ միայն «արհամարհում են ամերիկյան ժողովրդավարությունը, այլև սպառնում են ԱՄՆ-ի նավթային առաքումներին»: Դրա վառ ապացույցն էր Իրանական Իսլամական հեղափոխությունը, որից հետո մուսուլմանական երկրներում գրեթե բոլոր ժողովրդավարական առաջադեմ ընտրությունների արդյունքում իշխանության են եկել Արևմուտքին և Իսրայելին թշնամաբար տրամադրված իսլամական վարչակարգերը:

Դեռ 2009 թ. Չինաստանը քննադատում էր ԱՄՆ-ին Իրանում հակակառավարական ցույցերին աջակցություն ցուցաբերելու համար: Պաշտոնական «China Daily»-ն գրում էր, որ ԱՄՆ-ում և աշխարհում առհասարակ խաղաղության և կայունության պահպանման ցանկության դեպքում Իրանում, այսպես կոչված, «գունավոր հեղափոխությամբ» քաոսի առաջացումը խիստ վտանգավոր է, և որ երկրի ապակայունացումը չի բխում որևէ կողմի շահերից²⁰:

Մյուս կողմից՝ չին փորձագետները կարծում էին, որ իսլամիստական ցենտրիզմը, պայքարելով Արևմուտքի կողմից «իսլամական սպառնալիքի» տեսության և ներքին ծայրահեղականության ու ահաբեկչության դեմ, կարող է իսլամի վերաբերյալ պատկերացումների վերանայման գործում դրական դեր խաղալ: Իսլամիստական կենտրոնամետ ուժերի ընդլայնումը, վերջիններիս վարած չափավոր և կուսակցական-քաղաքական ուղեգիծը որոշ իմաստով ցույց են տալիս, որ այս ուժերի գլխավոր խնդիրը ծայրահեղականությունից և կոշտ արմատականությունից հրաժարումն ու իրենց ազգային առանձնահատկություններին ու պայմաններին համապատասխան զարգացման նոր գաղափարների և ուղիների որոնումն ու իրագործումն է²¹:

¹⁴ Willy Lam, Beijing Wary of “Color Revolutions” Sweeping Middle East/North Africa, The Jamestown Foundation, Vol. XI, Issue 3, 10.02.2011, p. 3. http://www.jamestown.org/uploads/media/cb_11_3_04.pdf; FMPRC.gov.cn, 30.01.2011.

¹⁵ Xinhua News Agency, 10.02.2011.

¹⁶ Willy Lam, Special Commentary: Beijing’s Response to Egypt’s Lotus Revolution, Vol.: 0, Issue: 0, 10.02.2011, p. 1. [http://www.jamestown.org/single/?no_cache=1&xtnews\[tt_news\]=37444&xt_tnews\[backPid\]=61&clash=b9a8931f2e](http://www.jamestown.org/single/?no_cache=1&xtnews[tt_news]=37444&xt_tnews[backPid]=61&clash=b9a8931f2e)

¹⁷ Parello-Plesner, China and the Arab Spring: External and Internal Consequences and Implications for EU-China Cooperation, ISPI, No. 53, MAY 2011, p. 2. <http://magazine.caing.com/2011-02-12/100224840.html>

¹⁸ Jonas Parello-Plesner, China and the Arab Spring, Լշվ. աշխ., էջ 2:

¹⁹ Willy Lam, Beijing Wary of “Color Revolutions” Sweeping Middle East/North Africa, Լշվ. աշխ., էջ 2:

²⁰ Նոյն տեղում, էջ 3, Asia Times, 20.06.2009.

²¹ Yao Kuangyi, The Upheaval in the Middle East and China’s Middle East Policy, Journal of Middle Eastern and Islamic Studies (In Asia), Shanghai International Studies University, Vol.: 6, No. 3, 2012, p. 5–6. <http://mideast.shisu.edu.cn/picture/article/33/5e/9c/9fc0f54c4453bbeca59f4718aa2/3c548194-582d-4ce6-8b55-268a5eaebea8.pdf>

Իսլամիստական ցենտրիզմի գաղափարական հենասյունն է հակածայրահեղականությունը և հակահեգեմոնիզմը, որի համաձայն՝ իսլամական աշխարհում արդարության ու ներդաշնակության, սոցիալական փոփոխությունների ու ժողովրդավարության կարելի է հասնել աստիճանաբար և երկխոսության միջոցով:

Բոլոր դեպքերում, Պեկինը չսահմանափակվեց սուկ հոնտո-րությամբ, այլ արագ անցում կատարեց գործնական դիվանագիտության: 2011 թ. մարտի 5–13–ին ՉժՀ–ի փոխարտգործնախարար Չժան Յզյունն աշխատանքային այցեր ունեցավ Ալժիր, Եգիպտոս, Թունիս և Սաուդյան Արաբիա: Չին դիվանագետը կարևոր քայլ գնահատեց Եգիպտոսում նոր կառավարության ձևավորումը, սոցիալական կայունությունը և երկրի տնտեսության զարգացմանն ուղղված իշխանության ջանքերը՝ միաժամանակ ՉժՀ–ի օգնությունն առաջարկելով առաջիկա դժվարությունների հարցահարման գործում²²:

Հարկ է նշել, որ Եգիպտոսում պետական հեղաշրջումից հետո՝ 2011 թ. ընթացքում, երկու երկրների պաշտոնատար անձինք առավել հանգամանալից ելույթներով հանդես չեն եկել²³:

2012 թ. մայիսի 2–3–ը ՉժՀ–ի արտգործնախարար Յան Յզեչին արդյունավետ այց ունեցավ Եգիպտոս, որի ընթացքում ընդգծեց վերջին զարգացումների ընթացքում Չինաստանի դրսևորած չմիջանորության քաղաքականությունը²⁴: ՉժՀ–ի նախարարը հանդիպումներ ունեցավ ԱՊՆ–ի գլխավոր ջարտուղար Ամր Մոսայի և իր գործընկեր Նաբիլ ալ–Արաբիի, վարչապետ Իսամ Շարիֆի հետ: Չին նախարարն ընդգծեց, որ չին–եգիպտական հարաբերություններն ունեն ամուր հիմքեր և «հարավ–հարավ» համագործակցության լավագույն օրինակ են ծառայում: Նոր իրավիճակում կողմերը շարունակում են ամրապնդել քաղաքական և ռազմավարական համագործակցությունը: Չինաստանը հարգում է եգիպտացի ժողովրդի ընտրությունն ու բարձր է գնահատում Եգիպտոսի ակտիվ և կառուցողական դերը տարածաշրջանային կայունության և զարգացման գործում²⁵: Իսկ 2012 թ. հուլիսի 19–ին՝ Պեկինում Չին–աֆրիկական ֆորումի շրջանակներում հանդիպման ընթացքում, ՉժՀ–ի նախագահը հայտարարեց, որ Չինաստանն աֆրիկյան երկրներին 20 մլրդ ԱՄՆ դոլարի վարկեր կտրամադրի՝ հավելելով, որ այդ թվերը կրկնակի գերազանցում են

2009 թ. նոյեմբերին Շարմ ալ–Շեյխում տեղի ունեցած ֆորումի ընթացքում նախատեսվող գումարին²⁶:

Հունիսի 24–ին Պեկինը շնորհավորեց Մուհամմեդ Մուրսիին՝ Եգիպտոսի նախագահի պաշտոնում ընտրվելու առիթով, իսկ եգիպտացի ժողովրդին ՉժՀ–ի հարգանքն արտահայտեց՝ ինքնուրույն ընտրություն կատարելու կապակցությամբ²⁷:

Եգիպտոսի հակակառավարական ելույթներից և հեղաշրջումից հետո երկու երկրների միջև ջերմ հարաբերությունները վերահաստատելու հնարավորություն էր 2012 թ. օգոստոսի 28–30–ին Եգիպտոսի նախագահ Մուհամմեդ Մուրսիի՝ ՉժՀ կատարած այցը: ՉժՀ–ի նախագահ Հու Չինթանը արտահայտեց «նոր ժամանակներում Եգիպտացիական հարաբերություններում նոր էջ բացելու» ՉժՀ–ի պատրաստակամությունը²⁸: Նախագահի այցի նախօրեին ՉժՀ–ում Եգիպտոսի դեսպան Անմեդ Ռեզը «Սինխուս» գործակալությանը տված հարցազրույցում նշել էր, որ Եգիպտոսի նոր նախագահի այցը Չինաստան, անկասկած, պետք է ծառայեր երկկողմանի հարաբերությունների զարգացմանը հնարավոր բոլոր ուղղություններով²⁹: Նշենք, որ ՉժՀ–ի այցից հետո Եգիպտոսի նախագահը պատրաստվում էր այցելել ԱՄՆ՝ Նյու Յորք և Վաշինգտոն՝ Նյու Յորքում մասնակցելու ՄԱԿ–ի ԳԱ–ի նստաշրջանին, իսկ Վաշինգտոնում բանակցություններ վարելու ԱՄՆ–ի բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ³⁰:

Հարկ է նկատել, որ սա նախագահական պաշտոնը տանձնելուց հետո Մուրսիի առաջին պետական այցն էր ՄԱ–ի և Աֆրիկայի շրջանակներից դուրս, որով ընդգծվում էր Եգիպտոսի համար Չինաստանի կարևորությունն իբրև ՄԱԿ–ի ԱԲ–ի մշտական

²² Չինական կառավարության տվյալներով աֆրիկական պետությունների հետ ՉժՀ–ի առևտրային շրջանառությունը 2011 թ. հասել է ռեկորդային ցուցանիշի՝ 166,3 մլրդ դոլար՝ 2009 թ. աճելով 83 %–ով:

²³ Очередная пресс–конференция 25 июня 2012 г. у официального представителя МИД КНР Хун Ляя, МИД КНР, 25.06.2012. <http://www.fmprc.gov.cn/rus/xwfw/fyrth/bjxzhzhdh/t945889.shtml>

²⁴ Китай предложил Египту программу развития отношений между странами, РИА Новости, 28.08.2012.

²⁵ <http://ria.ru/world/20120828/732406506–print.html?ria=–o22j2vaa411rvpne6b5humapudfh5dlg>

²⁶ Предстоящий визит президента Египта поможет вывести китайско–египетские отношения на новую ступень–посол Египта в КНР, Жэньминь Жибао, 24.08.2012. <http://russian.people.com.cn/31521/7922267.html000>

²⁷ Президент Египта М. Мурси 23 сентября совершит визит в США, Жэньминь Жибао, 23.08.2012. <http://russian.people.com.cn/31520/7920893.html>

²² Очередная пресс–конференция 10 марта 2011 г. у официального представителя МИД КНР Цзян Юй, Посольство Китайской Народной Республики в Республике Армения, 10.03.2011. <http://am.chineseembassy.org/rus/ztlm/fyrth/t806056.htm>

²³ Подкопаева М., Египет между США и Китаем, 29.01.13. <http://zavallinka.org/read.php?id=610285>

²⁴ Мария Пахомова, КНР: к вопросу о «политике невмешательства во внутренние дела», Ելշլ, աշխ., էջ 1:

²⁵ Очередная пресс–конференция 3 мая 2011 г. у официального представителя МИД КНР Цзян Юя, Посольство Китайской Народной Республики в Республике Казахстан, 03.05.2011. <http://kz.chineseembassy.org/rus/fyrth/t820278.htm>

անդամի, իբրև ռազմավարական գործընկերոջ, ինչպես նաև առևտրային ու ներդրումային կենսական աղբյուրի: Լյցը դիտվում էր նաև իբրև ԱՄՆ-ի ուղղությամբ խիստ սևեռումից Եգիպտոսի արտաքին քաղաքականության վերակողմնորոշում դեպի ԶԺՀ³¹: Մուրսին բազմիցս հայտնել էր Եգիպտոս-ԱՄՆ հարաբերությունների վերանայան իր մտադրության մասին՝ Եգիպտոսի արգելիչ նախքան և եգիպտական հասարակության պահանջների հառաքել խոր արտացոլման նպատակով: Սա ենթադրում էր միջազգային ասպարեզում Եգիպտոսի դիրքերը բարձրացնելու նպատակով անցյալում անտեսված Չինաստանի և մի շարք այլ երկրների ու տարածաշրջանների հետ ռազմավարական մակարդակի ավելի սերտ փոխհարաբերությունների զարգացում³²: Ըստ չինական պաշտոնական մամուլի՝ Եգիպտական կողմը ցանկանում էր վերանայել Արևմուտքից չափազանց կախման մեջ գտնվող իր արտաքին քաղաքականությունը և արևելյան ու արևմտյան պետությունների հետ հարաբերություններում հավասարակշռված մոտեցում որդեգրել: Չինաստանը որակելով իբրև աշխարհում հավասարակշռություն ապահովող կարևոր երկիր՝ Մ. Մուրսին գտնում էր, որ այն չափազանց կարևոր դեր է խաղում ողջ միջազգային հանրության ուշադրության կիզակետում գտնվող սիրիական ճգնաժամի և այլ խնդիրների կարգավորման գործում³³: Չինաստանն անվանելով «լավ եղբայր, բարեկամ և գործընկեր»՝ Մուրսին նշեց, որ Եգիպտոսը «գնահատում և հարգում է ԶԺՀ-ի արդար դիրքորոշումը տարածաշրջանային և միջազգային լուրջ խնդիրների նկատմամբ և պատրաստ է տարբեր մարտահրավերների դիմակայման նպատակով ամրապնդելու կապերն ու համակենտրոնացնելու ջանքերը չինական կողմի հետ»³⁴: ԶԺՀ-ի փոխնախագահ Սի Ծինպինը նշեց, որ Եգիպտոսը և Չինաստանը պետք է կենտրոնացնեն իրենց ջանքերը տարածաշրջանային և միջազգային խնդիրների շուրջ՝ հավելելով, որ «[Չինաստանը] Եգիպտոսին միշտ համարել է առանցքային,

հավաստի գործընկեր»³⁵: Մուհամեդ Մուրսիի հետ Համաժողովրդական ներկայացուցիչների համաչինական ժողովի մշտական կոմիտեի նախագահ Ու Բանգոյի հանդիպման ընթացքում վերջինս դրական գնահատեց Չինաստանի հետ հարաբերությունների զարգացումն արտաքին քաղաքականության աստատեսիչությունում դարձնելու ուղղությամբ Եգիպտոսի նոր ղեկավարության որդեգրած ուղեգիծը: «China Daily» կառավարական թերթն անգամ գրեց, որ «Մ. Մուրսիի չինական այցը կարող է փոխել ՄԱԿ-ի քաղաքական լանդշաֆտը»³⁶:

Երկու երկրները դեմ արտահայտվեցին Սիրիայի նկատմամբ ռազմական միջամտությանը³⁷ չնայած Եգիպտոսի կողմից սիրիական իշխանությունների խիստ քննադատությանն ու նախագահական պաշտոնից Բաշար ալ-Ասադի հրաժարման օգտին հանդես գալու փաստին³⁸: Եգիպտոսը և Չինաստանը հաստատեցին իրենց փոխադարձ աջակցությունն անկախ Պաղեստինյան պետությանը՝ վերջինիս կոչ անելով համագործակցելու ՄԱԿ-ի և միջազգային այլ մարմինների հետ³⁹:

Մուրսին նշեց նաև, որ Եգիպտոսը հարգանքով է վերաբերվում չին ժողովրդի ընտրած քաղաքական համակարգին⁴⁰ և պատրաստ է «դասեր քաղելու չինական զարգացման մոդելի փորձից»⁴¹: Նշելով զարգացող երկրից զուրալ տերության կարգավիճակի՝ Չինաստանի հաջող անցում կատարելու փաստը՝ Եգիպտոսի նախագահը հավելեց, որ 1980-ականներին ՄԱԿ-ի ԱՆ-ի մշտական անդամ դառնալու և ԶԺՀ-ի միջազգային դիրքերի ամրապնդման փորձը ոչ միայն բարձր գնահատականի է արժանի, այլև ուսանելի է Եգիպտոսի համար⁴²:

Ըստ Եգիպտական ՋԼՄ-ների՝ Մուրսիի այցի հիմնական նպատակն էր Եգիպտոսում չինական ներդրումների⁴³ ավելացումն ու

³¹ Christopher Bodeen, նշվ. աշխ., էջ 1:

³² Chris Zambelis, A New Egypt Looks to China for Balance and Leverage, China Brief, The Jamestown Foundation, Vol. XII, Issue 18, 21.08.2012, p. 9. http://www.jamestown.org/uploads/media/cb_09_09.pdf

³³ Комментарий: Визит М. Мурси в КНР откроет новую страницу в китайско-египетских отношениях, Жэньминь Жибао, 29.08.2012. <http://russian.people.com.cn/31520/7927350.html>

³⁴ Китай предложил Египту программу развития отношений между странами, РИА Новости, 28.08.2012.

<http://ria.ru/world/20120828/732406506-print.html?ria=022j2vaa411rvpne6b5humapudfh5d1g>

³⁵ Chris Zambelis, նշվ. աշխ., էջ 10, Xinhua, 29.08.2012:

³⁶ Подкопаева М., նշվ. աշխ., էջ 1:

³⁷ Christopher Bodeen, նշվ. աշխ., էջ 1:

³⁸ Egyptian President Hails «Syrian revolution» in Tehran Non-Aligned Summit, Al-Arabiya News, 30.08.2012. <http://english.alarabiya.net/articles/2012/08/30/235082.html>

³⁹ Chris Zambelis, նշվ. աշխ., էջ 10, Xinhua, 30.08.2012:

⁴⁰ Подкопаева М., նշվ. աշխ., էջ 1:

⁴¹ Китай и Египет обсудили программу расширения партнерских отношений, Телеграф, 28.08.2012. <http://telegraf.com.ua/mir/aziya/kitay-i-egipt-obsudili-programmu-rasshireniya-partnerskih-otnosheniy.html>

⁴² Chris Zambelis, նշվ. աշխ., էջ 9, Freedom and Justice Party, 30.08.2012:

⁴³ Չինաստանը ներկայումս Եգիպտոսի 25-րդ արտաքին ներդրման աղբյուրն է: Այս մասին տես Chris Zambelis, նշվ. աշխ., էջ 11:

ներգրավումը: Իբրև համաշխարհային տնտեսության երկրորդ տարբերակ՝ Չինաստանը կարող է Մուրսիի կառավարությանն օգնել կենսագործելու երկրի «վերածննդի ծրագիրը»⁴⁴: Կողմերը գյուղատնտեսության, հեռահաղորդակցության, շրջակա միջավայրի, գրոսաշրջության և այլ ոլորտների վերաբերյալ 8 պայմանագիր ստորագրեցին⁴⁵: Ընդհանուր առմամբ ստորագրվեց 4,9 մլրդ ԱՄՆ դոլարի չինական վարկերի և ներդրումների, այդ թվում՝ Վերին Եգիպտոսում էլեկտրակայանի և «Կահիրե-Ալեքսանդրիա» արագընթաց մայրուղու կառուցման վերաբերյալ մի շարք պայմանագրեր⁴⁶: Պեկինն իր պատրաստակամությունը հայտնեց նաև Եգիպտոսի համացանցային ենթակառուցվածքների ընդլայնման նպատակով ներդրումներ կատարելու ուղղությամբ⁴⁷: Նշենք, որ Մ.Մուրսին ՉԺՀ էր ժամանել Եգիպտոսի առաջատար գործարարների 80 հոգանոց պատվիրակության ուղեկցությամբ, որոնք մտադիր էին ներդրումային նախագծեր քննարկել չինական 200 ընկերության հետ: ՉԺՀ-ի նախագահը Եգիպտական կողմին աջակցություն խոստացավ նաև Մուեզի ջրանցքի գոտու զարգացման գործում⁴⁸, ինչպես նաև առաջարկեց ամրապնդել չին-եգիպտական փոխադրեցությունը չին-արաբական և չին-աֆրիկյան բազմակողմ համագործակցության շրջանակներում⁴⁹:

Չինական ներդրումների գրավման հարցում Եգիպտոսն, անշուշտ, ունի ոչ միայն տնտեսական, այլև աշխարհաքաղաքական շարժառիթներ: Ինդիին այն է, որ Եգիպտոսը տարեկան 1,5 մլրդ ԱՄՆ դոլար է ստանում ԱՄՆ-ից, որից 1,3-ը՝ ռազմական նպատակներով⁵⁰: Նախքան Մուրսիի չինական այցը Եգիպտոսը բանակցություններ էր վարում Վաշինգտոնի հետ՝ 1 մլրդ ԱՄՆ դոլարի պարտքի մարման ակնկալիքով, իսկ Արժույթի Միջազգային Հիմնադրամին (IMF) դիմել էր 4,8 մլրդ ԱՄՆ դոլարի ցածր տոկոսադրույքով վարկ ստանալու խնդրանքով⁵¹: Մինչդեռ չինական կապիտալի ներարկումները եգիպտական տնտեսություն կարող են Եգիպտոսին իր ֆինանսական աղբյուրների տարրոշման

հնարավորություն ընձեռնել՝ միաժամանակ մեծացնելով Եգիպտոսի բանակցային լծակները ԱՄՆ-ի և Արժույթի Միջազգային Հիմնադրամի (ԱՄՀ), ինչպես նաև ֆինանսավորման այլ աղբյուրների նկատմամբ⁵²: Նշենք, որ Եգիպտոսին տրամադրվելիք չինական օգնությունն ընդհանուր առմամբ գնահատվում էր 2 մլրդ ԱՄՆ դոլար, որի մեջ մտնում էր 450 մլն յուան՝ 70 մլն ԱՄՆ դոլար՝ որպես անհատույց օգնություն և Եգիպտոսի Ազգային Բանկին տրամադրվող 200 մլն ԱՄՆ դոլարի արտոնյալ վարկ⁵³: Դեռևս 2011 թ. հոկտեմբերի 10-ին չինական իշխանությունները 78 000 ԱՄՆ դոլարի գումար էին հատկացրել «Չին-եգիպտական բարեկամության դպրոցին»⁵⁴:

Հարկ է նկատել, որ Եգիպտոսն իր հերթին, իբրև բազմաթիվ աֆրիկական երկրներում արտադրանք կուտակող-բաշխող կենտրոն, առանցքային տարանցիկ կենտրոն է համարվում չինական ապրանքների՝ Աֆրիկա արտահանման և Չինաստանի ու Աֆրիկայի երկրների միջև առևտրատնտեսական կապերի ու մարդասիրական փոխանակումների խթանման համար⁵⁵: Այս առևտրությամբ Մուրսին մատնանշեց Եգիպտոսի իդեալական դիրքն Աֆրիկա և ՄԱ չինական ներդրումների համար դարպաս ծառայելու հարցում՝ միաժամանակ ընդգծելով «Մետաքսի ճանապարհին» վերադառնալու Եգիպտոսի մտադրությունը՝ իբրև Եգիպտոսի և Չինաստանի միջև ուղղակի կապի⁵⁶:

Ուշգրավել այն է, որ Չինաստանից Մ. Մուրսիի վերադառնալուց հետո ԱՄՆ-ի նախագահ Օբամայի հետ Մուրսիի՝ սեպտեմբերին նախատեսվող հանդիպումը չկայացավ: 2012 թ. սեպտեմբերի 11-ին Կահիրեում ԱՄՆ-ի դեսպանատան մոտ հավաքված ամբոխը, բողոքարկելով ԱՄՆ-ում «Մուսուլմանների անսերտություն» ֆիլմի ցուցադրման դեմ, ԱՄՆ-ի դեսպանատան դրոշը պատռեցին ու հրկիզեցին: Հաջորդ օրն Օբաման եգիպտացիների մասին հայ-

⁵² Chris Zambelis, նշվ. աշխ., էջ 10:

⁵³ Лужанин С., Политика Китая на Ближнем Востоке: «накормить волков и сохранить овец», Голос России, 17.12.2012. http://rus.ruvr.ru/2012_12_17/Politika-Kitaya-na-Blizhnem-Vostoke-nakormit-volkov-i-sohranit-ovec/

⁵⁴ 2 մլրդ ԱՄՆ դոլարի մոտ 30 %-ը Մ. Մուրսին ստացել է մնացած Եգիպտոսին խոստացվել է: 2011 թ. երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը կազմել է 8,8 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ 2012 թ.՝ մոտ 9 մլրդ ԱՄՆ դոլար:

⁵⁵ Китай подарил египетским школьникам оборудование на 78 тысяч долларов, KM Онлайн, 11.10.2011. <http://www.km.ru/v-mire/2011/10/11/obrazovanie-v-mire/kitai-podaril-egipetskim-shkolnikam-oborudovanie-na-78-tysyach->

⁵⁶ Комментарий: Визит М. Мурси в КНР открывает новую страницу в китайско-египетских отношениях, նշվ. աշխ., էջ 1:

⁵⁷ Chris Zambelis, նշվ. աշխ., էջ 10. Freedom and Justice Party, 30.08.2012.

⁴⁴ Комментарий: Визит М. Мурси в КНР открывает новую страницу в китайско-египетских отношениях, նշվ. աշխ., էջ 1, Al-Arabiya, Dubai, 27.08.2012:

⁴⁵ Christopher Bodeen, China, նշվ. աշխ., էջ 1:

⁴⁶ Masry al-Youm, 29.08.2012.

⁴⁷ Chris Zambelis, նշվ. աշխ., էջ 10; Al-Arabiya, 27.08.2012:

⁴⁸ Christopher Bodeen, նշվ. աշխ., էջ 1:

⁴⁹ Китай предложил Египту программу развития отношений между странами, նշվ. աշխ., էջ 1:

⁵⁰ Chris Zambelis, նշվ. աշխ., էջ 10; Al-Akhhbar, Beirut, 17.09.2012.

⁵¹ Wall Street Journal, New York, 11.09.2012.

տարարում է. «...չեմ կարծում, որ մենք կարող ենք նրանց դաշնակից համարել, սակայն թշնամի էլ չենք համարում»: Մինչ այդ համաշխարհային լրատվամիջոցներում քննարկվում էր Եգիպտոսին 1 մլրդ ԱՄՆ դոլար պարտքի մարման ԱՄՆ-ի մտադրության հարցը, որն ընդհանուր առմամբ գնահատվում էր 3,2 մլրդ դոլար⁵⁷: Եգիպտոսին ու Թունիսին ժողովրդավարության հաջող անցում կատարած երկրների օրինակ դիտելով՝ Վաշինգտոնը որոշել էր վերջիններին 1 մլրդ ԱՄՆ դոլարի փոխառության տրամադրել՝ ենթակառուցվածքային նախագծերի իրականացման և աշխատատեղերի ստեղծման նպատակով: Մեծ ութնյակի գագաթնաժողովին «միջազգային բանկին» 20 մլրդ ԱՄՆ դոլարի նվիրաբերումով ԱՄՆ-ն իր աջակցությունն էր հայտնում Եգիպտոսի և Թունիսի տնտեսական բարեփոխումների գործընթացին⁵⁸: Սակայն դեսպանատան միջադեպից հետո ԱՄՆ-ն հայտարարեց Եգիպտոսի պարտքերի մարման կամ ֆինանսական այլ օգնություն հատկացնելու՝ Վաշինգտոնի մտադրությունից հրաժարվելու մասին:

Մինչդեռ սեպտեմբերի վերջին Պեկինում 71 երկրից ավելի քան 7000 ներկայացուցչի մասնակցությամբ չին-արաբական առևտրատնտեսական ֆորում անցկացվեց, որի ընթացքում մի շարք ծրագրային փաստաթղթեր ընդունվեցին⁵⁹: Սեպտեմբերի 28-ին՝ Նյու Յորքում ՉԺՀ-ի արտգործնախարարի և Եգիպտոսի արտգործնախարար Մուհամմեդ Քամիլ Ամրի հանդիպման ընթացքում, չին նախարարը նշեց, որ չին-եգիպտական հարաբերությունները շարունակում են ակտիվանալ, կողմերը սատարում են միմյանց և սերտ կապեր պահպանում միջազգային և տարածաշրջանային գործունեության շրջանակներում⁶⁰:

Դեկտեմբերի 8-ին բացվեց Չինաստանի զարգացման պետական բանկի Կահիրեի ներկայացուցչությունը, չինական դեսպանատան առևտրային բաժինը և Եգիպտոսում չինական առևտրային պալատը կազմակերպեցին երկկողմ ներդրումների և առևտրատնտեսական կապերի զարգացման ոլորտում չին-եգիպտական համագործակցության խթանման նպատակով «Չին-եգիպտական ներդրումային համագործակցության համաժողովը»⁶¹:

⁵⁷ Подкопаева М., նշվ. աշխ., էջ 1:

⁵⁸ Yao Kuangyi, The Upheaval in the Middle East and China's Middle East Policy, նշվ. աշխ., էջ 12:

⁵⁹ Подкопаева М., նշվ. աշխ., էջ 1:

⁶⁰ Ян Цзэци встретился с министром иностранных дел Египта, Xinhua, 28.09.2012. <http://dknews.kz/yan-czechii-vstretilsya-s-ministrom-inostrannykh-del-egipta.htm>

⁶¹ Открылся третий «Симпозиум китайско-египетского инвестиционного сот-

վերոշարադրյալը կարող է վկայել այն մասին, որ արաբական և աֆրիկական երկրների հետ ՉԺՀ-ի տնտեսական հարաբերությունների ամրապնդման գործընթացը չի կասեցվել «արաբական գարնան» հրդեհով: Չին փորձագետները գտնում են, որ եկել է ՄԱ-ում «նախկին չափազանց խաղաղ և փափուկ քաղաքականությունը վերանայելու ժամանակը»: Վերջիններին համաձայն՝ Չինաստանը կարող է վերածնակերպել իր եգիպտական քաղաքականությունը և ԱՄՆ-ին երկրից դուրս մղել Եգիպտական իսլամիստներին ֆինանսական աջակցություն տրամադրելու միջոցով: Եվ եթե դա նրանց հաջողվի, ապա «եգիպտական մողելը» արաբական արևելքում չինական քաղաքականության համար կարող է ունիվերսալ դառնալ⁶²: Այս առումով միանգամայն ուշագրավ ենք համարում ՉԺՀ կատարած այցի ընթացքում Եգիպտոսի նախագահի՝ «եթե դուք պաշտպանեք մեր շահերը, մենք կպաշտպանենք ձերը...» չինացի իր գործընկերներին ուղղված Մուսրիսի խոսքերը⁶³:

Հարկ է նշել, որ Չինաստանը միակ խոշոր տերությունն է ՄԱԿ-ի ԱՄ-ի մշտական անդամներից, որը սերտ գործընկերային հարաբերություններ ունի մի կողմից՝ Սիրիայի ու Իրանի, մյուս կողմից՝ Սաուդյան Արաբիայի ու Քաթարի հետ: Չինաստանը նման քաղաքական և տնտեսական հաջողությունների է հասել նվազագույն ռեսուրսներով՝ միաժամանակ ձեռնպահ մնալով բարձր հետադարձությունից և ցուցադրական գործողություններից⁶⁴: Արևմտյան փորձագետների մի մասը հակված է այն մտքին, որ Չինաստանը կփորձի «տարածաշրջանում գործողությունների ազատություն» ձեռք բերել ոչ միայն իրն ու նոր գործընկերների, այլև ՄԱ-ի գործերում Իրանին ակտիվ ներգրավելու հաշվին⁶⁵: Առայժմ դժվար է հաստատել կամ հերքել Չինաստանի ցանկությունն ԱՄՆ-ի դեմ որևէ իրանեգիպտական տանդեմի ձևավորման հարցում, սակայն նման փորձերը չեն կարող աննկատ մնալ Վաշինգտոնում: Փորձագետները կարծում են, որ եթե Չինաստ-

рудничества», Жэньминь Жибао, 10.12.2012. <http://russian.people.com.cn/31518/8052801.html>

⁶² Лузянин С., նշվ. աշխ., էջ 1:

⁶³ James Chen, The Emergence of China in the Middle East, The Center for Strategic Research, The Institute for National Strategic Studies, SF No. 271, December 2011, p. 6.

<http://www.ndu.edu/press/lib/pdf/StrForum/SF-271.pdf>

⁶⁴ СМІ: российско-китайская стратегия на Ближнем Востоке, ИноСМІ, Россия, 18.01.2012. <http://www.inosmi.ru/overview/20120118/183368696.html>

⁶⁵ Лузянин С., նշվ. աշխ., էջ 1:

տանի ձեռքին բավականաչափ միջոցներ կան Աֆրիկայում իր տնտեսական ներկայության ապահովման համար, ապա ԱՄՆ-ի ձեռքն էլ բավականաչափ ռեսուրսներ կան տարածաշրջանի ապակայունացման համար:

Նշենք միայն, որ Պեկինից հետո 2012 թ. օգոստոսին Եգիպտոսի նախագահ Մուրսին Թեհրանում մասնակցեց Չմիացման շարժմանը նվիրված գազաթնաժողովին, որն ԻԻՀ հիմնադրումից և երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների խզումից հետո Եգիպտոսի առաջնորդի առաջին բարձրաստիճանն այցն էր ԻԻՀ⁶⁶: Իր հերթին Իրանի նախագահ Մ.Ահմեդինեժան Իրանի առաջին նախագահին էր, որն ԻԻՀ հիմնադրումից հետո առաջին անգամ այցելեց Եգիպտոս և 2013 թ. փետրվարի 6-ին մասնակցեց Իսլամական համագործակցության կազմակերպության գազաթնաժողովին⁶⁷: Իրանի նախագահը լրագրողներին տված հարցազրույցում նշեց, որ աշխարհի և տարածաշրջանի բարեփոխման խնդիրներում երկու երկրներն ընդհանուր կարծիքներ և գաղափարներ ունեն⁶⁸:

Այսպիսով՝ չի բացառվում, որ Պեկինը կօգտագործի եգիպտամերիկյան հարաբերությունների լարվածության և Մուրսիի կառավարության արտաքին քաղաքականության վերանայման ձգտումները «տարածաշրջանում առավել ամրապնդվելու և գործողությունների ազատություն» ձեռք բերելու նպատակով:

Սրան ոչ պակաս չափով կարող է նպաստել տարածաշրջանի «կայունության պահպանման» հայեցակարգի շրջանակներում ՄԱԻ-ի բռնապետական վարչակարգերին երկար տարիներ աջակցության ցուցաբերման ուղղությամբ ԱՄՆ-ի վարած քաղաքականությունը, որի լույսի ներքո Չինաստանը ոչ միայն ավելի մեղմ, այլև բարեկամական երկիր է համարվում⁶⁹:

⁶⁶ После 30-летнего разрыва дипотношений иранский президент впервые прибыл в Египет с визитом, Жэньминь Жибао, 06.02.2013. <http://russian.people.com.cn/31519/8123732.html> եգիպտաիրանական հարաբերությունները խզվել են եգիպտաիրապական 1978 թ. Քեմիք Ղևիդի պայմանագրի ստորագրումից և 1979 թ. ԻԻՀ հիմնադրումից հետո: Եգիպտոսը սպաստարան էր առաջարկել Իրանի շահ Ռեզա Փաիլավիին երկու երկրների միջև կապերի խզումից հետո:

⁶⁷ Mixed Reception for Ahmedinejad in Egypt, Euronews, 06.02.13. <http://prod-euronews.euronews.net/2013/02/06/mixed-reception-for-ahmedinejad-in-egypt/>; Qin Zhongwei, Iran and Egypt in Landmark Meeting, China Daily, 04.02.2013. http://www.chinadaily.com.cn/world/2013-02/04/content_16197104.htm

⁶⁸ Mixed Reception for Ahmedinejad in Egypt, Euronews, 06.02.13.

⁶⁹ Chris Zambelis, Egypt Turns Quietly to Asia, Middle East Institute, Washington, 25.02.2013, p. 1. <http://www.mei.edu/content/egypt-turns-quietly-asia>

Լիբիա*

Քաղաքացիական պատերազմի սկզբից ևեթ ՉժՀ-ը ձեռնպահ մնաց լիբիական զարգացումների աննչոյթյամբ որևէ գնահատականից՝ սահմանափակվելով միայն հակամարտող կողմերին հաշտություն կնքելու հորդորներով և, ի տարբերություն Արևմուտքի, չարտահայտվելով հոգուտ Քաղաֆու հեռացման⁷⁰: Փետրվարի 22-ից մինչև մարտի 5-ն ընկած ժամանակահատվածում Պեկինը կազմակերպեց Լիբիայից ցամաքային, ծովային և օդային ուղիներով ՉժՀ-ի 35860 քաղաքացու տարահանումը⁷¹: ՉժՀ-ի պատմության մեջ առաջին անգամ Չինաստանի Ժողովրդական Ազատագրման բանակի նավատորմի (PLAN) արագընթաց հաճանավը՝ ֆրեգատը, մուտք գործեց Միջերկրական ջրերը՝ ՉժՀ-ի քաղաքացիներին աջակցելու և տարահանելու նպատակով⁷²: Նշենք, որ վերջինիս հետ կապված դժվարությունները Պեկինը կապում էր երկրում ստեղծված քաոսին վերջ դնելու ուղղությամբ Քաղաֆու անկարողության հետ, որի արդյունքում «խախտվում էր» Պեկինի սրբազույն սկզբունքը՝ կայունությունը⁷³: Թերևս այս պատճառով փետրվարի 26-ին ՉժՀ-ը ՄԱԿ-ի ԱՄԻ-ի մյուս անդամների հետ քվեարկեց հոգուտ 1970-րդ բանաձևի ընդունման, որով քաղաքացիական բնակչության պաշտպանություն, զենքի առաքման էմբարգո, ոչ թռիչքային գոտի, թռիչքների արգելք և Լիբիայի ակտիվների ստեղծում էր սահմանվում⁷⁴: Իրականում Պեկինը հայտնվել էր պատժամիջոցներից դիտարկելու և Քաղաֆու կառավարության դեմ ավելի ակտիվ գործողություններ պահանջող Արաբական Պետությունների լիգայի (ԱՊԼ) հետ իր դիրքորոշու-

* Չին-լիբիական հարաբերությունների մասին մանրամասն տե՛ս Арутюнян А., Вокруг китайско-ливийских отношений, Африка в глобальном мире: прошлое, настоящее и будущее. Материалы 10 Школы молодых африканистов России, Институт Африки РАН, Москва, 2011г., стр. 7-12; Հարությունյան Ա., Չինաստան-Լիբիա հարաբերությունների շուրջ, Մեծավոր Արևելք, Պատմություն, Քաղաքականություն, Մշակույթ, հ. VIII, Երևան, 2012 թ., էջ 224-237:

⁷⁰ Шекоян И., Китай подбирается к Ливии, «Коммерсантъ», № 102 (4643), 08.06.2011.

⁷¹ Чудесная операция Китая по эвакуации своих граждан из Ливии получила одобрение широкой общественности, Жэньминь Жибао, 08.03.2011.

⁷² Gabe Collins, Andrew S. Erickson, Implications of China's Military Evacuation of Citizens from Libya, China Brief, The Jamestown Foundation, Vol.: 11 Issue: 4, 10.03.2011, p. 8.

⁷³ Jonas Parello-Plesner, Libya Shows China the Burdens of Being a Great Power, Economics, Politics and Public Policy in East Asia and the Pacific, East Asia Forum, 6.03.2011.

⁷⁴ S/RES/1970 (2011), 26 февраля, Мир и безопасность в Африке, <http://www.un.org/russian/document/scresol/res2011/index.html>

մը համաձայնեցնելու դժվարին երկընտրանքի առջև⁷⁵: Չնայած Լիբիայի նկատմամբ օտարերկրյա միջամտության ուղղությամբ զբաղեցրած բացասական դիրքորոշմանը՝ Պեկինը (ինչպես նաև Ռուսաստանը՝ ՌԴ) մարտի 17-ին չօգտագործեց իր վետոյի իրավունքը՝ կանխելու ՄԱԿ-ի ԱՄ-ի 1973-րդ բանաձևի ընդունումը⁷⁶: Ըստ ՄԱԿ-ում ՉժՀ-ի մշտական ներկայացուցիչ և ԱՄ-ի մարտականակ նախագահող Լի Բաոդոնի՝ Պեկինը թեև մտահոգված էր Լիբիայի իրադրության վատթարացման հարցում, հատկապես ոչ թոչիցային գոտու էությունը բանաձևի հովանավորների կողմից ոչ բավարար չափով պարզաբանելու առիթով, այնուհանդերձ ՉժՀ-ը հաշվի էր նստել Աֆրիկյան երկրների միության (ԱԵՄ) և Լիբիայում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ բանազանցի դիրքորոշման հետ⁷⁷: Սակայն երբ մարտի վերջին ՉժՀ-ի նախագահ Հու Չինթան բացահայտ քննադատեց Լիբիայում ՆԱՏՕ-ի գործողությունները, Արևմուտքում այնպիսի տպավորություն ստեղծվեց, որ ՉժՀ-ն և Արևմուտքը գործնականում համակրում են լիբիական հակամարտության հակադիր ճամբարներին⁷⁸:

Հարկ է նշել, որ այնժամ, երբ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ռազմականվերը մոտենում էին Լիբիայի ափերին, Քադաֆին և Լիբիայի վերոհիշյալ արտգործնախարար Մուսա Քուսան (մարտի 19-ին) հայտարարեցին, որ Լիբիան պատրաստ է իր նավթային ռուկները տրամադրելու ՌԴ-ին, ՉժՀ-ին և Հնդկաստանին՝ ի նշան 1973-րդ բանաձևի ձեռնպահ քվեարկման⁷⁹: Սակայն Քադաֆու հաղթանակի շուրջ աճող կասկածները Պեկինին ստիպեցին ակտիվացնել իր դիվանագիտությունն ու բանակցել ոչ միայն պաշտոնական Տրիպոլիի, այլև ընդդիմության

հետ⁸⁰: Եգիպտոսում ՉժՀ-ի դեսպանատան որոշ դիվանագետներ (մայիսին) եղան Բենգազիում պարզաբանելու հումանիտար խնդիրների և չինական կապիտալի վրա հիմնված ձեռնարկությունների հետ կապված իրավիճակը: Չին դիվանագետները հանդիպեցին նաև Անցումային ազգային խորհրդի (ԱԱՄ) պատասխանատու պաշտոնյաների հետ⁸¹, որից հետո Պեկինն ապստամբներից 160 մլն ԱՄՆ դոլարի նավթ գնեց⁸²: Հունիսի 7-ին Պեկինը հյուրընկալեց Տրիպոլիի «հատուկ բանազանց» Լիբիայի արտգործնախարար Աբդուլաթի ալ-Օբեյդիին⁸³: Հունիսի 6-ին ՉժՀ-ի ԱԳՆ-ի Արևմտյան Ասիայի և Հյուսիսային Աֆրիկայի վարչության պետը՝ Չեն Սյաոդունը, Բենգազիում հանդիպեց Լիբիայի ԱՄՆ-ի դեվալիարության հետ՝ վերջինս դիտելով իբրև «երկխոսության կարևոր կողմ»: ԱՄՆ-ը հաստատեց, որ կապաշտպանի ընդդիմության վերահսկողության տակ գտնվող տարածքներում բնակվող չինացի քաղաքացիների կյանքի և գույքի անվտանգությունը⁸⁴: Նշենք, որ հանդիպումից մեկ շաբաթ առաջ Քաթարում ՉժՀ-ի դեսպան Չժան Չժիյանը Դոհայում հանդիպում էր ունեցել ԱՄՆ-ի դեվալիար Մուստաֆա Արդեի-Ջալիլի հետ⁸⁵: ՉժՀ-ի փոխարտգործնախարար Չժան Ցզյունը հունիսի 15-ին ՄԱԿ-ի՝ Նյու Յորքի կենտրոնակայանում լիբիական խնդրին նվիրված ԱՄ-ի նստաշրջանին հայտարարեց, որ միջազգային հանրությունը պետք է նպաստի հակամարտության քաղաքական կարգավորմանը⁸⁶: Իսկ հունիսի 22-ին ՉժՀ-ի արտգործնախարար Պեկինում հյուրընկալեց Լիբիայի ԱՄՆ-ի գործկոմի ղեկավար և արտաքին հարաբերությունների գծով պատասխանատու Մահմուդ Ջիբրիլին՝ ԱՄՆ-ը գնահատելով իբրև «երկխոսության կարևոր գործընկեր»:

Այսպիսով՝ Պեկինը ստանձնեց լիբիական հակամարտության միջնորդությունը և պաշտոնապես հայտարարեց իր խաղաղապահ հավակնությունների մասին՝ ակտիվ բանակցություններ

⁷⁵ Zhang Yuwei, Ai Yang, Libya Declares Cease-Fire after UN Resolutions Vote, China Daily, 19.03.2011, p. 8.

⁷⁶ S/RES/1973(2011), 17 марта Положение в Ливии, <http://www.un.org/russian/document/scresol/res2011/index.html>

Մարտի 17-ին ՄԱԿ-ի ԱՄ-ը Լիբիայի վերաբերյալ բանաձև ընդունեց, որով նախատեսվում էր Լիբիայում ոչ թոչիցային գոտի հաստատել, ինչպես նաև անհրաժեշտ բոլոր միջոցառումները ձեռնարկել (բացի ցամաքային հարձակումից)՝ ապստամբների հսկողության տակ գտնվող քաղաքների ու բնակավայրերի ուրբահարումները կանխելու և խաղաղ բնակիչներին պաշտպանելու նպատակով: ՄԱԿ-ի ԱՄ-ի հավանությանը մարտի 19-ին Լիբիայում սկսվեցին կռաւիցիոն ուժերի գործողությունները՝ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Կանադայի, Բելգիայի, Իտալիայի, Իսպանիայի, Դանիայի, Նորվեգիայի մասնակցությամբ:

⁷⁷ Libya Declares Cease-fire after UNR Vote, China Daily, 19.03.2011, p. 8.

⁷⁸ Габуев А., У Китая к Ливии дело на \$19 млрд, Газета «Коммерсант», №111 (4652), 22.06.2011.

⁷⁹ Al-Jazeera, 19.03.2011.

⁸⁰ Габуев А., նշվ. աշխ., էջ 1:

⁸¹ Китай продолжает контакты с ливийской оппозицией, Подробности, 07.06.2011.

⁸² James M. Dorsey, China Taking Leaf out of Russia's Script for Libya with More Activist Policy, Al-Arabiya, UAE, 22.06.2011. <http://english.alarabiya.net/articles/2011/06/22/154304.html>

⁸³ Шекоян И., նշվ. աշխ., էջ 1:

⁸⁴ Глава департамента стран Азии и Африки МИД КНР Чэнь Сяодун посетил Бенгази, Жэньминь Жибао, 07.07.2011.

⁸⁵ Габуев А., նշվ. աշխ., էջ 1:

⁸⁶ Китай: ливийский вопрос не должен решаться силой, Жэньминь Жибао, 16.06.2011.

սկսելով երկու կողմերի հետ միաժամանակ: Տրիպոլիի և Բեն-գազիի հետ շփումների մակարդակով և «հաշտության բանակցություններին նպաստելու» գործում Պեկինը գերազանցեց մյուս պետություններին, այդ թվում՝ լիբիական ճգնաժամի պաշտոնական միջնորդի դեր ստանձնած ՌԴ-ին և ԱԵՄ-ին⁸⁷:

Խնդիրն այն է, որ Պեկինը «ցանկացած եղանակի» դեպքում և, անկախ առնականուման քննից, Լիբիայում իր գործարար շահերի պաշտպանության կարիքն ուներ և զգուշանում էր, որ լիբիական զարգացումները չհնական գործարար շրջանակների համար չչրջվեն տնտեսական անդառնալի կորուստներով⁸⁸: Նշենք, որ մինչ 2011 թ. սկիզբը, այսինքն՝ նախքան Լիբիայի քաղաքացիական պատերազմը, ՉժՀ-ը լայնորեն ներկայացված էր Լիբիայի նավթային սեկտորում, երկաթուղային, տրանսպորտի և հեռահաղորդակցության ոլորտներում⁸⁹, Լիբիայում բնակվում էր նշյալ ոլորտներին պատկանող 75 ընկերությունում աշխատող 36 000 ՉժՀ-ի քաղաքացի, չինական ներդրումները գնահատվում էին 18 մլրդ դոլար⁹⁰: ՉժՀ-ը դարձել էր լիբիական նավթի երրորդ խոշորագույն սպառողը՝ կազմելով Լիբիայից արտահանվող նավթի ծավալների 10 %-ը, իսկ ՉժՀ մատակարարվող նավթի լիբիական մասնաբաժինը կազմում էր 3,5 %⁹¹:

Չինական նավթային խոշոր ընկերությանը (CNPC) պատկանող նախագծերը գտնվում էին արևմուտքում՝ Քադաֆիի գործերի վերահսկողության ներքո, իսկ Լիբիայի արևելքում չինական մասնակցությամբ մի շարք ենթակառուցվածքային նախագծեր հայտնվել էին ապստամբների վերահսկողության տակ:

⁸⁷ China Says Libya Rebels as Important Political Force, China Military Power Mashup, 22.06.2011.

⁸⁸ Այդժամ Լիբիայում չինական ընկերությունների կորուստները հաշվվում էին 20 մլրդ ԱՄՆ դոլար:

⁸⁹ Երկաթգծերի կառուցման և հաղորդակցության ընկերությունը (Communication Construction and China Railway Construction Corporation) զբաղվում էր երկաթգծերի նախագծմամբ և կառուցմամբ, Չինաստանի քաղաքացիական շինարարության ինժեներական ընկերությունը (China Civil Engineering Construction) զբաղվում էր Արևելյան Սահարայի ոռոգման նախագծերի իրականացմամբ, Չինաստանի Գեհուա Գրուպ ընկերության (China Gezhouba Group Corporation (CGGC)) չինական խումբը զբաղված էր Լիբիայի հարավային հինգ քաղաքներում առանձնատների կառուցման նախագծերով, Huawei Technologies ընկերությունը զբաղված էր քցային հեռախոսների ենթակառուցվածքի ստեղծմամբ: Տե՛ս Giampaolo Tarantino, Il petrolio della Libia fa gola alla Cina, L'Occidentale, Italy, 04.03.2011.

⁹⁰ African Revolutions Challenge Chinese Diplomacy, նշվ. աշխ., էջ 1:

⁹¹ Rodger Baker, Portfolio: China's Stake in the Middle East Unrest, Stratfor, USA, 10.03.2011.

ՉժՀ-ը պատրաստ էր չինական նախագծերի անվտանգության երաշխիքների դիմաց Քադաֆին աջակցություն ապահովել ՄԱԿ-ի ԱՄ-ում, իսկ ապստամբներին՝ ֆինանսական օգնություն տրամադրել⁹²: Վերջիններիս աջակցելու դեպքում շահավետ պայմանագրերով փոխհատուցվելու ուղղությամբ տրված բազմաթիվ խոստումները ևս նպաստում էին, որպեսզի Պեկինը «նախնայի» իր չինացիության սկզբունքից⁹³: Նշենք, որ Պեկինին դուր չէին եկել ընդդիմության դեմ «Տիանանմեն» կազմակերպելու ուղղությամբ Քադաֆու հնչեցրած սպառնալիքները⁹⁴:

ՉժՀ-ին չէին կարող չմտահոգել նաև երկրի էներգետիկ ոլորտը վերակառուցելու ուղղությամբ ԱՄՆ-ի հայտարարությունները, որոնց համաձայն՝ վերջինս մտադիր էր Քադաֆու դաշնակից չինական և ռուսական էներգետիկ ընկերություններին փոխարինել ապստամբներին աջակցություն ցուցաբերած այնպիսի ընկերություններով, ինչպիսիք են «British Petroleum»-ը, ֆրանսիական «Total»-ը և իտալական «Eni»-ն⁹⁵: Ըստ ԱՄՆ-ի առաջնորդ Աբրոյ Ջալիլի՝ դաշնակիցներն ապստամբների ցուցաբերած օգնության դիմաց պետք է արժանանալին «արտոնյալ վերաբերմունքի», իսկ ՆԱՏՕ-ի գործողություններին «չաջակցող երկրները», այդ թվում՝ ՌԴ-ը, ՉժՀ-ը և Գերմանիան, ինչպես նաև Քադաֆուն չդատապարտող երկրները պետք է հայտնվեն «պարտվողների շարքում»⁹⁶: Ապստամբների տնօրինության անցած Արաբական ծոցի նավթային ընկերության՝ «Agoco»-ի (Arabian Gulf Oil Company) ներկայացուցչի համաձայն՝ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի շահերը ՌԴ-ի, ՉժՀ-ի և Բրազիլիայի համեմատությամբ պետք է առաջնային դիտվեն⁹⁷:

⁹² Габуев А., նշվ. աշխ., էջ 1:

⁹³ Ливия: Китай пытается поладить и с мятежниками, и с Каддафи, RTKORR.com, 08.06.2011.

⁹⁴ New Leaders Higgins, For China, Relations with Libya a Balancing Act, The Washington Post, 26.08.2011. 1989 թ. փետրվարյան ելույթի ժամանակ Քադաֆին ապստամբների խտտացել էր «միջատների պես թնաջեցել»՝ ժողովրդական անկարգությունների ճնշման օրինակ քերելով ՉժՀ-ում 1989 թ. տիանանմենյան իրադարձությունները:

⁹⁵ New Leaders May Expel Russia and China from Libyan Energy Sector, World Tribune, USA, 25.08.2011. Այս ընկերությունների քաճենտոմները զգալիորեն թանկացան օգոստոսի 22-ին՝ Քադաֆու վարչակազմի տապալումից հետո:

⁹⁶ Emma Farge, Lorraine Turner, John Irish, How to Win Business in Libya, Fox News, USA, 23.09.2011.

⁹⁷ Terry Macalister, So, was This a War for Oil?, The Guardian, Great Britain, 02.09.2011. Այս հայտարարությունից հետո ՉժՀ-ի արևմտի նախարարության պատասխանատու պաշտույնյան հայտեց, որ Պեկինը հույս ունի, որ Լիբիան կայունության հաստատումից հետո կշարունակի պաշտպանել չին

Ավելին՝ սեպտեմբերի սկզբին լիբիական ապստամբների զինվորական կոմիտեի ղեկավար Օմար Հարիրին Պեկինին մեղադրեց Քադաֆիի քանակին զենք մատակարարելու և Լիբիայի հաշիվների արգելափակումը կանխելու փորձերի մեջ⁹⁸։ Ըստ «The globe and mail» կանադական ամսագրի՝ լիբիական ապստամբությունը հուլիսի 16-ին ՉժՀ կատարած այցի ընթացքում հանդիպել էր չինական զենք արտադրող պետական Յ ընկերության⁹⁹ ներկայացուցիչների հետ, որոնք համաձայնվել էին մոտ 200 մլն ԱՄՆ դոլարի զենք ու զինամթերք մատակարարել Քադաֆու կառավարությանը։ Գործարքը պետք է իրականացվեր Հարավաֆրիկյան Հանրապետության և Ալժիրի միջոցով¹⁰⁰։ Բանակցությունների հետագա փուլը նախատեսվում էր անցկացնել Ալժիրում՝ չինական ընկերությունների գրասենյակներում¹⁰¹։ Սակայն ՉժՀ-ի ԱԳՆ-ն սեպտեմբերի 5-ին հերքեց Քադաֆու վարչախմբին զենք վաճառելու հնարավորությունը՝ ընդունելով միայն, որ լիբիական պաշտոնյաները առանց պաշտոնական Պեկինի իմացության քանակցություններ են վարել չինական համապատասխան ընկերությունների որոշ ներկայացուցիչների հետ՝ քննարկելով զենքի վաճառքի հնարավորությունը¹⁰²։ Սակայն, ըստ ՉժՀ-ի ԱԳՆ-ի, վերջիններս զինամթերքի վաճառքի, առավել ևս դրա Լիբիա արտահանման վերաբերյալ որևէ պայմանագիր չեն ստորագրել, քանի որ Պեկինը ի սկզբանե խստորեն հետևել է ՄԱԿ-ի Ան-ի 1970-րդ և 1973-րդ քանաձևերին¹⁰³։

Ի վերջո ՉժՀ-ը սեպտեմբերի 1-ին դիտորդի դերում մասնակցեց Փարիզում «Լիբիայի բարեկամներին» համաժողովին¹⁰⁴։ ՉժՀ-ի ԱԳՆ-ի պաշտոնական ներկայացուցիչ Տզյան Յույը 2011 թ. սեպտեմբերի 5-ի մամուլ ասուլիսի ժամանակ նշեց, որ «ԱՄՆ-ի ճանաչման որոշումը պետք է լինի ճիշտ ժամանակին»։ Այդ ժամ Չինաստանը դեռևս պատրաստ չէր ճանաչելու ԱՄՆ-ը, քանի որ Չինաստանի և Լիբիայի միջև դեռևս մի շարք խնդիրներ լուծված չէին, այդ թվում՝ նավթի ոլորտում առևտրային պայմանագրերի և համաձայնագրերի ճակատագիրը։ Չէր լուծվել նաև «մեկ Չինաստանի քաղաքականության» հարցը, քանի որ այդ պահին հստակ չէր ԱՄՆ-ի դիրքորոշումը Թայվանի հանդեպ¹⁰⁵։ Եվ երբ որ կողմերը համաձայնության եկան նշյալ խնդիրների շուրջ, սեպտեմբերի 12-ին Պեկինը պաշտոնապես ճանաչեց ԱՄՆ-ը՝ որպես Լիբիայի միակ օրինական իշխանություն և լիբիական ժողովրդի ներկայացուցիչ՝ ակնկալելով, որ նախկինում ստորագրված չին-լիբիական բոլոր համաձայնագրերը կմնան ուժի մեջ և ճերմակորեն կիրառործվեն¹⁰⁶։ Իր հերթին ԱՄՆ-ն, ընդգծելով Պեկինի որոշման երկար սպասված լինելը փաստը, հաստատեց նախկինում ստորագրված համաձայնագրերը ճշտորեն իրագործելու և «մեկ Չինաստանի» ընդունման Լիբիայի նախկին քաղաքականությանն իր հավատարմությունը՝ միաժամանակ պատրաստակամություն հայտնելով այդուհետև ևս ՉժՀ-ի հետ զարգացնել փոխշահավետ համագործակցություն¹⁰⁷։ Հոկտեմբերի 28-ին Լիբիայում ՉժՀ-ի դեսպան Վան Վենշենը վերադարձավ Լիբիա¹⁰⁸։

Բարձր մակարդակի հաջորդ քանակցությունները տեղի ունեցան ՉժՀ-ի արտգործնախարարի և ԱՄՆ-ի ղեկավարի միջև 2011 թ. սեպտեմբերի 20-ին Նյու Յորքում ՄԱԿ-ի՝ Լիբիային նվիրված նստաշրջանին¹⁰⁹։ Պեկինը խստացավ Լիբիայում խաղաղության և կայունության վերականգնման գործում

նացի ներդրողների շահերն ու իրավունքները, և կշարունակվեն ներդրումներն ու տնտեսական համագործակցությունը: Sino China Looks to Protect its Assets in a Post-Gaddafi Libya, Guardian, 23.08.2011.

⁹⁸ Серова Н., Китайская перестройка потрясет мир, Центр Азия, 08.09.2011.
⁹⁹ China North Industries Corp. (Norinco); China National Precision Machinery Import & Export Corp. (CPMIG); China XinXing Import & Export Corp..
¹⁰⁰ Ливийский ПНС обещает «наказать» Китай за поставки оружия Каддафи, rosvoenpens.ru, 6.09.2011, с. 1.
<http://rosvoenpens.ru/новости/ливийский-пнс-обещает-наказать-китай/>
 Արցրուրի համաձայն՝ գործարքի վերաբերյալ փաստաթղթերը, որոնց վրա եղել է լիբիական պետական կնիքը, հայտնաբերվել են Քադաֆիի նախկին նստավայր Տրիպոլիի Բար-Արբար թաղամասի աղբարկղերից մեկում:
¹⁰¹ Ливийский ПНС обещает «наказать» Китай за поставки оружия Каддафи, նշվ. աշխ., էջ 1:
 Հարկ է նկատել, որ Արևմուտքը, ի դեմս ԱՄՆ-ի պետքարտուղարության, ԿՀԿ-ի, ինչպես նաև Հյուսիսատլանտյան դաշինքի, հայտնեց, որ տեղյակ չէ լիբիական վարչախմբի և Չինաստանի միջև գաղտնի քանակցությունների մասին:
¹⁰² Arthur Bright, China Denies Arms Sales to Qaddafi, Admits Meetings Took Place, Christian Science Monitor, USA, 05.09.2011.
¹⁰³ Китайская сторона не экспортировала в Ливию военную продукцию—официальный представитель МИД—а, Жэньминь Жибао, 06.09.2011.

¹⁰⁴ Китай будет в качестве наблюдателя принимать участие в конференции «друзей Ливии» в Париже, Жэньминь Жибао, 01.09.2011.
¹⁰⁵ Пахомова М., Китайско-ливийские отношения накануне и после «арабской весны» 2011 г., Синология.ру. http://www.synologia.ru/a/%D0%9A%D0%B8%D1%82%D0%B0%D0%B9%D1%81%D0%BA%D0%BE-%D0%BB%D0%B8%D0%B2%D0%B8%D0%B9%D1%81%D0%BA%D0%B8%D0%B5_%D0%BE%D1%82%D0%B0%D0%BE%D1%88%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F.
¹⁰⁶ Emma Farge, Lorraine Turner, John Irish, նշվ. աշխ., էջ 1:
¹⁰⁷ Китайская сторона объявила о признании ПНС Ливии, Жэньминь Жибао, 13.09.2011.
¹⁰⁸ Пахомова М., նշվ. աշխ., էջ 1:
¹⁰⁹ Топыш տեղում:

աջակցել միջազգային հանրությանը¹¹⁰: Նշենք, որ դեռևս հուլիսի 11-ին Պեկինը հայտարարել էր Լիբիայի ժողովրդին 55 մլն ՉԺՀ յուանի (7,7 մլն ԱՄՆ դոլար) մարդասիրական օգնություն տրամադրելու իր որոշման մասին¹¹¹:

ԱՄՆ-ի ճանաչումից անմիջապես հետո Չինաստանը ձեռնամուկ եղավ Լիբիայում իր դիրքերի ամրապնդմանը՝ աջակցություն առաջարկելով երկրի հետպատերազմյան վերականգնման գործին: Չինաստանը Լիբիային տրամադրեց 50 մլն յուան՝ 7,7 մլն ԱՄՆ դոլար: Լիբիային օգնություն տրամադրելու խնդիրը քննարկվեց նաև 2012 թ. փետրվարին Աֆրիկական երկրների 18-րդ գագաթնաժողովին:

Սակայն ԱՄՆ-ի դիվանագիտական ճանաչումից հետո ՉԺՀ-ի կառավարության առջև մի շարք խնդիրներ ծառայեցին՝ կապված Լիբիայում չինացի քաղաքացիների անվտանգության ապահովման, Լիբիայի կառավարական շրջանակներում և զինված ուժերում իրավիճակի կայունության հետ: Խնդիրներ էին ծագել նաև Պեկինի կողմից ԱՄՆ-ին երկար չճանաչելու և լիբիական ՋԼԱ-ներում Չինաստանի տրամադրած օգնության փաստի ոչ բավարար լուսաբանման առնչությամբ Լիբիայի կառավարության մի մասի մոտ Չինաստանի հանդեպ տածած անվստահության փաստի հետ: Վերջնական լուծում չէր ստացել չինական ընկերությունների կրած վնասների փոխհատուցման խնդիրը: Այդ իսկ պատճառով Լիբիայի իրադրության անվտանգության գնահատման նպատակով 2012 թ. փետրվարի 4-8-ը Լիբիա մեկնեց չինական կառավարական հանձնաժողովը, որի կազմի մեջ մտնում էին ինչպես կառավարության, այնպես էլ Լիբիայում գործող առաջատար ընկերությունների ներկայացուցիչներ: Հանձնաժողովը պետք է հեղափոխության ընթացքում չինական ընկերությունների կրած վնասների փոխհատուցման նպատակով խորհրդակցեր Լիբիայում մեծությամբ երկրորդ՝ Սահարայի բանկի հետ: Բանակցությունների ընթացքում Չինաստանն ու Լիբիան պայմանավորվեցին հատուկ մարմինների դատին հանձնել չինական ընկերությունների մասնակցությամբ պատերազմից առաջ հաստատված նախագծերի հետ կապված խնդիրների կարգավորումը: Նշենք,

որ նախքան այդ չինական ընկերությունների մեծ մասն իր աշխատակազմն արդեն ուղարկել էր Լիբիա¹¹²:

Չնայած բարձր մակարդակի միանգամայն ակտիվ շփումներին, ի դեմս ՉԺՀ-ի ԱԳՆ-ի Ասիայի և Աֆրիկայի երկրների վարչության ղեկավարի, Լիբիայում 2012 թ. մայիսին, ինչպես նաև Սի Սինգլինի ու Լիբիայի արտգործնախարար Ազուր Բին խայալի միջև 2012 թ. հունիսի 11-ին տեղի ունեցած բանակցություններին՝ կողմերի միջև որևէ համաձայնություն ձեռք չէր բերվել չինական կողմի կրած կորուստների փոխհատուցման ուղղությամբ¹¹³:

2013 թ. փետրվարի 5-ին՝ Լիբիայում ՉԺՀ-ի դեսպան Վան Վենշենի հետ Լիբիայի ժամանակավոր կառավարության վարչապետ Ալի Ջեյդանի հանդիպման ընթացքում, վերջինս նշեց, որ Լիբիայի կառավարությունն ու ժողովուրդը ողջունում են չինական ձեռնարկությունների հնարավորինս արագ վերադարձը Լիբիա և չինական ընկերությունների ընդհատված արտադրությունների վերսկսումը¹¹⁴:

Այսպիսով՝ վերոշարադրյալից կարող ենք զայ այն եզրահանգման, որ Լիբիայի քաղաքացիական պատերազմի ընթացքում ՉԺՀ-ի տարածաշրջանային քաղաքականությունն իսկական փորձության ենթարկվեց՝ կապված Պեկինի որդեգրած տարածքային ամբողջականության, ինքնիշխանության, չմիջամտության հայեցակարգի հետ: Վերջինիս հետամուտ լինելու դեպքում Պեկինի համար բարդանում էր Աֆրիկայի հետ համագործակցության խորացման, մայրցամաքի ենթակառուցվածքային, էներգետիկ, հեռահաղորդակցության և այլ ոլորտներում իր հսկայական ծրագրերի իրականացման, ինչպես նաև Չինաստանի հարյուր հազարավոր քաղաքացիների աշխատելու խնդիրը¹¹⁵: Իր տարածաշրջանային շահերի պաշտպանության ուղղությամբ ակտիվ միջնորդական առաքելություն ստանձնելով՝ Պեկինը հիմնարար փոփոխություն մտցրեց իր կողմից տասնյակ տարիներ հետապնդվող չմիջամտության հայեցակարգում: Եթե մինչ այդ Չինաստանը տարածաշրջանում մեկը մյուսի հետևից առևտրային գործարքներ կնքող չեզոք տերություն էր, ապա լիբիական

¹¹⁰ Своевременное регулирование политики Китая по отношению к Ливии свидетельствует о зрелом и стабильном дипломатическом стиле КНР, Russian.china.org.cn, 13.09.2011. http://russian.china.org.cn/news/txt/2011-09/13/content_23404709.htm

¹¹¹ Китай предоставит ливийскому народу гуманитарную помощь в размере 50 млн юаней, Жэньминь Жибао, 11.07.2011.

¹¹² Пахомова М., Китайско-ливийские отношения накануне и после «арабской весны» 2011 г., ԷՎ, աշխ., էջ 1:

¹¹³ Լույն տեղում:

¹¹⁴ Правительство Ливии приветствует возвращение китайских предприятий в Ливию, Жэньминь Жибао, 06.02.2013. <http://russian.people.com.cn/31520/8123703.html>

¹¹⁵ Jonas Parelló-Plesner, China's Desert-Dance in Libya, European Council on Foreign Relations, 31.10.2011.

զարգացումների ընթացքում այն միջազգային նոր կարգավիճակ ստանձնող երկիր էր: Չինաստանն արթնացավ «նիրհից», իսկ Լիբիայի քաղաքացիական պատերազմը իրադարձություն էր, որը ստիպեց Չինաստանին դուրս գալ իր «պատյանից»¹⁶:

Սիրիա*

Ինչ վերաբերում է սիրիական իրադարձություններին, ապա հակառակ այս պետությունում ունեցած թվացյալ «ոչ մեծ շահերին»՝ հակակառավարական շարժման հենց սկզբից Պեկինը համառորեն պնդում էր, որ իր դաշնակից Սիրիայի նախագահ Բաշար ալ-Ասադը չպետք է Արևմուտքի պահանջով ստիպողաբար հրաժարվի իշխանությունից: Չինաստանը բազմիցս հաստով բանագնացներ ուղարկեց տարածաշրջան՝ Սիրիայի և հարևան պետությունների միջև բանակցություններ վարելու միջոցով շահագրգիռ կողմերի հետ կապերի հաստատման և երկխոսության միջոցով խնդրի կարգավորման, ինչպես նաև մարդասիրական օգնության տրամադրման նպատակով¹⁷: 2011 թ. հունիսի 15-ին Պեկինը Մոսկվայի հետ միասին բողոքարկեց սիրիական ընդդիմության ճնշման նպատակով Դամասկոսի կոշտ միջոցառումների դեմ բանաձևի մշակման քննարկման նպատակով ՄԱԿ-ի ԱԽ-ի հանդիպումը՝ միաժամանակ չարդարացնելով Բաշար ալ-Ասադի դեմ ՄԱԿ-ի նախատեսվող գործողությունները¹⁸: Իսկ 2011 թ. հոկտեմբերի 4-ին, վետո դնելով հակակառավարական ուժերի ճնշման առնչությամբ Սիրիային դատապարտող ԱԽ-ի բանաձևի վրա, Չինաստանն ու Ռուսաստանը փաստացի կերպով փրկուղակ նետեցին Սիրիայի նախագահին¹⁹:

¹⁶ Gideon Dresdner, China, the Arab Spring, and Context, Institute of Strategic Thinking, 23.08.2011.

* Չին-սիրիական հարաբերությունների մասին մանրամասն տե՛ս Harutyunyan A., New Manifestations in the Sino-Syrian Cooperation, Contemporary Eurasia. Arab World, Vol. 1 (2), Yerevan, 2012, pp. 140-155; Հարությունյան Ա., Չին-սիրիական համագործակցության նոր դրսևորումներ, ժամանակակից Եվրասիա. Արաբական աշխարհ, Հատուկ 1 (2), Երևան, 2012 թ., էջ 140-155:

¹⁷ Ruan Zongze, Responsible Protection: Building a Safer World, CIIIS Time, 15.06.2012. http://www.cis.org.cn/english/2012-06/15/content_5090912.htm

¹⁸ Россия и Китай бойкотируют переговоры ООН по Сирии, AFP, Франция, 14.06.2011. <http://inosmi.ru/asia/20110614/170670904.html>

¹⁹ Neil MacFarquhar, With Rare Double U.N. Veto on Syria, Russia and China Try to Shield Friend, The New York Times, USA, 05.10.2011. <http://www.nytimes.com/2011/10/06/world/middleeast/with-united-nations-veto-russia-and-china-help-syria.html?r=2&pagewanted=all>

Բանաձևի նախագիծը նախատեսում էր սիրիական իշխանությունների կողմ

Պեկինն ու Մոսկվան համոզված էին, որ ՆԱՏՕ-ի անդամները ցանկանում են Սիրիայի վերաբերյալ բանաձևի ընդունման հասնել՝ մանիպուլյացիայի ենթարկելով ԱԽ-ը, ինչը նրանց հաջողվեց Լիբիայի վերաբերյալ բանաձևի ընդունման ժամանակ, որի հետևանքով, իբրև «Քաղաֆիի օդուժի ոմբակոծություններից խաղաղ բնակչության պաշտպանությանն» ուղղված միջոց, ապաստանների զինման և ՆԱՏՕ-ի ռազմական գործողությունների ակտիվացման արդյունքում Լիբիայի նախագահի վարչախումբը տապալվեց²⁰: Այդ էր թերևս պատճառը, որ Ռուսաստանն ու Չինաստանը մտադիր էին կանխել նման սցենարի կրկնությունը ոչ միայն Սիրիայում, այլև ողջ մերձավորարևելյան և այլ տարածաշրջաններում:

Հարկ է նշել, որ ՄԱԿ-ում ԱՄՆ-ի ներկայացուցիչ Սյուզան Ռայսը դատապարտեց վետոյի իրավունքից Չինաստանի ու Ռուսաստանի օգտվելու փաստը²¹: Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Վիլյամ Հեյդը քննադատեց Ռուսաստանին ու Չինաստանին ՄԱԿ-ի ԱԽ-ի բանաձևի վրա վետո դնելու միջոցով «կոշտ վարչախմբի պաշտպանության» մեջ՝ միաժամանակ գովաբանելով բրիտանական կառավարության դերն «արաբական գարնան» առնչությամբ և կոչ անելով ՄԱ-ի և այլ տարածաշրջանների երկրներին սեփական ժողովրդի դժգոհություններին պատասխանել «երկխոսությամբ ու բարեփոխումներով, ոչ թե՛ ճնշումներով ու պատժամիջոցներով»²²:

Հատկանշական է, որ ԶԺՀ-ի ԱԳՆ-ն պաշտպանեց 2011 թ. դեկտեմբերի 14-ին Ռուսաստանի կողմից ՄԱԿ-ի ԱԽ-ին ներկայացված Սիրիայի վերաբերյալ բանաձևի նախագիծը: «Եթե ԱԽ-ում Սիրիայի իրադրության վերաբերյալ քննարկում է գնում, ապա այդ քննարկումը պետք է նախատի իրադրության լարվածության թուլացմանը, քաղաքական երկխոսության կոչ պարունակի, հակա-

միջ ընդդիմության նկատմամբ ճնշամիջոցների շարունակման դեպքում Դամասկոսի դեմ պատժամիջոցների կիրառում, որը, ըստ ԶԺՀ-ի, չէր բացառում ռազմական միջամտության հնարավորությունը և Սիրիայում «լիբիական սցենարի» կրկնությունը:

²⁰ Тавитов В., Почему Китай поддерживает Сирию? Modern Politics Russia, 30.09.2012. <http://modernpolitics.ru/2012/09/pochemu-kitajj-podderzhivaet-siriyy/>

²¹ Don Kraus, Russia and China: UN-Responsible on Syria, The Huffington Post, USA, 06.10.2011. http://www.huffingtonpost.com/don-kraus/syria-united-nations-veto_b_997055.html

²² Hélène Mulholland, Hague Accuses Russia and China of 'Siding with Brutal Regime' in Syria, The Guardian, UK, 05.10.2011. <http://www.guardian.co.uk/politics/2011/oct/05/hague-russia-china-siding-syria>

մարտող կողմերի միջև կամուրջներ հաստատի և տարածաշրջանում խաղաղություն ու կայունություն ապահովի».— հայտարարեց ՉԺՀ–ի ԱԳՆ–ի ներկայացուցիչ Լյու Վեյմինը: Լրագրողների համար տրված մամուլ ասուլիսի ընթացքում չինացի դիվանագետը հայտարարեց, որ Պեկինը պաշտպանում է ռուսական առաջարկը՝ իր հիացմունքն արտահայտելով սիրիական ճգնաժամի լուծման ուղղությամբ Ռուսաստանի գործարարած ջանքերի անընդհատ, ինչպես նաև իր պատրաստակամությունը հայտնելով բոլոր կողմերի հետ կապեր պահպանելու ուղղությամբ¹²³:

Իսկ 2012 թ. սկզբին Պեկինն Արաբական Պետությունների լիգայի (ԱՊԼ) ղեկավարությանը տեղյակ պահեց, որ հանդես է գալիս «սիրիական դոսյեն» ԱՄՆ–ի դատին հանձնելու դեմ, և գտնում է, որ ճգնաժամը պետք է կարգավորվի համաարաբական կազմակերպության շրջանակներում¹²⁴:

Ռուսաստանն ու Չինաստանը 2012 թ. փետրվարի 4–ին ԱՄՆ–ում քվեարկեցին սիրիական խնդիրը ռազմական ճանապարհով լուծում պարունակող բանաձևի նախագծի դեմ, որն առաջարկել էր Մարկոկոյի պատվիրակությունը մի շարք արևմտյան և արաբական երկրների հետ: Դժգոհություն առաջացրեց հատկապես բանաձևի այն կետը, որով նախագահ Բաշար ալ–Ասադից պահանջվում էր երեք շաբաթվա ընթացքում ազատել նախագահի պաշտոնը¹²⁵ և իշխանությունը փոխանցել իր տեղակալին¹²⁶: Պեկինի կարծիքով նման բանաձևի ընդունումը կարող էր միջազգային հանրության աջակցության ազդանշան ծառայել վարչախմբի հակառակորդների ու զինված խմբավորումների համար¹²⁷: ՉԺՀ–ն նաև իր ավստանքն էր արտահայտում Սիրիայի վերաբերյալ բանաձևի նախագծի վերանայման ուղղությամբ Ռուսաստանի առաջարկությունն անտեսելու համար¹²⁸:

Բնականաբար, Բաշար ալ–Ասադը և իր կողմնակիցներն իրենց գոհունակությունն արտահայտեցին Ռուսաստանի և Չինաստանի վետոյի առնչությամբ: Սակայն այն արժանացավ ոչ միայն ԱՄՆ–ի (Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և ԱՊԼ–ի)¹²⁹, այլև սիրիական «Մուսուլման եղբայրների» ցասումնալից արձագանքին, որոնք Ռուսաստանին, Չինաստանին ու Իրանին անվանեցին Սիրիայի խաղաղ բնակչության «սպառնալուծների մեղակիցներ»՝ մեղադրելով նրանց Ասադի վարչախմբին ցուցաբերվող քաղաքական «աջակցության» և «զենքի առաքման» մեջ¹³⁰: ԱՄՆ–ի պետքարտուղար Հիլարի Քլինթոնը քննադատության ենթարկեց Ռուսաստանին ու Չինաստանին Դամասկոսի դեմ միջոցներ ձեռնարկելու գործում ԱՄՆ–ին խոչընդոտներ հարուցելու մեջ, այն դեպքում, երբ ավելի քան 60 պետություններ մտադիր էին իրենց «խաղաղասիրական առաքելությունները» տեղակայել Սիրիայում¹³¹: ԱՄՆ–ի պետքարտուղարը կոչ էր անում «ժողովրդավարական Սիրիայի բարեկամներին» համախմբել իրենց ջանքերն ընդդիմությանը ցուցաբերվող աջակցության գործում¹³²:

Վետոյի խնդիրը, որը Մոսկվան ու Պեկինը դրեցին Սիրիայի վերաբերյալ ՄԱԿ–ի ԱՄՆ–ի բանաձևի վրա, քննարկվեց նաև 2012 թ. փետրվարի 14–ին ԱՄՆ–ի նախագահ Բարաք Օբամայի, փոխնախագահ Ջո Բայդենի և ԱՄՆ–ի այլ բարձրաստիճան պաշտոնյաների հետ ՉԺՀ–ի փոխնախագահ Սի Չինպինի հետ բանակցությունների ընթացքում: Պետքարտուղարությունում Բայդենը նշեց, որ ԱՄՆ–ը կտրականապես համաձայն չէ «Բաշար ալ–Ասադի վարչախմբի կողմից իրականացվող դաժան բռնության» վերաբերյալ բանաձևի վրա Մոսկվայի և Պեկինի դրած վետոյի հետ¹³³:

¹²³ Ben Blanchard, Sabrina Mao, China Says Supports Russian Resolution on Syria, Reuters, UK, 19.12.2011. <http://www.reuters.com/article/2011/12/19/us-syria-china-russia-idUSTRE7BI0IX20111219>

¹²⁴ Китай выступил против иностранного вмешательства в сирийский кризис, РИА Новости, 12.01.2012. http://ria.ru/arab_sy/20120112/538005266.html

¹²⁵ Китай отказался участвовать во встрече «друзей Сирии», РосБизнесКонсалтинг, 23.02.2012г., <http://top.rbc.ru/politics/23/02/2012/638992.shtml>

¹²⁶ China Opposes Armed Intervention in Syria, Chinadaily.com.cn, 17.02.2012. http://www.chinadaily.com.cn/china/2012-02/17/content_14628079.htm

¹²⁷ Китай защищает свою позицию по Сирии, 6.02.2012, Би-би-си. http://www.bbc.co.uk/international/2012/02/120205_syria_china_russia.shtml

¹²⁸ Китай выразил сожаление, что «разумное» предложение России по проекту резолюции по Сирии было проигнорировано, Жэньминь Жибао, 05.02.2012. <http://russian.people.com.cn/31520/7719825.html>

¹²⁹ Tony Caron, Russia and China Challenge the West on Syria: What Implications for Iran? Time, USA, 06.02.2012.

<http://world.time.com/2012/02/06/russia-and-china-challenge-the-west-on-syria-what-implications-for-iran/>

¹³⁰ «Братья мусульмане» критикуют Россию, Китай и Иран, Cyberpresse.ca, Канада, 07.02.2012. <http://www.inosmi.ru/asia/20120207/185167442.html>

¹³¹ Clinton Blasts Russia, China for Opposing Action on Syria, USA Today, USA, 25.02.2012. <http://www.usatoday.com/news/world/story/2012-02-24/syria-tunis-conference/53231034/1>

¹³² Tony Caron, նշվ. աշխ., էջ 1:

¹³³ Робинсон Дэн, Белый дом выступает за открытое обсуждение разногласий между Вашингтоном и Пекином, Новости «Голоса Америки», 15.03.2012. <http://www.voanews.com/russian/news/Obama-China-Syria-Correction-2012-02-15-139342898.html>

Սակայն սիրիական ճգնաժամի երկարաձգմանը զուգահեռ Պեկինում անհրաժեշտ համարեցին բանակցություններ վարել և կապեր հաստատել հակամարտող կողմերի հետ: Սիրիական ընդդիմության պատվիրակությունն այցելեց Չինաստան և փետրվարի 9-ին հանդիպում ունեցավ ՉԺՀ-ի փոխարտգործնախարար Չժայ Ցյունիի հետ: ՉԺՀ-ի ԱԳՆ-ը հայտարարեց, որ «կապեր ու շփումներ կպահպանի Սիրիայի համապատասխան ընդդիմադիր խմբավորումների հետ»¹³⁴:

Փետրվարի 17-18-ը Չինաստանի կառավարության հատուկ պատվիրակ, փոխարտգործնախարար Չժայ Ցյունը Սիրիա կատարած այցի ընթացքում հանդիպումներ ունեցավ նախագահ Բաշար ալ-Ասադի, արտգործնախարար Վալիդ ալ-Մուալլիմի, վերջինիս տեղակալի, ինչպես նաև սիրիական ընդդիմության պատասխանատու պաշտոնյաների հետ: Հանդիպումների ավարտին տրված մամլո ասուլիսին չին դիվանագետը նշեց, որ չինական կողմը սիրիական կառավարությանն ու երկրի տարբեր քաղաքական ուժերին կոչ է անում դադարեցնել քաղաքացիների դեմ իրականացվող բոլոր տեսակի բռնությունները, վերականգնել կայունությունն ու հասարակական բնականոն կարգերը¹³⁵:

Միաժամանակ ԱՄՆ-ը Չինաստանին կոչ արեց փետրվարի 24-ին մասնակցել Թունիսում «Սիրիայի բարեկամների» համաժողովին, որին հրավիրված էին ավելի քան 70 երկիր¹³⁶: «Սիրիայի բարեկամների» համաժողովի (որն առաջին անգամ հավաքվել էր իբրև միավորող դաշինք) մասնակիցներն Ասադին կոչ արեցին անհապաղ վերջ դնել արյունահեղությանն ու թույլատրել մարդասիրական օգնություն տրամադրել ապստամբների դեմ հաշվեհարդարներից տուժած շրջաններին¹³⁷: Սակայն փետրվարի 23-ին ՉԺՀ-ի ԱԳՆ-ն հայտարարեց, որ Չինաստանը չի մասնակցի «Սիրիայի բարեկամ երկրների» հետ փետրվարի 24-ին

նախատեսված հանդիպմանը¹³⁸: Ի պատասխան՝ ԱՄՆ-ի պետքարտուղարության պաշտոնական ներկայացուցիչ Մարկ Տոները վստահեցրեց, որ «միջազգային հանրությունն իր դիրքորոշումը կհասցնի Ասադին առանց Ռուսաստանի և Չինաստանի մասնակցության»¹³⁹:

Փաստենք, որ այնուամենայնիվ, մարտի 6-ին ՉԺՀ-ի արտգործնախարար Յան Ցզեչին ժողովրդական ներկայացուցիչների Համաչինական համաժողովի 11-րդ գումարման 5-րդ նստաշրջանի շրջանակներում հայտարարեց, որ Պեկինը սերտ կապեր է պահպանում ԱՄՆ-ի հետ՝ Սիրիայի և Իրանի խնդիրների շուրջ¹⁴⁰:

Փետրվարի 28-ին ժնևում մարդու իրավունքների գծով ՄԱԿ-ի հորիորի 19-րդ նստաշրջանի շրջանակներում սիրիական հարցի արագացված լումների ընթացքում չինական պատվիրակության ներկայացուցիչ տեղակալ Ցի Սյաոյան Սիրիայի կառավարությանն ու քաղաքական բոլոր խմբավորումներին կոչ արեց անհապաղ և համակողմանիորեն դադարեցնել բռնություններն ու հնարավորինս սեղմ ժամանակներում վերականգնել երկրի կայունությունն ու հասարակական բնականոն կարգերը: Ցի Սյաոյանի համաձայն՝ միջազգային հանրությունը պարտավոր է հարգել Սիրիայի ինքնավարությունը, անկախությունը, միասնականությունն ու տարածքային ամբողջականությունը, սիրիական ժողովրդի ինքնուրույն ընտրությունը, ինչպես նաև տարբեր կողմերի միջև քաղաքական երկխոսության արդյունքները: Ուստի Չինաստանը հանդես է գալիս Սիրիայի դեմ ռազմական միջամտությանը կամ «վարչախմբի հարկադրական հեռացմանը»¹⁴¹:

Ինչ վերաբերում է Սիրիայի նոր սահմանադրության նախագծի վերաբերյալ հանրաքվեի արդյունքներին և Սիրիայի նկատմամբ ՄԱԿ-ի մարդու իրավունքների գծով հորիորի գործողություններին, ապա ըստ ՉԺՀ-ի ԱԳՆ-ի ներկայացուցիչ Հուն Լեյի՝ փետրվարի 28-ի հայտարարության, Պեկինը հուսով էր, որ

¹³⁴ Catherine Belton, Joshua Chaffin, Abigail Fielding-Smith, China Reveals Syria Opposition Visit, The Financial Times, Great Britain, 09.02.2012. <http://www.ft.com/cms/s/8e905e1a-524c-11e1-a155-00144feabdc0?Authorised=false.html?ilocation=http%3A%2F%2Fwww.ft.com%2Fcms%2Fs%2F0%2F8e905e1a-524c-11e1-a155-00144feabdc0.html&referer=#axzz1lItG eqmU>

¹³⁵ Специальный посланник правительства Китая Чжай Цзюнь нанес визит в Сирию, Жэньминь Жибао, 19.02.2012. <http://russian.people.com.cn/31520/7733054.html>

¹³⁶ США призвали Китай принять участие во встрече «друзей Сирии», ВЗГЛЯД.РУ, 21.02.2012. <http://vz.ru/news/2012/2/21/563127.html>

¹³⁷ Clinton Blasts Russia, Եշվ. աշխ., էջ 1:

¹³⁸ КНР не будет участвовать в тунисской встрече «Друзей Сирии», Телеграфист, 23.02.2012. <http://telegrafist.org/2012/02/23/5070/>

¹³⁹ США считают, что мир донесет до Асада свою позицию и без РФ и Китая, Телеграфист, 24.02.2012. <http://telegrafist.org/2012/02/24/5073/>

¹⁴⁰ Китай и США поддерживают тесные контакты по вопросам Сирии и Ирана – глава МИД КНР, Russian.News.Cn, 06.03.2012. http://russian.news.cn/dossiers/2012-03/06/c_131449381.htm

¹⁴¹ Представитель Китая призвала правительство и различные политические группы Сирии прекратить насилие, Жэньминь Жибао, 29.02.2012. <http://russian.people.com.cn/31520/7743560.html>

բոլոր շահագրգիռ կողմերը ջանքեր կգործադրեն Սիրիայում լարվածության թուլացման ուղղությամբ, և նոր սահմանադրության ընդունումը կնպաստի բարեփոխումների գործընթացի առաջխաղացմանն ու Սիրիայում երկխոսության կայացմանը¹⁴²:

Իր կողմից Չինաստանի ԱԳՆ-ն մարտի 4-ին Սիրիայի հակամարտության խաղաղ կարգավորման վերաբերյալ սեփական վեց կետանոց առաջարկությամբ հանդես եկեալ: Այն իր մեջ բռնություններն անհապաղ դադարեցնելու, քաղաքական երկխոսությունն սկսելու, մարդասիրական օգնության տրամադրումն ապահովելու կոչ էր պարունակում՝ ուղղված միաժամանակ սիրիական կառավարությանը և ընդդիմությանը: Նշվում էր նաև ճգնաժամի քաղաքական կարգավորման գործում արաբական երկրներին ու ԱՊԼ-ին աջակցելու: Չինաստանի պատրաստակամության մասին¹⁴³: Պեկինը նաև Միջազգային Կարմիր խաչի կոմիտեի միջոցով սիրիական ժողովրդին 2 մլն ԱՄՆ դոլարի արտակարգ մարդասիրական դրամական օգնություն տրամադրելու վերաբերյալ որոշում էր ընդունել¹⁴⁴: Ի դեպ՝ Չինաստանն առաջին երկրներից էր, որը մարդասիրական օգնություն (5 մլն ԱՄՆ դոլար և 30 մլն յուան) տրամադրեց ոչ միայն Եգիպտոսին, Թունիսին, այլև Սիրիային¹⁴⁵:

Ուշագրավն այն է, որ արդեն իսկ մարտի 21-ին ՄԱԿ-ի ԱՄՆ-ը միաձայն ընդունեց Սիրիայում իրադրության կարգավորման նպատակով հատուկ պատվիրակ Քոֆի Անանի առջեք քաշած առաջարկների «լիակատար պաշտպանությունն» արտահայտող հայտարարությունը, այդ թվում՝ 6 կետը, որոնց մեծ մասը համընկնում էր չինական կողմի առաջարկների հետ¹⁴⁶:

ՉԺՀ-ի ԱԳՆ-ի ներկայացուցիչ Յան Ցզեչին և դեսպան Լի Խուասինը մարտի 6-7-ը այցելեցին Սիրիա, որտեղ հանդիպումներ ունեցան սիրիական արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավար Վալիդ ալ-Մուալլիմի, վերջինիս տեղակալ Ահմեդ Արնուսի և սիրիական ընդդիմադիր խմբավորումների պատաս-

խանատու դեմքերի հետ: Կողմերը կարծիքներ փոխանակեցին Սիրիայի ընթացիկ իրադրության վերաբերյալ և քննարկեցին սիրիական խնդրի կարգավորման ուղիները¹⁴⁷: Սիրիական նախարարն ընդգծեց, որ Դամասկոսը ողջունում է բռնության (անկախ, թե որ կողմից է այն բխում) դադարեցման, հումանիտար ոլորտում ՄԱԿ-ին ցուցաբերվող աջակցության, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի պատվիրակի հետ համագործակցության, երկրում սկսված բարեփոխումների գործընթացի արագացման և երկխոսության հաստատման անհրաժեշտության կոչերի վրա հիմնված չինական նախաձեռնությունը¹⁴⁸:

Հարկ է նշել, որ ՉԺՀ-ի ԱԳՆ-ի ներկայացուցիչ Յան Ցզեչինի և դեսպան Լի Խուասինի՝ Սիրիա կատարած այցից հետո չինական արտաքին գերատեսչության ղեկավարի օգնական Չժան Մինն ուղևորվեց Սաուդյան Արաբիա, Եգիպտոս և Ֆրանսիա¹⁴⁹: Իսկ ապրիլի 11-ին Պեկինում ՉԺՀ-ի նախագահ Հու Չինթանն հանդիպեց Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայյեփ Էրդողանի հետ: Հանդիպումն անցավ լարված մթնոլորտում՝ կապված Սիրիայի նկատմամբ լրացուցիչ պատժամիջոցներ մտցնելու նպատակով Անկարայի առաջարկության հետ, որը խստորեն դատապարտվեց Պեկինի կողմից¹⁵⁰:

Հունիսի 5-ին ՆԱՏՕ-ի ռազմածովային խմբավորումը զորավարություններ սկսեց Սիրիայի սահմանամերձ Արևելյան Միջերկրածովյան շրջանում: Ըստ պաշտոնական լեզբների՝ ռուս-նավարժանքների ընթացքում ղեկավարի օգնական Մուստաֆայից, Գերմանիայից և Ֆրանսիայից երեք արագընթաց հաճանակի մասնակցությամբ «ախաբեկչության դեմ պայքարի հետ կապված հնարքներ» կիրառել¹⁵¹:

Կարճ ժամանակ անց միջազգային, մասնավորապես իրանական, իսրայելական, արաբական ՉԼԱ-ների՝ հունիսի 19-ի հաղորդագրությունների համաձայն՝ Սիրիայի տարածքում համատեղ

¹⁴² Представитель МИД КНР о результатах референдума по проекту новой конституции Сирии и акции СПЧ ООН в отношении Сирии, Жэньминь Жибао, 29.02.2012. <http://russian.people.com.cn/31521/7743545.html>

¹⁴³ Ruan Zongze, նշվ. աշխ., էջ 1:

¹⁴⁴ Правительство Китая предоставит экстренную гуманитарную помощь сирийскому народу, Жэньминь Жибао, 10.03.2012. <http://russian.people.com.cn/31521/7754024.html>

¹⁴⁵ Yao Kuangyi, The Upheaval in the Middle East and China's Middle East Policy, նշվ. աշխ., էջ 18:

¹⁴⁶ Ruan Zongze, նշվ. աշխ., էջ 1:

¹⁴⁷ Представитель главы МИД КНР посещает Сирию, Russian.News.Cn, 08.03.2012. http://russian.news.cn/world/2012-03/08/c_131453904.htm

¹⁴⁸ Глава МИД САР получил письменное послание своего китайского коллеги, САНА, Дамаск, 07.03.2012. <http://www.sana.sy/Russian/325/2012/03/07/404840.htm>

¹⁴⁹ Разрешение сирийского кризиса: необходимо придерживаться стратегии «шаг вперед», Жэньминь Жибао, Китай, 12.03.2012. <http://russian.people.com.cn/95181/7755167.html>

¹⁵⁰ Peter Mattis, China Fêtes Turkish Leader as Beijing Recognizes Ankara's Growing Role, China Brief, The Jamestown Foundation, Vol. XII, Issue 8, 12.04.2012, p. 2.

¹⁵¹ Россия направила четыре корабля к берегам Сирии, Известия, 10.07.2012. <http://izvestia.ru/news/529951>

մարտավարական գորավարժություններ էին նախապատրաստում անցկացնել Չինաստանը, Իրանը, Սիրիան, Ռուսաստանը՝ իրենց մասշտաբներով աննախադեպ ՄԱԿ-ի պատմության մեջ: Կճռականություն դրսևորելով Սիրիայում գործող վարչախմբի պաշտպանության հարցում՝ վերնոշյալ երկրներն այդպիսով կարող էին հանդես գալ սիրիական հակամարտության նկատմամբ միջազգային միջամտության դեմ: Ըստ լրատվամիջոցների՝ Չինաստանն անգամ դիմել էր եզրփակական իշխանություններին՝ հունիսի վերջին Սուեզի ջրանցքով 12 ռազմանավի նավարկումը թույլատրելու համար: Մանյովերին պետք է մասնակցեին մոտ 90000 զինծառայող, 400 ինքնաթիռ, ինչպես նաև ռազմանավեր¹⁵²: Սակայն օրեր անց Չինաստանի ԱԳՆ-ն հայտարարեց, որ այդ հաղորդագրությունն անհիմն է: Ավելի վաղ այդ տեղեկությունը հերքել էին Սիրիայի նախագահի քաղաքական և տեղեկատվական հարցերով օգնական Բուսեյնա Շաբանը և Ռուսաստանի ՊՆ-ը¹⁵³:

Հունիսի 30-ին՝ ժնևում արտգործնախարարների հանդիպմանը, քննարկվեց ՄԱԿ-ի հատուկ պատվիրակ Քոֆի Անանի առաջարկը՝ Սիրիայում ազգային միասնության կառավարության ստեղծման մասին, որի մեջ առաջարկվում էր ընդգրկել ինչպես ընդդիմության, այնպես էլ Բաշար ալ-Ասադի վարչակարգի կողմնակիցներին: Նախատեսվում էր նոր կառույցից բացառել այն անձանց, «որոնց ներկայությունը կարող էր բարդացնել իշխանությունը հանձնելու, հաշտություն և կայունություն հաստատելու գործընթացը»: Դժվար չէր կոսահել, որ խոսքը Ասադի մասին էր: Ժնևյան հանդիպմանը մասնակցելու էին ՄԱԿ-ի ԱՆ-ի անդամները՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Չինաստանը և Ֆրանսիան, ինչպես նաև ԵՄ-ը, Թուրքիան, Իրաքը, Քուվեյթը և Քաթարը: Հանդիպմանը մասնակցելու հրավեր չէին ստացել ինչպես սիրիական ընդդիմության, այնպես էլ Սիրիայի նախագահի ներկայացուցիչները¹⁵⁴:

Նշենք, որ Չինաստանը հրաժարվեց մասնակցելուց նաև հուլիսի 6-ին Փարիզում «Սիրիայի բարեկամների խմբի» հանդիպ-

մանը՝ հայտարարելով, որ անհրաժեշտ է ջանքերը կենտրոնացնել ժնևյան հանդիպման արդյունքների՝ վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունների իրագործման ուղղությամբ: Հուլիսի 7-ին ՉԺՀ-ի ԱԳՆ-ի պաշտոնական ներկայացուցիչ Լյու Վեյմինը, մեկնաբանելով «Սիրիայի բարեկամների խմբի» հանդիպման վերաբերյալ ԱՄՆ-ի պետքարտուղար Է. Քլինթոնի հայտարարությունը, որի համաձայն՝ Չինաստանն ու Ռուսաստանը «կանխում են ճգնաժամի կարգավորման գործընթացը», հայտարարեց, որ Սիրիայի նկատմամբ Չինաստանի դիրքորոշման քննադատությունն ԱՄՆ-ի կողմից անընդունելի է¹⁵⁵: Ավելին՝ ՉԺՀ-ի ԱԳՆ-ի միջազգային պայմանագրերի և կազմակերպությունների բաժնի խորհրդական Լոն Ճոուն Նշեց, որ Արևմուտքը, ձգտելով գազել Սիրիայի վարչախմբին, ի չիք է դարձնում երկրում հակամարտության խաղաղ կարգավորման բոլոր փորձերը¹⁵⁶:

Հոկտեմբերի 31-ին՝ Պեկինում այցելության մեջ գտնվող Սիրիայի գծով ՄԱԿ-ի ԱՊԼ-ի հատուկ ներկայացուցիչ Լախար Բրահիմի հետ բանակցությունների ընթացքում, ՉԺՀ-ի արտգործնախարար Յան Ցզեյինը հայտարարեց, որ Չինաստանը հետևողական և կայուն դեր է խաղում սիրիական ճգնաժամի ուղղությամբ՝ հանդես գալով չորս կետերից բաղկացած առաջարկությամբ¹⁵⁷: Վերջինիս համաձայն՝ նախատեսվում էր Սիրիայում կրակի և մարտական բոլոր գործողությունների փոկային դադարեցում՝ սկզբում շրջաններում, այնուհետև՝ երկրի ողջ տարածքում. Լ. Բրահիմի և միջազգային հանրության աջակցությամբ անցումային ղեկավար մարմնի հետ կապված «ճանապարհային քարտեզի» պատրաստման գործում շահագրգիռ

¹⁵² Иран, Сирия, Россия и Китай проведут крупнейшие учения в истории Ближнего Востока: Израиль сегодня, Regnum, 21.06.2012. <http://pda.regnum.ru/news/sport/1544175.html>

Ըստ տեղեկությունների՝ այդ նավերը պետք է ուղղվեին սիրիական Տարտուս նավահանգիստ:

¹⁵³ Չինաստանի ԱԳՆ-ն հերքել է Սիրիայում խոշոր զորավարժություններ անցկացնելու լուրերը, Tin.am, 20.06.2012.

¹⁵⁴ Кофи Аннан предложит создать в Сирии новую власть, Известия, 28.06.2012.

¹⁵⁵ Հունիսի 30-ի ժնևի համաժողովին մասնակցում էին ՄԱԿ-ի ԱՆ-ի մշտական անդամ ինգւ պետությունների՝ Թուրքիայի, Քուվեյթի, Քաթարի, Իրաքի նախարարները, ՄԱԿ-ի, ԱՊԼ-ի և ԵՄ-ի ներկայացուցիչներ: Արտգործնախարարները համաձայնության եկան Սիրիայում անցումային կառավարություն հաստատելու և Բաշար ալ-Ասադի հրաժարվանը չպահանջելու հարցում: Չինաստանը չէր մասնակցել Թունիսում փետրվարին և Թուրքիայում՝ ապրիլին տեղի ունեցած համաժողովներին: Uyu մասին տե՛ս China not to Attend Upcoming Syria Meeting, China.org.cn, 5.07.2012. http://www.china.org.cn/world/2012-07/05/content_25828411.htm

¹⁵⁶ МИД Китая: Критика со стороны США в отношении позиции КНР по Сирии неприемлема, Голос России, 7.07.2012. http://rus.ruvr.ru/2012_07/80614877/

¹⁵⁷ Китай: Разрешению сирийского кризиса препятствует Запад, ВЗГЛЯД.РФ, 04.08.2012. <http://vz.ru/news/2012/8/4/591876.html>

¹⁵⁸ Китай готов совместно с заинтересованными сторонами прилагать общие усилия для содействия скорейшему решению сирийского вопроса-МИД КНР, russian.china.org.cn, 07.11.2012. http://russian.china.org.cn/china/txt/2012-11/07/content_27037487.htm

բոլոր կողմերի ներկայացուցիչների մասնակցություն, ժնկյան «գործողությունների խմբի» վերաբերյալ հուշագրի իրականացման գործում միջազգային հանրության աջակցություն, սիրիական ժողովրդին մարդասիրական օգնության ցուցաբերման ակտիվացում: Թվարկված միջոցառումների իրագործումը պետք է ապահովվեն ինչպես երկրի իշխանությունները, այնպես էլ ընդհանրապես խմբավորումները¹⁵⁸:

2013 թ. հունվարի 6-ին ՉԺՀ-ի խոսնակը հայտնեց, որ Չինաստանը կորչունի բռնությունների դադարեցման նպատակով Սիրիայի հակամարտող կողմերի ընդունած ցանկացած որոշում¹⁵⁹: Հունվարի 8-ին ՉԺՀ-ի արտգործնախարարը սիրիական խնդրի շուրջ հեռախոսային զրույց ունեցավ ՄԱԿ-ԱՊԼ միասնական հատուկ ներկայացուցիչ Լախար Բահիմի հետ՝ Պեկինի ամուր աջակցությունը հայտնելով նրա միջնորդական ջանքերին¹⁶⁰: ՉԺՀ-ի արտգործնախարար Յան Ցզիեչին 2013 թ. փետրվարի 6-ին Սիրիայի փոխարտգործնախարար Ֆեյսալ ալ-Մաքդադի հետ Պեկինում ունեցած հանդիպման ընթացքում՝ կոչ արեց սիրիական հակամարտության բոլոր կողմերին հնարավորինս սեղմ ժամկետներում սկսել քաղաքական երկխոսությունը՝ գտնելով, որ իրարդրությունը «կիրտիկական փուլի» է հասել: Նախորդ օրը եզրփակումով ՉԺՀ-ի դեսպանը (Song Aiguo) Կահիրեում հանդիպել էր «Սիրիայի Ընդդիմադիր Ազգային կոալիցիայի» և «Հեղափոխական Ուժերի» նախագահ Ահմեդ Մուազ ալ-Խաթիրին՝ նշելով, որ Չինաստանը հետևում է Ալ-Խաթիրի վերջին շրջանի դիվանագիտական գործունեությանը սիրիական խնդրի կարգավորման ուղղությամբ և հույս ունի, որ սիրիական հակամարտության բոլոր կողմերը հետևողական և հավասար հիմունքներով քանակցությունների և խորհրդակցությունների միջոցով քաղաքական համակողմանի երկխոսության և կարգավորման կհասնեն¹⁶¹: Չին դիվանագետը հորդորեց սիրիական հակամարտող կողմերին քաղաքական անցումային գործընթացը վարել Սիրի-

այի վերաբերյալ Գործողությունների խմբի ընդունած ժնկյան հուշագրի ոգուն համապատասխան¹⁶²:

Այսպիսով՝ Չինաստանն իրեն դրսևորեց իրն միջազգային հարաբերությունների հիմնարար նորմերի պաշտպանության հանդես եկող և գլոբալ կառավարման գործերին մասնակցող ու պատասխանատվություն ստանձնող մեծ տերություն: ՉԺՀ-ն, սիրիական ճգնաժամի ողջ ընթացքում ամուր կանգնելով Սիրիայի ազգային ինքնիշխանության պաշտպանության դիրքերում, ամբողջովին բացառեց որևէ հիմքով, այդ թվում՝ մարդու իրավունքների ոտնահարման պատճառաբանությամբ երկրի ներքին գործերին միջամտության հնարավորությունը: Պեկինում գտնում են, որ Սիրիայի ապագան պետք է որոշի սեփական ժողովուրդը, Սիրիան անձամբ պետք է լուծի իր ներքին տարածաշրջանները և քաղաքական երկխոսության միջոցով ազգային կայունություն հաստատի երկրում¹⁶³: Ըստ Պեկինի՝ Աֆղանստանի ու Իրաքի դեպքերը ցույց տվեցին, որ դրսից պարտադրված վարչախմբի փոփոխությունը չի հանգեցնում ցանկանի արդյունքի: Այդ պատճառով Չինաստանը չի ցանկանում հրաժարվել քանակցությունների միջնորդի դերից, որին վստահում է Ասադը¹⁶⁴:

Պեկինում կարծում են, որ սիրիական վարչախմբի անկումը կարող է առավել ծանր հետևանքների հանգեցնել, քան ներկայիս քաղաքական ճգնաժամը: Տասնյակ հազարավոր քաղաքացիների մահվան փաստը մեծ ողբերգություն գնահատելով հանդերձ՝ Պեկինում ենթադրում են, որ արևմտյան երկրները թերազնահատում են իսլամական արմատականների իշխանության գալու կամ երկրում իշխանության հնարավոր վակուումի առաջացման հետևանքները¹⁶⁵: Ուշագրավն այն է, որ ըստ «Global Times» օրաթերթի՝ «Արևելյան Թուրքեստանի Ազատագրական շարժման» (ETIM) մարտիկները Սիրիայում պայքարում են ընդդիմության կողմից: Վերջիններս 2012 թ. մայիս ամսից Սիրիա են տեղափոխվել Ասադի վարչախմբի դեմ պայքարում Ալ-Նախդային և ծայրահեղական այլ կազմակերպություններին միանալու նպատակով¹⁶⁶:

¹⁵⁸ Очередная пресс-конференция 1 ноября 2012г. у официального представителя МИД КНР Хун Ляя, Генеральное Консульство Китайской Народной Республики в г. Хабаровске, 01.11.2012. <http://www.chinaconsulate.khb.ru/rus/fyrth/t985099.htm>

¹⁵⁹ China Welcomes Generally Accepted Solution for Syria, China Daily, 07.01.2013. http://www.chinadaily.com.cn/china/2013-01/07/content_16092875.htm

¹⁶⁰ Chinese FM Talks with UN-AL Envoy on Syria in Phone, China Daily, 08.01.2013. http://www.chinadaily.com.cn/china/2013-01/08/content_16096603.htm

¹⁶¹ Beijing Calls for Syria Political Transition, China Daily, 07.02.2013.

http://www.chinadaily.com.cn/china/2013-02/07/content_16209754.htm

¹⁶² China Urges Widely Accepted Syrian Solution, China Daily, 06.02.013. http://www.chinadaily.com.cn/china/2013-02/06/content_16209461.htm

¹⁶³ China Opposes Foreign Intervention in Syria: FM, Xinhua, Beijing, 24.05.2011. http://www.chinadaily.com.cn/world/2011-05/24/content_12572110.htm

¹⁶⁴ Франк Зирен, Изменить правила игры, Handelsblatt, Германия, 11.02.2012. <http://www.inosmi.ru/asia/20120211/185634731.html>

¹⁶⁵ Тавитов В., նշվ. աշխ., էջ 1:

¹⁶⁶ Uyghurs Fighting in Syria, Al-Manar, 29.10.2012. <http://www.almanar.com.lb/english/adetails.php?eid=72711&frid=31&seccatid=91&cid=31&fromval=1>

Պեկինում համոզված են, որ Ասադի պաշտոնաթողությունը չի հանգեցնի երկրում իրականացվող բռնությունների դադարեցմանը: Սիրիական իրադարձություններում նրանք տեսնում են ոչ թե բռնակալի և ապստամբների, այլ զինված խմբավորումների միջև պայքար, որում չի կարելի որևէ կողմին նախապատվություն տալ¹⁶⁷: Այդ պատճառով էլ սիրիական ճգնաժամում չինացիներն ընտրություն են անում առկա ստատուս քվոյի և ոչ թե անկանխատեսելի ապագայի պաշտպանության օգտին:

Հարկ է նկատել, որ Պեկինը հազվադեպ է դիմում ՄԱԿ-ի Աստուծոյի օգտագործմանը, որի հետ կապված շարժառիթները տատանվում են ներքին քաղաքական և տնտեսական նկատառումներից մինչև աշխարհառազմավարական հաշվարկները: Պեկինում ենթադրում են, որ Արևմուտքի միջամտության սահմանափակումը տարածաշրջանում կարող է ծառայել իրենց շահերին: «Հիամաձայնելով» Արևմուտքի հետ և օգտվելով վետոյի իրավունքից, դիմելով իր հասցեին լուրջ քննադատության հետ բախվելու ռիսկին՝ Պեկինն ըստ էության փորձում է կանխել ՄԱ-ում նոր իրավիճակի ձևավորման վրա Արևմուտքի ազդեցությունը¹⁶⁸: Անանվանդ որ ՄԱ-ի երկրները ոչ միայն ձգտում են ստանալու ՉժՀ-ի աջակցությունը տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման գործում, այլև աստիճանաբար Պեկինի հետ հարաբերությունները միջոց են դիտում Վաշինգտոնից իրենց անկախության ապահովման ճանապարհին¹⁶⁹:

Մոսկվայում ու Պեկինում կարծիք կա, որ Արևմուտքն անբողջությամբ, մասնավորապես ԱՄՆ-ն արաբական աշխարհում ընդդիմադիր շարժումները սնուցում են իրենց սեփական շահերն առաջ տանելու նպատակով: Այդ իսկ պատճառով էլ Սիրիայում բռնի փոփոխություններից խուսափելու նպատակով Մոսկվան և Պեկինը զնալով ավելի են մերժեցնում Արևմուտքին բարեկամաբար տրամադրված վարչախմբերի իշխանության գալու կանխարգելման փորձերում¹⁷⁰: Չինացի փորձագետներն անգամ խոսեցին «Պեկին-Մոսկվա առանցքի» ստեղծման մասին, որի վրա

¹⁶⁷ Նշենք, որ շարժումն ընդգրկված է ՄԱԿ-ի կողմից սահմանված ահաբեկչական կազմակերպությունների ցուցակում:

¹⁶⁸ СМІ: Россия, Китай и Иран готовятся к учениям у берегов Сирии, Военное Обозрение, 2.08.2012. <http://topwar.ru/17199-kitay-reshil-napravit-k-beregam-sirii-voeniye-korabli.html>

¹⁶⁹ Tony Caron, նշվ. աշխ., էջ 1:

¹⁷⁰ James Chen, The Emergence of China in the Middle East, նշվ. աշխ., էջ 6:

¹⁷¹ Neil MacFarquhar, նշվ. աշխ., էջ 1:

պետք է դրվեր ամերիկյան կայսերապետությանը դիմակայելու պատմական առաքելությունը, քանի որ երկու երկրների համագործակցությունը շատ ավելի օգտակար կարող է լինել, քան ԱՄՆ-ի գերիշխանության դեմ նրանց առանձին բողոքարկման քաղաքականությունը: Հավանաբար այդ պատճառով է Չինաստանը պատրաստ աստարելու Ռուսաստանին վերջինիս համար կարևոր Սիրիայի, իսկ Ռուսաստանն իր հերթին՝ Պեկինի համար կարևոր խնդիրներում¹⁷¹:

Կարելի է ենթադրել, որ Սիրիայի հետ կապված տարածաշրջանային պատճառով ՄԱԿ-ի Աս-ի մշտական հնգյակի արևմտյան գործընկերների հետ Պեկինի և Մոսկվայի հարաբերությունների սրումը «սուվեր է նետում» Իրանի միջուկային ծրագրի առնչությամբ Օբամայի վարչակազմի կողմից Թեհրանին մեկուսացնելու և ճնշելու ուղղությամբ ջանքերի վրա¹⁷²: Չին փորձագետների համաձայն՝ դիվանագիտական մեկուսացման, ռազմական զսպման և ցանցային տեղեկատվության տարածման միջոցով Վաշինգտոնը փորձում է խստացնել պատժամիջոցների կիրառումն իրանական նավթի արտահանման և ֆինանսական համակարգի նկատմամբ: Իրանասիրիական դաշինքը «ապատակիք» է դիտվում ոչ միայն ԱՄՆ-ի ռազմավարական դաշնակից Իսրայելի համար, այլև մտահոգում է Աստուծոյան Արաբիային ու Մոցի երկրներին ու Թուրքիային: Ուստի Ասադին ճնշելու նպատակը շիական «աղեղը կտորելը» և Իրանին մեկուսացնելն է¹⁷³: Սիրիայի անկումը կարող է հանգեցնել իրանամետ ճակատի (Իրան, Սիրիա, «Հիզբալլահ» կազմակերպություն) թուլացմանը՝ միաժամանակ ուժեղացնելով արևմտամետ դաշինքը (Աստուծոյան Արաբիա, ԱՄԷ, Քաթար և այլն), ինչպես նաև Թուրքիան՝ իբրև ՆԱՏՕ-ի անդամ¹⁷⁴:

Մինչդեռ Սիրիան ու Իրանը կենտրոնական դեր են խաղում Չինաստանի աշխարհաքաղաքական ազդեցության ամրապնդման ռազմավարությունում, որին նա հետամուտ է ճիշտ այնպիսի վճարակներով, ինչպես ԱՄՆ-ը, սակայն չինացիները, ի տարբերություն ԱՄՆ-ի, խուսափում են ռազմական միջամտությունից¹⁷⁵: Չինաստանն Իրանը խոշոր տարանցիկ երկիր է դիտում Մոցի

¹⁷¹ Тавитов В., նշվ. աշխ., էջ 1:

¹⁷² Tony Caron, նշվ. աշխ., էջ 1:

¹⁷³ Yao Kuangyi, The Upheaval in the Middle East and China's Middle East Policy, նշվ. աշխ., էջ 14:

¹⁷⁴ Тавитов В., նշվ. աշխ., էջ 1:

¹⁷⁵ Франк Зирен, նշվ. աշխ., էջ 1:

երկրների, միջինասիական և հարավկովկասյան հանրապետությունների հետ հարաբերությունների զարգացման ճանապարհին¹⁷⁶: Սիրիան Պեկինի համար կարճագույն ցամաքային ելք է դեպի Միջերկրական ծով և, իբրև Միջերկրածովյան միության անդամ, հավելյալ մուտք դեպի ԵՄ վերջինիս կողմից Չինաստանի դեմ առևտրային արգելքների կիրառման դեպքում¹⁷⁷:

Միանգամայն ակնհայտ է, որ ՄԱ–ում Արևմուտքի գլխավոր նպատակներից մեկը Չինաստանին էներգետիկ առումով թուլացնելն է: Ուստի սիրիական ճգնաժամն ու նրա հետևանքները չափազանց ծանր կանդրադառնան Արևմուտքից ունեցած Չինաստանի էներգետիկ կախվածության վրա¹⁷⁸: Չինաստանն ամեն կերպ կփորձի դա թույլ չտալ, քանի որ արդեն հսկայական վնասներ է կրել հակաիրանական պատժամիջոցների կիրառումից, լիբիական, սուդանական, արևմտաաֆրիկյան խնդիրների հետ բախումից: Իսկ Իրանի՝ ՉԺՀ–ի նավթի և բնական գազի կարևորագույն մատակարարներից մեկի դեմ ռազմական գործողությունները Չինաստանին կարող են հասցնել էներգետիկ ճգնաժամի եզրին¹⁷⁹:

Հետևաբար Սիրիայի պաշտպանությամբ Պեկինը ձգտում է առաջին հերթին թույլ չտալ տարածաշրջանում ԱՄՆ–ի դիրքերի ամրապնդմանը, և երկրորդ՝ թույլ չտալ, որպեսզի Իրանը դառնա Արևմուտքի հաջորդ թիրախը: Չինաստանը կշարունակի ճկուն քաղաքականություն վարել նաև հետագայում՝ ելնելով իր աշխարհաքաղաքական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից: Սրան նպաստում է նաև ԱՄՆ–ի կողմից Չինաստանին ռազմավարական հակառակորդ գնահատելու հանգամանքը, հատկապես ՉԺՀ–ի տնտեսական բուռն աճի և ՄԱ–ի տարածաշրջանում վերջինիս դիրքերի ամրապնդման, մասնավորապես նավթարդյունահանող երկրների հետ վերջինիս կապերի խորացման համատեքստում:

ԳՈՀԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

**ՀԱՅ–ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.
«ԲԱՐԻԴՐԱՑԻԱԿԱՆԻՑ»
«ՀԱՏՈՒԿ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»**

Հայ–իրանական հարաբերություններն ունեն դարերի պատմություն, սակայն 1991 թ.՝ Հայաստանի անկախացումից հետո, հայ–իրանական տնտեսական, քաղաքական, գիտական, մշակութային և միջմարզային կապերը ստացան որակական նոր բնույթ: Իրանում առկա մեծ և ակտիվ հայկական համայնքը նպաստում է կապերի ամրապնդմանը ինչպես հասարակական ոլորտում, այնպես էլ քաղաքական մակարդակում: Իրանում ապրող հայերը ներկայացված են մեջլիսում: ԻԻՀ վերջին երեք նախագահների կառավարման տարիներին (Հ. Ռաֆիսանջանի, Մ. Խաթամի, Մ. Ահմադինեստադ) Հայաստանի հետ հարաբերություններում հիմնականում պահպանվել են նույն ձևով՝ բարեկամական, բարիդրացիական:

Հ. Ռաֆիսանջանիի կառավարման տարիներին զգացվում էր երկուստեք ճանաչողական բնույթի գործելակերպ, ինչպես նաև խիստ արդիական էր Ղարաբաղյան խնդիրը, որի ժամանակ Իրանը փորձում էր վարել գզուշավոր քաղաքականություն: Խաթամիի և Ահմադինեստադի կառավարման տարիներին՝ արցախյան ճակատում առկա հրադադարի և ընթացող բանակցությունների պայմաններում, հնարավոր եղավ ավելի ակտիվացնել հարաբերությունները:

Նույնը նկատվում էր նաև հայկական կողմում: Եթե հանրա-

¹⁷⁶ Mehmet Ögütçü, Building a Turkish–Chinese Strategic Partnership In the 21st Century: Why and How? Presented at China Academy of Social Sciences, Institute of West Asia and Africa Studies, September 2000, Beijing, p. 6. <http://www.econturk.org/Turkischeconomy/ogutcu4.pdf>

¹⁷⁷ Франк Зирен, նշվ. աշխ., էջ 1: «Մետաքսի ճանապարհը» Չինաստանի համար ավարտվում է Սիրիայում:

¹⁷⁸ Сирийский кризис угрожает энергетической безопасности Китая: эксперт, Информационное агентство REX, 12.07.2012. <http://www.iarex.ru/news/27412.html>

¹⁷⁹ СМІ: Россія, Китай і Іран готуються к учениям у берегах Сирії, նշվ. աշխ., էջ 1:

¹ Հողվածը գրելիս մեծապես օգտվել ենք ՀՀ արտաքին գործերի նախարարության արխիվային նյութերից, մամուլից, դիվանագետների և քաղաքական գործիչների հուշերից:

պետության առաջին տարիներին՝ Լ. Տեր-Պետրոսյանի օրոք, ակնհայտորեն բացակայում էին դիվանագիտական էլիտան և այն փորձառությունը, որ անհրաժեշտ էր շփվել իրանական կողմի հետ, ապա տարիներ անց՝ Ռ. Քոչարյանի և Ս. Սարգսյանի օրոք, նկատվեց իրանական դիվանագիտության հետ շփվելու «գործիքների» ավելացում, ինչին նպաստեց նաև Ղարաբաղյան ճակատում համեմատական անդորրը:

Հատկանշական է, որ եթե պայմանական նշենք, ապա հայ-իրանական հարաբերությունների կուլմինացիան, ըստ իս՝ կարելի է թվագրել 2004 թվականից, երբ առևտրաշրջանառության մեջ հատվեց 100 միլիոնի շեմը, երբ 2004 թ. առաջին անգամ ՀՀ այցելեց ԻԻՀ նախագահը, որից հետո նախագահների մակարդակով հաճախակիացան փոխայցելությունները: Հաջորդ նշանողային իրադարձությունն էր 2007 թ. Հայաստան-Իրան գազատարի առաջին հատվածի բացումը, նույն թվականին՝ այլ-ընտրանքային ճանապարհ դեպի Իրան և այլն:

Այսօր նկատվող պասիվությունը Հայաստանի կամ Իրանի քաղաքական վերնախավի կամքի նվազման հետևանք չէ: Կարծում ենք, որ Իրանի նկատմամբ կիրառվող պատժամիջոցները, այնուամենայնիվ, ազդել են տնտեսության վրա, և իրանական կողմը չի կարողանում իրականացնել այն ծրագրերը, որոնք օրակարգում են դեռևս 1990-ական թվականների սկզբներից:

Հայաստան-Իրան քաղաքական հարաբերություններն այսօր զարգանում են կայուն և հավասարակշռված հիմքի վրա, բարեկամության, անկեղծության, վստահության և կառուցողական ոգով, թեև ավելի քիչ ակտիվ, քան հայ-իրանական տնտեսական հարաբերությունները: Սակայն հարաբերությունների զարգացման տվյալ մակարդակին հասնելու համար երկու կողմի դիվանագետները տարիներ շարունակ մեծածավալ աշխատանք են իրականացրել:

1991 թ. սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի անկախության հռչակումից հետո, Իրանի Իսլամական Հանրապետությունն առաջիններից էր, որ ընդունեց Հայաստանի անկախության փաստը (1991 թ. դեկտեմբեր): Դրան հետևեց 1992 թ. փետրվարի 9-ին Թեհրանում ստորագրված հռչակագիրը Հայաստանի և Իրանի միջև լիարժեք դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ²: Նույն օրը ստորագրվեց մեկ

այլ փաստաթուղթ՝ Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև «հարաբերությունների սկզբունքների և նպատակների մասին հռչակագիրը», որով կողմերը հավաստում էին բարիդրացիական հարաբերություններ հաստատելու մասին՝ խարսխվելով երկուստեք տարածքային ամբողջականության նկատմամբ հարգանքի և միմյանց գործերին չմիջամտելու սկզբունքների վրա: Վերոհիշյալ փաստաթղթի ստորագրումից մեկ ամիս անց Թեհրանում և Երևանում բացվեցին դեսպանատներ:

Երկու երկրներն ունեին և այսօր էլ ունեն միասնական շահեր, որոնք ստիպում են հարաբերությունները օրեցօր առավել խորացնել: Հայաստանը Իրանի սահմանակից միակ քրիստոնյա երկիրն է: Պաշտոնական Երևանի հետ Թեհրանը չունի խնդիրներ և Հայաստանի հետ համագործակցությունը համարվում է հեռանկարային: Երկու երկրներն էլ շահագրգիռ են, որպեսզի Հարավային Կովկասի քաղաքական վիճակը լինի կայուն: Բացի այդ, Թուրքիայի ռազմական հզորացումը որոշակի սպառնալիք է երկու պետությունների համար էլ: Այդ ամենը երկուստեք շահերի ընդամենը մի մասն է կազմում:

1992 թ. փետրվարի 28-ին առաջին անգամ պաշտոնական այցով Երևան ժամանեց ԻԻՀ արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթին: Այցի հիմնական նպատակն էր քննարկումներ անցկացնել միջազգային և տարածաշրջանային հարցերի վերաբերյալ: Նա հանդես եկավ առաջարկությամբ, որով հավաստում էր Իրանի պատրաստակամությունը հանդես գալու միջնորդական առաքելությամբ՝ Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման հնարավոր եզրերը ուսումնասիրելու համար: Այդ քննարկումների ժամանակ իրանական կողմը խոստացավ օժանդակել շրջափակման մեջ գտնվող Հայաստանին՝ իր տարածքով աշխարհի հետ հաղորդակցվելու համար: Իրանի արտաքին գերատեսչության ղեկավարը շեշտեց, որ Հայաստանին այլևս չեն սպառնա ցամաքային շրջափակումները³:

Այդ օրերին ԻԻՀ-ում ՀՀ դեսպանատունը մեծ ջանքեր ներդրեց, որպեսզի օգնի Հայաստանի քաղաքացիներին. «Դեսպանատան ջանքերով կազմակերպվեց բազմապիսի օգնություն Հայաստանի Հանրապետությանը (օրինակ՝ այլուրի առաքում Զանգեզուրի տարածաշրջանի բնակավայրերին, նորածին երե-

² Հռչակագիր ԻԻՀ և ՀՀ միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին, ՀՀ ԱԳՆ, ցուցակ 5, գործ N 239:

³ Վ. Բայրուրյան, Իսլամական Հեղափոխության քառորդ դարը: Քաղաքականությունների երկխոսություն, Հայաստան-Իրան, Միհր, 2 (46), 2004, էջ 37:

խաներ ունեցող ընտանիքներին նավթավառների և նավթի առաքում, ֆինանսական խոշոր փոխանցումներ «Հայաստան համահայկական հիմնադրամին»⁴։

1992 թ. փետրվարին ՀՀ և ԻԻՀ Արտաքին գործերի նախարարությունների միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի համաձայն՝ յուրաքանչյուր տարի երկու երկրների միջև քաղաքական խորհրդակցություններ պետք է տեղի ունենան։ 1992 թ-ից ի վեր երկու երկրներն ունենում են ամենամյա քաղաքական խորհրդակցություններ, որոնք բարձր են գնահատում թե՛ իրանական, թե՛ հայկական կողմը՝ գտնելով, որ դրանք նպաստում են փոխադարձ վստահության ամրապնդմանը։

2001 թ. Իրանի և Հայաստանի համատեղ որոշման համաձայն՝ ՀՀ Ազգային ժողովում և ԻԻՀ Մեջլիսում ձևավորվեցին համապատասխանաբար Հայաստան-Իրան և Իրան-Հայաստան պատգամավորական քարտեկամության խմբեր, որոնք մինչև օրս էլ սերտորեն համագործակցում են՝ իրականացնելով փորձի փոխանակում և երկուստեք շահերի ոլորտում գտնվող հարցերի շուրջ քննարկումներ։

2004 թ. առաջին անգամ պաշտոնական այցով Հայաստանի Հանրապետություն ժամանեց ԻԻՀ նախագահ Մ. Խաթամին։ ԻԻՀ նախագահի այցով նոր էջ բացվեց հայ-իրանական հարաբերություններում։ Այցի ժամանակ ԻԻՀ նախագահն անդրադարձավ Կովկասում տեղակայված օտար ուժերի ներկայությանը. «Թեհրանը և Երևանը դեմ են տարածաշրջանում արտասահմանյան ռազմական ուժերի տեղակայմանը և գտնում են, որ այն ապակայունացնում է իրավիճակը Կովկասում»⁵։ Խաթամինի խոսքում ուշագրավ էր այն փաստը, որ նա հայ-իրանական հարաբերությունները որակեց որպես «հատուկ հարաբերություններ»։ Իրանի քաղաքականությունը միտված է հարևան բոլոր երկրների հետ լավ հարաբերություններ հաստատելուն, Հայաստանի հետ ստեղծվել են **հարուկ հարաբերություններ**։ Իրանի և Հայաստանի ժողովուրդների միջև հարաբերությունները կարող են լավ օրինակ հանդիսանալ բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են կողջ կողքի ապրել՝ հարգելով միմյանց

ինքնիշխանությունը»⁶։ Հանդիպման ավարտին ստորագրվեց 7 համաձայնագիր։

Ընդհանրապես նախագահների մակարդակով իրականացվող փոխայցելությունները խոսում են երկկողմ հարաբերությունների դինամիկ զարգացման մասին։ 2006 թ. հուլիսի 5-ին ՀՀ նախագահ Ռ.Քոչարյանը աշխատանքային այցով մեկնեց ԻԻՀ, որտեղ հանդիպեց ԻԻՀ-ի նորընտիր նախագահ Մահմուդ Ահմադինեժադի հետ։ Բանակցությունների արդյունքում կնքվեց 7 հուշագիր, ըստ որոնց՝ կողմերը պարտավորվում էին համագործակցել էներգետիկայի, տնտեսության, արդյունաբերության, իրավական ոլորտներում, ինչպես նաև մշակութային ժառանգության բնագավառում։ Իրանի և Հայաստանի օրենսդիր մարմինները համաձայնության եկան էքստրադիցիայի վերաբերյալ, ըստ որի՝ համաձայնվող կողմերը պարտավորվում էին հայցի դեպքում իրենց տարածքում դատական հետապնդման մեջ գտնվող անձանց հանձնել մյուս կողմին⁷։

Ընդհանուր առմամբ, այսօր Հայաստան-Իրան քաղաքական հարաբերությունները զգալիորեն զիջում են Հայաստան-Իրան տնտեսական հարաբերություններին։ Սակայն, այդ ամենով հանդերձ, քաղաքական բնագավառում հայ-իրանական երկխոսության խոշոր ձեռքբերումներից կարելի է համարել ՄԱԿ-ում և միջազգային այլ կառույցներում Հայաստանի և Իրանի սերտ համագործակցությունը։ Այս տարիներին երկու երկրները միջազգային կազմակերպություններում գրեթե միշտ պաշտպանվել և հարգել են միմյանց շահերը, իսկ եթե իրավիճակը խիստ լարված է եղել, ապա հիմնականում դիմել են չեզոքության քաղաքականությանը՝ փորձելով այդպես գոնե չվնասել մեկը մյուսին։

Կարծում ենք, որ ԻԻՀ-ի համար հայ-իրանական հարաբերություններն առավել հետաքրքրական են քաղաքական հարաբերությունների ենթատեսքում, քանզի միջազգային հարթակներում քրիստոնեական երկրի կողմից արտահայտած դրական մոտեցումները և վերաբերմունքը կարող են նրանց հետաքրքրել՝ ստեղծելով յուրահատուկ ֆոն մահմեդական Իրանի համար։

Հայաստան-Իրան տնտեսական հարաբերություններն, ի տարբերություն քաղաքական հարաբերությունների, գոնե առերևույթ, զարգանում են շատ ավելի արդյունավետ և դինամիկ։

⁴ Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (1992-1998 թթ.) Վահան Բայրոբյանի հետ, Երևան, ապրիլի 13, 2012 թ.։

⁵ Визит главы Ирана прежде всего будет способствовать развитию экономических отношений, уверен премьер Армении, <http://www.panarmenian.net/search/rus/>

⁶ Բաղայան Գ., Հայ-իրանական հարաբերությունները 20 տարեկան են, Թեհրան, 2012, էջ 113-114։

⁷ Парламент Армении ратифицировал армяно-иранское соглашение об экстрадиции Баку. ИРНА. 20 декабря 2006 года.

1990–ական թվականներին Հայաստանի արտաքին տնտեսական կապերի մեջ Իրանը գրավում էր երկրորդ տեղը՝ զիջելով միայն Ռուսաստանին: 1994 թ. համեմատությամբ՝ երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունն ավելացավ երեք անգամ: Դրան նպաստեց նաև այն հանգամանքը, որ 1995 թ. ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև ստորագրվեց համաձայնագիր առևտրատնտեսական համագործակցության վերաբերյալ: Այդ համաձայնագրի 1–ին կետով նախատեսվում էր փոխշահավետության հիման վրա և յուրաքանչյուր երկրի օրենսդրության շրջանակներում զարգացնել երկարաժամկետ առևտրատնտեսական համագործակցություն: 2–րդ հոդվածով հիմնականում ուշադրություն պետք է դարձվեր առևտրատնտեսական, ֆինանսավարկային քաղաքականության, բանկային գործունեության, արդյունաբերության, տրանսպորտի և կապի, գյուղատնտեսության, շինարարության ու ճարտարապետության, տուրիզմի բնագավառների վրա: 3–րդ կետով միմյանց պետք է տրամադրվեին առավելագույն բարենպաստության ոեծիմներ՝ առևտրատնտեսական հարաբերությունների գծով⁸:

Եթե 1993 թ. առևտրաշրջանառությունն Իրանի և Հայաստանի միջև կազմում էր ընդամենը 21,3 միլիոն դոլար, ապա 2011 թ. առևտրաշրջանառությունը երկու երկրների միջև հասավ 335 279 900 դոլարի, իսկ 2012 թ. ունեցանք մի փոքր անկում՝ 330 926 800 դոլարի⁹:

Չնայած առևտրաշրջանառության ընդհանուր աճի տեմպերին՝ առկա է մեծ ներուժ առևտրատնտեսական հարաբերություններն առավել խորացնելու համար: Այսպես՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, 2012 թ. հուլիսին հանդիպելով ՀՀ-ում ԻԻՀ նորանշանակ դեսպան Մոհամմեդ Ռեիսիի հետ, առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման հեռանկար է համարել համագործակցությունը ոսկերչության, դեղագործության, անասնապահության բնագավառները: Կողմերը կարևորել են զբոսաշրջության խթանմանն ուղղված ծրագրերը և հայ-իրանական միջմարզային համագործակցության զարգացումը¹⁰:

Հարկ է նշել, որ երկու երկրների միջև տնտեսական հարաբերությունները չեն սահմանափակվում միայն առևտրային փոխ-

հարաբերություններով և շատ հաճախ իրենց մեջ ընդգրկում են առավել խոշոր ծրագրեր: Դրանց օրինակ կարող է հանդիսանալ 1997 թ. շահագործման հանձնված բարձրավոլտ էլեկտրահաղորդման գիծը: Բացի այդ, երկու երկրների միջև նախատեսվում է իրականացնել Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայանի կառուցման աշխատանքները: 1997 թ.–ից սկսած՝ շարունակվում են էլեկտրաէներգիայի փոխշահավետ սեղանային փոխանակումները: Հայաստանն ամառային ամիսներին էլեկտրաէներգիա է տրամադրում Իրանին, փոխարենը՝ այն ստանում ձմեռային ամիսներին:

2001 թ. դեկտեմբերին նախագահ Ռ. Քոչարյանի՝ Իրան կատարած այցից որոշ ժամանակ անց շահագործման հանձնվեց Ազարակի փոխանջատիչ կայանը, որն ամենաբարձր հզորությունն ունի Անդրկովկասում: Այժմ աշխատանք է ծավալվում երկու երկրների միջև նոր գծեր կառուցելու համար¹¹:

Իրանական կողմը մեծ ցանկություն ունի ներգրավվելու Հայաստանում հողմակայանների կառուցման գործում, ինչի համար 2,5 մլն դոլար դրամաշնորհ է տրամադրել, որպեսզի փորձնական հողմակայան կառուցվի Պուլշինի լեռնանցքում: Հաջողության դեպքում իրանական կողմը պատրաստ է մեծացնելու ներդրումների քանակը¹²:

Դեռևս 1992 թ. փետրվարի 9–ին ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև հարաբերությունների սկզբունքների և նպատակների մասին հռչակագրում կողմերը նախատեսում էին համագործակցել էներգետիկ ոլորտում՝ Մեդրիում՝ Արաքս գետի վրա կառուցելով հէկ: Այդ հռչակագրի 15–րդ հոդվածում նշվում էր. «...Մեդրիի սահմանային կետում Իրանի Իսլամական Հանրապետության հետ համագործակցել համատեղ հիդրոէլեկտրակայան կառուցելու գործում: Իրանական կողմը հայտնեց, որ այդ հարցը կքննարկվի»¹³:

2006 թ. հուլիսի 5–ին ՀՀ նախագահն աշխատանքային այցով ժամանեց ԻԻՀ, որի հիմնական նպատակն էր հստակեցնում մտցնել միջտնտեսական հարաբերություններում, հատկապես էներգետիկայի ոլորտում՝ հայ-իրանական գազատարի, երրորդ

⁸ Համաձայնագիր ՀՀ կառավարության և ԻԻՀ կառավարության միջև առևտրատնտեսական համագործակցության վերաբերյալ, ՀՀ ԱԳԵ, ցուցակ 1, գործ N 286:

⁹ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն: http://www.armstat.am/file/article/sv_12_12a_411.pdf

¹⁰ Тигран Саргсян принял новоназначенного посла Ирана в Армении//Tert.am(20 июля 2012) = <http://www.tert.am/ru/news/2012/07/20/iran-embassador/?sw>

¹¹ Մ. Մանուկյան, Հայ-իրանական հարաբերությունների ապագան, Միիր, 2 (46), 2004, էջ 45:

¹² Пути эффективной интеграции энергосистем стран Южного Кавказа, Баку, Ереван, Тбилиси, 2004, с. 43.

¹³ ՀՀ ԱԳԼ Դիվանագիտական բաժնի, Հայաստան-Իրան, Հարաբերությունների սկզբունքների և նպատակների մասին հռչակագիրը, Վենետիկ, 1993 թ., էջ 21:

բարձրավիճակ էլեկտրահաղորդման գծի, ինչպես նաև այլընտրանքային ճանապարհի կառուցման բնագավառում¹⁴:

2007 թ. մարտի 19-ին ի վերջո բացվեց հայ-իրանական գազատարի առաջին հատվածը, որն անցնում է Մեղրի-Քաջարան գծով: Բացման արարողությունը տեղի ունեցավ Ազարակ քաղաքում ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի և ԻԻՀ նախագահ Մահմուդ Ահմադինեթադի կողմից: ԻԻՀ նախագահը, բարձր գնահատելով Հայաստանի հետ ձեռք բերված համաձայնությունները էներգետիկայի, գազի, նավթի և ջրային ռեսուրսների ոլորտներում, նշեց. «Այդ ծրագրերի իրականացումը կամրապնդի երկու երկրների հարաբերությունները»¹⁵:

2007 թ. մարտի 19-ին ստորագրվեց Հայաստանի Հանրապետության կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության կառավարության միջև Արաքս գետի վրա հիդրոէլեկտրակայաններ կառուցելու և շահագործելու բնագավառում համագործակցության մասին համաձայնագիր, որը վավերացվեց երկու երկրների խորհրդարանների կողմից: Փաստորեն, այն լի-նելու է երկու հիդրոէլեկտրակայանից բաղկացած կասկադ, մեկը Հայաստանի կողմից՝ Մեղրիում, մյուսը՝ Ղարաջիլանում՝ Իրանի կողմից: Հէկերից յուրաքանչյուրի հզորությունը պետք է կազմի 140 ՄՎՏ: Յուրաքանչյուր կողմում կառուցվելու է ճնշումային թունելի հէկի աշխատանքների համար: Այդ թունելով ջուրը բերվում է հէկ, և արտադրվում է էլեկտրաէներգիա: Տարեկան արտադրանքը կկազմի շուրջ 841 միլիոն կՎտ/ժ էլեկտրաէներգիա, կու-նենա 90 մ ճնշում և 18,2 կմ երկարությամբ թունել: Սրա վերաբերյալ «Մեղրիի հէկի կառուցման թույլտվության պայմանագիրը» ստորագրվեց 2010 թ. հոկտեմբերի 15-ին ՀՀ էներգետիկայի նախարար Ա. Մովսիսյանի և ԻԻՀ էներգետիկայի նախարար Մ. Նամջուխի միջև¹⁶:

2007 թ. ապրիլի 5-ին ՀՀ կառավարությունը Կապի և տրանսպորտի նախարարությանը հատկացրեց 1,863 մլրդ դրամ՝ կառուցելու Իրան-Հայաստան այլընտրանքային ճանապարհ, որն անցնում է Մեղրի-Շվանիձոր-Վերիշեն-Օավ-Կապան գծով՝

¹⁴ Тегеран и Ереван высоко оценивают уровень ирано-армянского сотрудничества <http://www.irma.ir/ru/news/view/menu--291/0612181577142243.htm>, ИРНА. 18 декабря 2006 года.

¹⁵ Президент ИРИ: Иран не видит никаких преград на пути дальнейшего развития взаимоотношений с Арменией, http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=45638

¹⁶ Пути эффективной интеграции энергосистем стран Южного Кавказа, 41: Ստորագրված փաստաթղթեր, <http://www.mfa.am/hy/country-by-country/ir/>

փորձելով խուսափել Կապան-Քաջարան դժվարանցանելի Ա ինքի (տնանցք) ճանապարհից, որը հատկապես ձմռան սեզոնին զրեք միշտ փակ է լինում:

Հայաստան-Իրան էներգետիկ համագործակցության մեկ այլ ծրագիր է Հայաստանի տարածքում համատեղ նավթափրանշակման գործարանի կառուցումը¹⁷: Այն եռակողմ ձևաչափ ունի՝ Հայաստան-Ռուսաստան-Իրան: Սակայն այս պայմանագիրն առայժմ տարբեր պատճառներով ստեղծված է:

Ապագա ծրագրերի ցանկում կա նաև պատրաստի նավթամթերքների տեղափոխումը Հայաստան՝ Թավրիզ-Արարատ ձգվող 8 մատնաչափ տրամագծով խողովակաշարով, ինչը բավարարելու է Հայաստանի պահանջարկը: Քննարկումներն այս ուղղությամբ շարունակվում են¹⁸:

Այսօր Հայաստանում մեծ ոգևորությամբ են վերաբերվում Հայաստան-Իրան երկաթգծի կառուցմանը: Այդ ճանապարհը Հայաստանի համար այլընտրանքային ճանապարհ կարող է դառնալ: Երկաթգծի կառուցման համար անհրաժեշտ է 2 մլրդ դոլար, և այն կյանքի կկոչվի հինգ տարվա ընթացքում¹⁹: Ըստ տնտեսագետների՝ այդ ծրագիրը տնտեսական առումով նպատակահարմար չէ, սակայն եթե դրան տրվի քաղաքական մոտեցում, ապա երկու երկրները, անտեսելով տնտեսական աննպատակահարմարությունը, ձեռնամուխ կլինեն Հայաստան-Իրան երկաթգծի կառուցմանը:

Հայ-իրանական հարաբերությունների զարգացմանը միշտ էլ նպաստում են նախագահների մակարդակով այցերը, որոնց ընթացքում վերջնական լուծումներ են ստանում տարիների ընթացքում դիվանագետների կատարած աշխատանքները, կնքվում են պայմանագրեր, ձեռք են բերում մի շարք համաձայնություններ: «2009 թ. գարնանը ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի՝ Թեհրան այցի արդյունքում ձեռք բերվեցին և իրավական առումով ձևակերպվումներ ստացան խնդիրներ, որոնք կարևոր են, և, ես կասեի, ռազմավարական նշանակություն ունեն ինչպես Հայաստան-Իրան հարաբերությունների, նրանց հետագա ընթացքը զար-

¹⁷ Հայաստան-Իրան էներգետիկ համագործակցության մասին առավել մանրամասն տե՛ս՝ Գ. Իսկանդարյան, «Հայաստան-Իրան հարաբերությունները էներգետիկայի ոլորտում», Հայաստան-Իրան, 20 տարի համագործակցության ճանապարհով, միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2012, էջ 91-96:

¹⁸ Հարցազրույց ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների փոխնախարար Ա. Սիմոնյանի հետ, Երևան, 24.01.2012:

¹⁹ Строительство железной дороги Армения-Иран получило первый миллион долларов, <http://www.regnum.ru/news/1239466.html>

գացնելու, այնպես էլ տարածաշրջանային համագործակցությունը խթանելու առումներով: Դրանք են Իրան–Հայաստան ուղիղ երկաթուղային կապը, ինչպես նաև Իրան–Հայաստան նավթամուղ և նավթամթերքի պահեստարան ստեղծելու նախագծերը, Արաքս գետի վրա երկու հէկեր կառուցելու ծրագիրը, որոնց համար սահմանվել են առաջիկա անելիքները, իսկ վերջինիս շինարարությունն արդեն մեկնարկել է»,— նշում է ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Կարեն Նազարյանը (2005–2009 թթ)²⁰:

Հայտնի է, որ միջազգային հանրությունը խիստ քաղաքականություն է իրականացնում պաշտոնական Թեհրանի նկատմամբ՝ դիմելով պատժամիջոցների, որոնց բացասական ազդեցությունն արդեն անդրադառնում է Իրանի տնտեսության վրա. այն իր ազդեցությունն է թողնում նաև հայ–իրանական առևտրաշրջանառության վրա նույնպես: Այս ամենով հանդերձ՝ պաշտոնական Երևանը չի պատրաստվում նվազեցնել հարաբերությունների մակարդակը Թեհրանի հետ: Բացի այդ, ՄԱԿ–ի պատժամիջոցները չեն ազդում Հայաստան–Իրան հարաբերությունների հիմնական ոլորտների վրա՝ էներգետիկա, առևտուր և բեռնափոխադրում: Այսպիսով՝ վերոհիշյալ պատժամիջոցներն էական ազդեցություն չեն կարող թողնել Հայաստան–Իրան հարաբերությունների վրա, սակայն այն կարող է ազդել առևտրաշրջանառության մակարդակի վրա այն պարզ պատճառով, որ այսօր Իրանը ունի խնդիրներ, և որոշում է կայացվել մի շարք ստույն ապրանքներ երկրից դուրս չբերելու: Սակայն Հայաստանի համար արվում են որոշ բացառություններ:

Այս ամենով հանդերձ՝ կարծում ենք, որ հայ–իրանական հարաբերություններում տնտեսական ոլորտի հարաբերություններն իրականում նվազ չափով են հետաքրքրում իրանական կողմին, քանզի երեք միլիոնանոց շուկա ունեցող երկիրը, որի տարածքը հնարավոր չէ օգտագործել որպես տարանցիկ ուղի՝ դուրս գալու դեպի Ռուսաստան կամ արտաքին աշխարհ, քանի որ Վրաստանը հրաժարվում է մասնակցելուց Իրան–Հայաստան այլանսին, չի կարող իրապես հետաքրքրել 75 միլիոնանոց բնակչությամբ երկրին: Հայաստանը Իրանին կարող է հետաքրքրել տնտեսական ոլորտում միայն Իրանի հյուսիսային նահանգների հետ առևտրաշրջանառություն իրականացնելու ուղղությամբ: Այսպիսով՝ ակնհայտ է դառնում Հայաստան–Իրան տնտեսական

ոլորտների պայմանագրերի իրականացման դանդաղությունն իրական պատճառը: Հայ–իրանական տնտեսական հարաբերություններում իրականացրած յուրաքանչյուր ձեռքբերում ավելի շուտ քաղաքական կամքի դրսևորման հետևանք է, քան տնտեսական նպատակահարմարություն:

Հայաստան–Իրան գիտամշակութային կապը, հիրավի, կարող է լինել ամենից ակտիվ գաղափար ուղղությունը երկու երկրների միջև: Հայաստանի և Իրանի միջև գիտական և մշակութային հարաբերությունների հիմքը դրվել է 1992 թ. մայիսի 7–ին կողմերի միջև ստորագրված համաձայնագրով, որի շնորհիվ նրանց միջև այդ բնագավառներում հաստատվեցին փոխշահավետ հարաբերություններ:

Ներկայումս Հայաստանում ուսում են ստանում շուրջ երեք հազար իրանցի ուսանողներ, պարբերական բնույթ են կրում իրանցիների այցերը Հայաստան հատկապես Նովորոզ–Քայրամի տնակատարության օրերին²¹, որոնց թիվն այդ օրերին հասնում է 50 հազարի: Հայաստանի տասնյակ դպրոցներում դասավանդվում է պարսկերեն, Երևանի Կապույտ մզկիթում ևս անվճար դասավանդվում է պարսկերեն: Իրանի տարածքում գործում են վեց տասնյակի հասնող հայկական դպրոցներ: Իրանահայ գաղութի թեմական մարմինների վրա են ընկնում դպրոցների նյութական բազայի պահպանման ու ամրապնդման, դպրոցական շենքերի կառուցման հոգսերը: 1960 թ. Սպահանի համալսարանում գործում է հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը: Մայրաքաղաքում գործում են նաև «Րաֆֆի» և «Սանահին» մարզամշակութային միությունները: Առավել հայտնի է մարզամշակութային «Արարատ» կազմակերպությունը՝ նույնանուն մարզավանով հանդերձ:

Այսօր էլ Իրանում պետական մակարդակով շարունակվում է հոգածությունը ցուցաբերվել հայկական մարզամշակութային, ինչպես նաև հոգևոր արժեքների նկատմամբ:

Թեհրանում լույս են տեսնում «Ալիք» օրաթերթը, «Արաքս» ամսագիրը: Միայն այդ քաղաքում կա գործող հայկական 8 եկեղեցի: 2008 թ. իրանական կառավարության ջանքերի շնորհիվ հայկական Սուրբ Ստեփանոս և Սուրբ Թադևոս առաքյալների վանքերն ընդգրկվեցին ՅՈՒՆԵՍԿՕ–ի մշակութային արժեքների ցանկում:

Բացի այդ, ամեն տարի Իրանում և Հայաստանում տեղի են ու-

²⁰ Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան (2005–2009 թթ.) Կարեն Նազարյանի հետ, Երևան–Նյու Յորք, 08.01.3013:

²¹ Гоча Дарчия, Иран – Армения: «вечное партнерство» с сопутствующими проблемами // «Кавказский дневник» (20 апреля 2012) = <http://inosmi.ru/caucasus/20120420/190844089.html#ixzz2CbmZfKKG>

եննում արվեստագետների ցուցահանդեսներ, որոնց միջոցով երկու կողմերը ներկայացնում են իրենց հարուստ մշակույթը: Դրա օրինակն է 2006 թ. նոյեմբերին Երևանի Ժողովրդական արվեստի թանգարանում «Սպահանի արվեստը» ցուցահանդեսը՝ ի դեմս հանրահայտ նկարիչներ Սոհամմեդ Ալի Ֆարշիդայի և Սոհամմեդ Ալի Հեղայթի: Նրանք ներկայացնում էին Իրանը պատկերող ավելի քան 50 կտավ²²: 2012 թ. նոյեմբերին Եղեգնաձորի երկրագիտական թանգարանում ցուցադրվեցին հայ և իրանցի արվեստագետների կտավները և ձեռագործ աշխատանքները²³:

Համաձայն ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Գրիգոր Առաքելյանի՝ «...արդեն վեց տարի է, որ Հայաստանը Թեհրանում կազմակերպվող գրքի միջազգային ցուցահանդեսի մշտական և ակտիվ մասնակիցն է, կազմակերպվում են սեմինարներ, անցկացվում են մշակութային օրեր և այլն: Հայաստանից թատերախմբեր են իրավիրվում Իրան: Մենք աշխատում ենք քազմակողմանի ու ճիշտ ներկայացնել Իրանի քաղաքացիներին հայկական մշակույթը»²⁴:

Իրան-Հայաստան փոխհարաբերություններում ուրույն տեղն ունեն նաև միջմարզային շփումները: Էներգետիկ ոլորտում Իրանի և Հայաստանի որոշ նահանգներ ու մարզեր բավական ակտիվ կերպով համագործակցում են: Վերջին շրջանում նկատելիորեն ակտիվացել է միջմարզային համագործակցությունը: Մասնավորաբար այն աշխույժ է ընթանում ՀՀ Սյունիքի, Արարատի մարզերի և ԻԻՀ Ատրպատականի նահանգի միջև: Դրա լավագույն վկայությունն են 2001 թ. սկզբներին Մեղրիի սահմանամերձ շուկայի վերաբացումը, իրանական սարքավորումներով Ախիանում քարի մշակման արտադրության կազմակերպումը, Ատրպատականի նահանգում արտադրվող թելերի օգտագործմամբ Գորիսում տարբեր տեսակի կտորեղենի արտադրության հիմնումը, Արարատի մարզի գյուղատնտեսական մթերքների ու արտադրանքն Իրանի տարածքի այլ շրջաններ տեղափոխելու համաձայնության կայացումը:

Այսօր էլ Իրանի և Հայաստանի միջմարզային հարաբերությունները բավական ակտիվ են ընթանում: Այսպես՝ Իրանից

²² В Ереване открылась выставка работ иранских художников «Искусство Исфахана», http://www.iran.ru/rus/news_iran.php?act=news_by_id&news_id=44358

²³ В Армении открылась совместная выставка произведений армянских и иранских искусствоведов// panorama.am (15 ноября 2012) = <http://www.panorama.am/ruculture/2012/11/15/arm-iran/>

²⁴ Հարցազրույց ԻԻՀ-ում ՀՀ արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Գրիգոր Առաքելյանի հետ, ԻԻՀ, Թեհրան, նոյեմբերի 2, 2012 թ.:

Հայաստան ներմուծվող գազի դիմաց հայկական կողմը պետք է մատակարարի էլեկտրաէներգիա հատկապես Իրանի Ատրպատականի նահանգին:

Այսպիսով՝ ուսումնասիրելով հայ-իրանական հարաբերությունների ողջ դինամիկան՝ ակնհայտորեն հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

1. Հայ-իրանական հարաբերությունների զարգացման, ամրապնդման մեջ առկա է երկկողմ շահագրգռվածություն: Իրանը, Հայաստանի հետ խորացնելով շփումները, լուծում է միանգամից երկու հարց.

ա) Համաշխարհային հանրությանը ցուցադրվում է, որ Իրանի Իսլամական Հանրապետությունը հանդուրժողական մոտեցման կողմնակից է բոլոր ժողովուրդների և կրոնների նկատմամբ, դրանով անհիմն է դառնում Իրանին որպես *ծայրահեղ մահմեդական երկիր* պիտակավորումը:

բ) Համեմատաբար հզոր Հայաստանը Իրանին ձեռնտու է, որպեսզի վերջինս կարողանա դիմագրավել թուրք-ադրբեջանական մերձեցմանը Կովկասում և որպես այլընտրանք միշտ առաջարկի Իրանի ներգրավվածությունը տվյալ տարածաշրջանում:

2. Հիշատակության արժանի է, որ Իրանը մեծապես ցանկանում է համագործակցել Ռուսաստանի Դաշնության հետ, ինչը Հարավային Կովկասում ակնհայտորեն հնարավոր է միմիայն հայկական հողում:

3. Իրանին ձեռնտու է նաև Հայաստանի առկա լարվածությունը և Թուրքիայի, և Ադրբեջանի հետ, քանզի Հայաստանը արտաքին աշխարհի հետ շփումը, Վրաստանից գատ, իրականացնում է Իրանի տարածքով: Դրան հավելեք նաև, որ իրանական ճանապարհը կարող է Թուրքիայի և Ադրբեջանի համար լինել վրացականին այլընտրանքային:

4. Սակայն այս ամենով հանդերձ՝ նկատվում են հարաբերություններում հաճախ չհիմնավորված դանդաղակոտություն և ձգձգվածություն, որոնք էլ ունեն իրենց պատճառները.

ա) Հայ-իրանական հարաբերությունների զարգացման դեպքում Իրանը այնուամենայնիվ հաշվարկում է ինչպես Իրանի տարածքում ապրող ազերիների առկայությունը, որոնց թիվը տարբեր հաշվարկներով հասնում է մինչև 30 մլն-ի, և որոնք կարող են ազդեցություն ունենալ ներքաղաքական խնդիրների վրա, այնպես էլ դավանակից Ադրբեջանի մոտեցումները: Քանի որ վերջինիս կողմից առավել շատ նկատվում են մերձեցման միտումներ

Թուրքիայի և Իսրայելի հետ, Իրանին այլևս ոչինչ չի մնում, քան խորացնել համագործակցությունը Հայաստան–Ռուսաստան դաշինքի հետ:

բ) Հայաստանը, հարավում չունենալով Իրանից բացի այլ բաց սահման, ջերմեռանդորեն պահպանում է այդ հարաբերությունները՝ նպաստելով նրանց զարգացմանը: Սակայն Հայաստանն էլ, բնականաբար, հաշվարկում է միջազգային ասպարեզում Իրանի նկատմամբ իրականացված ճնշումները: Որքան էլ որ Երևանը փորձում է չեզոքություն պահպանել այս ոլորտում, այնուամենայնիվ, երբեմն–երբեմն բարձրացվում է Հայաստանի հարցը՝ որպես Իրանի հետ խիստ ջերմ հարաբերություններ ունեցող երկիր, ինչը շատ հաճախ չի խրախուսվում:

Այս ամենով հանդերձ՝ կարծում ենք, որ հայ–իրանական հարաբերությունները զարգացման մեծ ներուժ ունեն, քանզի ակնհայտորեն հետաքրքրված են միմյանցով, հարաբերությունները որակվում են որպես հատուկ, և առկա է քաղաքական կամք երկու երկրների ղեկավարների մոտ:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐԱՍԻԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

ՄՆԵԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Սամվելյան Կ. Խ., Հասարակական–քաղաքական իրադրությունը Իրաքում (1980–2010 թթ.), Ե., «Գիտություն» հրատ., 2012:
- Փաշայան Ա. Ա., Հարությունյան Լ. Մ., Սիրիայի հայ համայնքը, արդի հիմնախնդիրներ, Երևան, «Լուսակն» հրատ., 2012:

ՀՈՂՎԱԾՆԵՐ

- Բայբուրյան Վ. Ա., Հայ–իրանական հարաբերությունները 1991–1998 թթ. հայացք երկու տասնամյակ հեռավորությունից / Հայաստան–Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով: Միջազգային գիտաժողովի նյութեր (13 մարտի, 2012 թ.), 2012:
- Գևորգյան Գ. Գ., Կառավարվող ժողովրդավարական մոդելի գործարկումը Եգիպտոսում (2008–2011 թթ.) / Ժամանակակից Եվրասիա. Արաբական աշխարհ, հատոր I (2), 2012, էջ 67–87:
- Գևորգյան Գ. Գ., Եգիպտոսը և Պաղեստինյան խնդիրը (2008–2011 թթ.) / Ժամանակակից Եվրասիա. Արաբական աշխարհ, հատոր I (2), 2012, էջ 114–139:
- Իսկանդարյան Գ. Մ., ԻԻՀ 2008–2010 թթ. Արտաքին և ներքին քաղաքական հիմնական խնդիրները / Ժամանակակից Եվրասիա. Թուրքիա, Իրան, N I(1), Եր., 2012, էջ 57–111:
- Իսկանդարյան Գ. Մ., Իրանի դիրքորոշումը Թուրքիայում տեղակայված ՌՏԿ–ի հարցում / Ժամանակակից Եվրասիա. Թուրքիա, Իրան, N I (1), Եր., 2012, էջ 129–133:
- Իսկանդարյան Գ. Մ., Հայաստան–Իրան հարաբերությունները էներգետիկայի ոլորտում / Հայաստան–Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով: Միջազգային գիտաժողովի նյութեր (13 մարտի, 2012 թ.), 2012, էջ 91–96:

- Հարությունյան Ա. Ա., Չին-սիրիական համագործակցության նոր դրսևորումներ/ Ժամանակակից Եվրասիա. Արարական աշխարհ, հատոր I (2), 2012, էջ 140-155:
- Հարությունյան Ա. Ա., Չինաստան-Լիբիա հարաբերությունների շուրջ / Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ, N VIII, եր., 2012, էջ 224-237:
- Հարությունյան Ե. Վ., Ճապոնիայի մերձավորարևելյան նոր քաղաքականության ձևավորումը հետաառըպատերազմյան շրջանում (1991-2001 թթ.) / Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ, N VIII, եր., 2012, էջ 238-248:
- Հարությունյան Լ. Մ., Լիբանանը քաղաքական ճգնաժամերի և հարաբերական կայունության միջև (2008-2011) / Ժամանակակից Եվրասիա. Արարական աշխարհ, հատոր I (2), 2012, էջ 9-66:
- Հովհաննիսյան Ա. Ռ., «Հայկական գործոնի» շահարկումը Թուրքիայի 2011 թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում / Ժամանակակից Եվրասիա. Թուրքիա, Իրան, N I(1), եր., 2012, էջ 40-54:
- Հովհաննիսյան Ա. Ռ., Թուրքիայի հանրության վերաբերմունքը Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրին / ՎԷՄ համահայկական հանդես, 2(38) ապրիլ-հունիս, Երևան, 2012:
- Հովհաննիսյան Ն. Հ., Այաթոլլահ Խոմենիի մոտեցումը խորհրդային Միության հետ հարաբերությունները կարգավորելու հարցում և դիրքորոշումը Հայաստանի և հայության հանդեպ/ Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով: Միջազգային գիտաժողովի նյութեր (13 մարտի, 2012 թ.), 2012, էջ 55-77:
- Հովհաննիսյան Ն. Հ., Ղարաբաղյան հիմնախնդիրը իտալական միջազգայնագետ-քաղաքագետների գնահատմամբ, Նոր Մոտեցումներ ԼՂՀ հիմնահարցին/ Գիտաժողովի նյութեր: Երևանի Վ. Բյուրուտի անվան պետական լեզվաբանական համալսարան, Լիևզվա, Երևան, 2012, էջ 53-59:
- Հովհաննիսյան Ն. Հ., Լեռնային Ղարաբաղի պետականության եվրոպիան և տրամաբանական հանգրվանը, «Աշխատանքային տետրեր», «Այլևս ոչ մի եղեն» որպես ՀՀ և ԼՂՀ անվտանգային քաղաքականության առանցքային Հիմնադրույթ/ «Հայկական Բանակ» ռազմագիտական հանդեսի հավելված 1-2(21-22), Երևան, 2012, էջ 131-144:
- Հովհաննիսյան Ն. Հ., Հայաստան-Սիրիոյը ինտեգրման ռազմավարական ուղենիշները. հայեցակարգային մոտեցումներ, «Աշխատանքային տետրեր», «Հայաստանը իրավունք չունի պարտվելու և ոչ մի պատերազմում»-ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան Ազգային Բազմա-

- վարական Հետազոտությունների Ինստիտուտի ռազմագիտական հանդես, Երևան, 1-2 (71-72), 2012, էջ 249-262:
- Հովսեփյան Լ. Ս., Թուրքիայում ՆԱՏՕ-ի միասնական ՀՀՊ համակարգի ռադիոտեղորոշիչ կայանի տեղակայման ռազմաքաղաքական նշանակությունը / Ժամանակակից Եվրասիա. Թուրքիա, Իրան, N I(1), եր., 2012, էջ 121-128:
 - Սաֆրաստյան Ռ. Ա., Թուրքիայում աշխարհաքաղաքական մտքի ծագումնաբանության հարցի շուրջ. Սուաթ Իլիանի «վտանգի տեսությունը» / «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի «Աշխատանքային տետրեր» հավելված, ՊՆ, 2012, թիվ 3:
 - Տեր-Մաթևոսյան Վ. Հ., Թուրքիան 2008-2011 թթ.: Քաղաքական փոխակերպումների հիմնական առանձնահատկությունները / Ժամանակակից Եվրասիա. Թուրքիա, Իրան, N I (1), եր., 2012, էջ 11-39:
 - Փաշայան Ա. Ա., «Արարական գարունը» Սիրիայում. պայքար իշխանության համար/ Ժամանակակից Եվրասիա. Արարական աշխարհ, հատոր I (2), 2012, էջ 88 - 113:
 - Маилян Б. В., Российско-грузинские отношения и вопрос членства Грузии в СНГ / Историко-культурные основы социально-политической модернизации. Сборник научных статей. Ереван, Издательство РАУ, 2012, с. 73-88.
 - Оганнесян Н. О., Административно-территориальная и политическая композиция Южного Кавказа и посылы его безопасности/ Материалы международной конференции «Динамика Региональной Безопасности на Южном Кавказе», Академический-Исследовательский фонд Политических наук, Ереван, 2012, с. 36-44.
 - Hovhannisyan N. H., Introduction to the monograph «The Place and Role of Syria in the Arab-Israeli Conflict.1946-2000» (266p.) by Rouben Karapetyan, Rome, 2012, p. 4-8.
 - Ter-Matevosyan V. H., Territorial Reintegration as a National Security Objective: The Cases of Azerbaijan and Georgia”/ Journal of Southeast European and Black Sea Studies, v. 12, 2012.
 - Ter-Matevosyan V. H., Reviewing Armenia’s National Security Strategy: Challenges and Reality in Materials of the International Conference “Regional Security Dynamics In The Caucasus”, Limush Publication, 2012, pp. 95-104.
 - Ter-Matevosyan V. H., Republican Origins of Kemalism: The Early Phase of Evolution”/ International Review of Turkish Studies, 2011, v.1/ 4, pp. 44-61.

ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

- Ժամանակակից Եվրասիա. Թուրքիա, Իրան, հատոր I (1), Եր., «Զանգակ» հրատ., 2012:
- Ժամանակակից Եվրասիա, Արաբական աշխարհ, հատոր I (2), Եր., «Զանգակ» հրատ., 2012:
- Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ (Ժողովածու), N VIII, Եր., «Զանգակ» հրատ., 2012:
- Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով: Միջազգային գիտաժողովի նյութեր (13 մարտի, 2012 թ.): Եր., «Զանգակ-97», 2012:

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ

Գոռ Գևորգյան, պ. գ. թ., դոցենտ

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների բաժնի գիտաշխատող է: Զբաղվում է Եգիպտոսի ներքին և արտաքին քաղաքական հիմնախնդիրներով, արաբ-խրայելական հսկամարտության, ինչպես նաև միջարաբական հարաբերությունների հիմնախնդիրների ուսումնասիրությամբ:

Տաթևիկ Մանուկյան

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի գիտաշխատող է: Մասնագիտանում է Մերձավոր Արևելքում քրդական հիմնախնդրով, զբաղվում է Թուրքիայի նորագույն պատմության խնդիրների ուսումնասիրությամբ:

Վահրամ Տեր-Մաթևոսյան, պ. գ. թ.

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Մերձավոր Արևելքի տարածաշրջանային միջազգային հարաբերությունների ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող է, զբաղվում է քաղաքական իսլամի ու քեմալիզմի պատմության հարցերով, ինչպես նաև Թուրքիայի արտաքին քաղաքականության ուսումնասիրությամբ:

Լևոն Հովսեփյան, պ. գ. թ.

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի գիտաշխատող է: Ուսումնասիրությունների ոլորտներն ընդգրկում են Թուրքիայի պաշտպանության ու անվտանգության, ինչպես նաև արտաքին քաղաքական խնդիրները:

Աղավնի Հարությունյան, պ. գ. թ.

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Արևելյան Ասիայի երկրների բաժնի ավագ գիտաշխատող է: Ուսումնասիրում է Մերձավոր Արևելքի և ասիական-խաղաղօվկիանոսյան երկրներում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության քաղաքականության հիմնահարցերը: Զբաղվում է ՉԺՀ-ի նոր և նորագույն պատմության ուսումնասիրությամբ:

Գոհար Իսկանդարյան, պ. գ. թ., դոցենտ

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Մերձավոր Արևելքի տարածաշրջանային միջազգային հարաբերությունների ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող է: Հետազոտությունների ոլորտներն ընդգրկում են Իրանի Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքականության և ներաղաքական հիմնախնդիրները:

AUTHORS

Gor Gevorgyan (PhD, Assoc., Prof.)

is a Senior Research Fellow of the Department of Arab Countries at the Institute of Oriental Studies, NAS RA. Main fields of his research include domestic and foreign political issues of Egypt, Arab-Israeli conflict and relations between the Arab countries.

Tatevik Manukyan

is a Research Fellow of the Department of Turkey at the Institute of Oriental Studies, NAS RA. Her research interests include the Kurdish issue in Near East, as well as problems of Turkish contemporary history.

Vahram Ter-Matevosyan (PhD)

is a Senior Research Fellow of the Department for Investigation of Regional International Relations of the Middle East at the Institute of Oriental Studies, NAS RA. Main fields of his research include the problems of Political Islam, Kemalism and Turkish foreign policy.

Levon Hovsepian (PhD)

is a Senior Research Fellow of the Department of Turkey at the Institute of Oriental Studies, NAS RA. Main fields of his research include the problems of defense and security sector, foreign policy of Turkey.

Aghavni Harutyunyan (PhD)

is a Senior Researcher Fellow at the Department of Eastern Asian Studies at the Institute of Oriental Studies, NAS RA. Main topics of her research are China's foreign policy in the countries of the Middle East and Asia-Pacific, as well as the Modern History of China.

Gohar Iskandaryan (PhD, Assoc., Prof.)

is a Senior Research Fellow of the Department for Investigation of Regional International Relations of the Middle East at the Institute of Oriental Studies NAS RA. Main fields of her research include the problems of domestic politics and foreign relations of the Islamic Republic of Iran.

АВТОРЫ

Гор Геворгян, к. и. н., доцент

Научный сотрудник отдела Арабских стран Института востоковедения НАН РА. Занимается внутренними и внешнеполитическими проблемами Египта, а также вопросами арабо-израильского конфликта и межарабскими отношениями в контексте международных политических процессов.

Манукян Татевик

Научный сотрудник отдела Турции Института востоковедения НАН РА. Специализируется в области курдской проблематики Ближнего Востока, а также внутриполитическими проблемами современной Турции.

Ваграм Тер-Матевосян, к. и. н.

Старший научный сотрудник отдела Исследований региональных международных отношений Ближнего Востока Института востоковедения НАН РА. Занимается изучением проблем политического ислама, истории кемализма, а также внешней политики Турции.

Левон Овсепян, к. и. н.

Научный сотрудник отдела Турции Института востоковедения НАН РА. Область исследований включает вопросы обороны и безопасности, а также внешнеполитические проблемы Турции.

Агавни Арутюнян, к. и. н.

Научный сотрудник отдела Стран Восточной Азии Института востоковедения НАН РА. Изучает вопросы политики КНР в ближневосточном и азиатско-тихоокеанском регионах, занимается изучением новой и современной истории КНР.

Гоар Искандарян, к. и. н., доцент

Старший научный сотрудник отдела Исследований региональных международных отношений Ближнего Востока Института востоковедения НАН РА. Сфера исследований – внутренние и внешнеполитические проблемы Исламской Республики Иран.

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐԱՍԻԱ. ԹՈՒՐԻՔԻԱ, ԻՐԱՆ, 2012, I (1)

ՎԱՀՐԱՄ ՏԵՐ-ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Թուրքիան 2008–2011 թթ.: Քաղաքական փոխակերպումների հիմնական առանձնահատկությունները

ԱՆՈՒՇ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Հայկական գործոնի» շահարկումը Թուրքիայի 2011 թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում

ԳՈՀԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

ԻԻՀ 2008–2010 թթ. արտաքին և ներքին քաղաքական հիմնական խնդիրները
ԻԻՀ–ն 2008–2010 թթ.: Տարեգրություն

ԱՐՏՐՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԻԻՀ ռազմական ներուժը հավանական պատերազմի դեպքում

ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Թուրքիայում ՆԱՏՕ–ի միասնական ՀՀԴ համակարգի ռադիոտեղորոշիչ կայանի տեղակայման ռազմաքաղաքական նշանակությունը

ԳՈՀԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

Իրանի դիրքորոշումը Թուրքիայում տեղակայված ՌՏԿ–ի հարցում

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐԱՍԻԱ. ԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ, 2012, I (2)

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Լիբանանը քաղաքական ճգնաժամների և հարաբերական կայունության միջև (2008–2011 թթ.)
Լիբանանը 2008–2011 թվականներին. հիմնական իրադարձությունների ժամանակագրություն

ԳՈՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կառավարվող ժողովրդավարական մոդելի գործարկումը Եգիպտոսում (2008–2011 թթ.)
Եգիպտոսը և պաղեստինյան խնդիրը (2008–2011 թթ.)

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ

«Արաբական գարունը» Սիրիայում. պայքար իշխանության համար

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Չին–Սիրիական համագործակցության նոր դրսևորումներ

CONTEMPORARY EURASIA: TURKEY, IRAN, 2012, I (1)

VAHRAM TER-MATEVOSYAN

Turkey between 2008 and 2011: Principal Features of Political Transformations

ANUSH HOVHANNISYAN

The Use of the «Armenian Policy» during the 2011 Parliament Elections in Turkey

GOHAR ISKANDARYAN

Foreign and Domestic Issues of IRI between 2008–2010
IRI 2008–2010: Chronology

ARTSRUN HOVHANNISYAN

IRI Defense Capability in Possible War

LEVON HOVSEPYAN

Military–Political Significance of the Deployment of NATO's Missile Defence Radar System in Turkey

GOHAR ISKANDARYAN

Position of Iran Regarding the Deployment of Ballistic Missile Radar System in Turkey

CONTEMPORARY EURASIA: ARAB WORLD, 2012, I (2)

LILIT HARUTYUNYAN

Lebanon between political crises and relative stability (2008–2011)
Lebanon from 2008 to 2011: chronology of main developments

GOR GEVORGYAN

Implementation of managed democratic model in Egypt (2008–2011)
Egypt and Palestinian problem (2008–2011)

ARAKS PASHAYAN

The “Arab spring” in Syria: a struggle for power

AGHAYNI HARUTYUNYAN

New manifestations in the sino–syrian cooperation

ԺԱՍԱՆԱԿԱԿԻՑ ԵԿՐԱՍԻԱ

ՍԵՐՉԱՎՈՐ ԱՐԵՎԵԼԸ,
ՔԱԳԱՔԱԿԱՆ ՓՈՒՆԱԿԵՐԴՈՒՄՆԵՐ

ՀԱՏՈՐ II (1)

Իսմբազիր՝ Ռուբեն Սաֆրաստյան

Տպագրությունը՝ օֆսեր: Չափսը՝ 60x100 1/16:
Թուղթը՝ օֆսեր: Ծավալը՝ 8 տպ. մամուլ:

•

0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Հեռապատճեն՝ (+37410) 23 25 95, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am, www.dasagirq.am